

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 2  
FEVRIER  
1930  
PARIS (France)

«ՀՈՅ ՅԵՂՈՓՈՒՈՎԱՆ ԴԱՆՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

## ՓԵՏՐՈՒԱՐ 18

Հայ ժողովուրդը շատ է ունեցիր բմբուսացման, տարերային պոռթկումի պահեր, բոլորովին ինքնաբերաբար, կամ առաջնորդութեամբ համապատասխան հոսանքի մը: Ունեցեր է փոթորիկներ, որոնք դարաշրջան պիտի կազմէին ուրիշ ազգերու պատմութեան մէջ, բայց սրտի կատարեայ թեթեւութեամբ կը ծաղրէին կամ կանարգէին մեր մէջ:

Այդ կարգէն է 1921 փետրուար 18 ը, այնքան ճակատագրական շրջանի մը մէջ:

Արդարեւ, պէտք է խելագարած ըլլար մեր ժողովուրդը, դիմելու համար այդպիսի քայլի մը, կարսի պարտութենէն անմիջապէս յետոյ: — Երկիրը յռչուած, ազատ եւ ամուր հայրենիք մը կազմելու բոլոր յոյսերը ջախջախած, վերջապէս լքած՝ լերան մը ստորորաբ, ի՞նչ պէս կարելի էր մտածել այնպիսի «արկածախնդրութեան» մը մասին, որպիսին հանդիսացաւ փետրուար 18 ը:

Եւ, սակայն, տեղի ունեցաւ դէպքը, ոչ միայն ինքնաբերաբար, այլ եւ մասնակցութեամբ բոլոր հոսանքներուն: (Ի զուր կը ըզբ մեղանան այսօր): Պայթեցաւ փոթորիկը արտակարգ աստիճանութեամբ, արժագանգ տալով մինչեւ Մոսկու:

Դիւրին է, ամէն տարի, հեղնական անական մը կցել այս դէպքին, զայն դատելով Ամերիկայի կամ Փարիզի երկնամեծ կատարներէն: Բայց դժաւոր է ժխտել անոր ուժգնութիւնն ու խորութիւնը: Եւ աւելի քան դժաւոր՝ վէճի ենթարկել անոր բուն շարժառիթները:

Ինը տարի է անցեր արդէն: Դաշնակցութեան ամենէն թթու հակառակորդը, կամ Հայաստանի անցուցարձեւուն ամենէն անտեղեակ մարդը լայն պատեհութիւն ունեցաւ զորքերու, վերանայնաւորելու իրողութիւնները, նոյնիսկ խորհրդային աղբիւրներու միջոցաւ: Իրենք, իշխանութեան ժառանգորդները, ան-

ընդհատ կը բանեցնեն սպառնական մեքենան, միշտ նոր բաներ պատմելով յուշեր կամ պաղտիքներ պարգեւով, եւ մինչեւ այսօր չկրցան սպացուցանել թէ՛ բոլորովին անտեղի, քմածին, շինձու շարժում մըն էր եղածը:

Ընդհակառակն, իրենց իսկ հրատարակութիւնները ցոյց կուտան թէ՛ գործերը այնպէս դասաւորած էին որ, աւելի շուտ կը սպասէր ժողովրդական պոռթկումի մը:

Դեռ աւելին — նորեկները յատկապէս ասիթներ կը հնարէին շարասանջ ժողովուրդ մը զրգռելու: Անոր համբերութիւնն սպառելու եւ իրենց կասկածելի ախորժակներուն կեր հայթայթելու համար: Հազիւ լրացած իշխանութեան փոխանցման գործողութիւնը, մոռացութեան տրեցան բոլոր յանձնառութիւններն ու ստորագրութիւնները: Համաշխարհային յեղափոխութեան քարոզիչներն ու գործակալները երևան եկան իբրեւ խորախորհուրդ պոլիտիկոսներ՝ նոյնիսկ ջախջախած եւ անճար ժողովուրդի մը հանդէպ: Եւ իբրբու ետեւէ հոսիլ սկսան «ազատարար» իշխանութեան շնորհները, — բռնագրաւում եւ դէպի Բագու փոխադրութիւն ալիւրի, կաթի եւ շաքարի: Խուզարկութիւն՝ տունէ տուն, աւարի տալու համար առանին կարասիներ եւ արդուզարդեր: Բարբարոս եւ զրգռիչ հալածանք՝ ամէն ճակատի վրա, եւ հետզհետէ առանց աջձախ նայելու, առանց խտրութեան հրէի եւ հեթանոսի:

Ու, վերջապէս, Թագ ու պսակը այս բորբիւն, — ձերբակալութիւն եւ աքսոր 1800 սպաներու, իթթիհատական բարբարոսութեամբ: Արդէն 2500 կալանաւոր՝ Հայաստանի բանտերուն մէջ: Իսկ շատ չանցած՝ կացինի եւ հրացանի դիւային խրատխանքներ երեսանի բանտին մէջ, իբրեւ նախապարաստական աշխատանք Դաշնակցութիւնը դիւատելու ինչպէս ազդարարած էին:

Կը թւի թէ նորեկները մոռցեր էին, որ միս-սուկորէ կազմուած էին իրենց կարմիր քամ-հաճոյքին յանձնուած բազմութիւնները, ոչ թէ քարի կոյտերէ :

Որքան ալ չլմած՝ տառապանքէն եւ ա՛ն ու սարսափէն, հայ ժողովուրդը դեռ բաւական գիտակցութիւն եւ ոյժ ունէր, դիմադրելու, հակադրելու համար սարքուած քստմանի ողբերգութեան: Մանաւանդ որ, հազիւ հասած ազատութեան ասիւր, հազիւ ոտքի կանգնած, ա՛նա կը դատապարտէր նորէն խոնարհելու եւ անխնայ սորուելու: Այս անգամ՝ հարազատներու մեղսակցութեամբ: Անոնց գլուխով ու ձեռքով...

Ինչ որ տեղի ունեցաւ այնուհետեւ, իրբեւ ուղղակի, անխուսափելի հետեւանք սանձա-կտոր վիպրենութեանց, այնքան բնական ու արդար էր, որ այլասերածներուն միայն զարմանք կրնար պատճառել: Կամ ծթուած միտքերու:

Ինքնապաշտպանութեան բնագոյն էր, որ կարթննար: Կորուած կամ կորուելու դատապարտուած աւանդ մը ետ առնելու կամքը:

Եւ այդ բնագոյն այնքան առողջ էր ու հարազատ, որ առաջին անգամ պոռթկաց զիւզէն: Դաւառն ու սարէն, ոչ թէ քաղաքէն:

Այս վերջինը, քաղաքը, աւելի շուտ զլեց-ցաւ հոսանքէն, յետոյ կարգի եւ ուղղութեան տակ առնելու համար զայն: Նոյն ինքն բանաստեղծ Յովհ. Թումանեանը, որ իրբեւ հաւատարիմ ուղեկից նոր իշխանութեան, Երեւան զրկուած էր միջնորդելու եւ կռիւր դադրեցնելու համար, կը շեշտէր Կովկասի կարմիր փոխար-քային, Օրջնիկի ձէլին ուղղած հեռագրին մէջ.

— « Ծանօթանալով գարծեբի վիճակին, բոլորովին համոզեցի, որ մեզ մօտ՝ Թիֆլիսում կազմուած համադումը Հայաստանի դէպ-քեբի մասին՝ չի համապատասխանում իրա-կանութեան: Ծարժումը սկսեւ է գիւղացիու-թեան մէջ, զանազան շրջաններում, տարածել է մինչեւ Երեւան եւ իր յետեւից քաշել է մտա-ւորականութիւնը»: (1921 Մարտ 24):

Ինքնապաշտպանութեան բնագոյն հետ, ազատութեան սրբազան գաղափարն էր, որ կը փոթորկէր հայ գիւղացին:

Ինչպէս ամբողջ բոլշեւիկեան պայքարը, նորեկ իշխանութեան հետապնդած իւրազար,

արիւնուշտ եւ աւազակարարոյ քաղաքականու-թիւնն ալ, թէ եւ երեւութապէս ուղղուած՝ քաղ-քենի-դրամատիրական կարգերու դէմ, իրա-կանին մէջ իր բովանդակ ծանրութեամբ կիջ-նէր բուն աշխատաւոր բազմութիւններուն, բանւորին եւ շինականին գլխուն: Ինչպէս այս օր իսկ, աւելի քան տասը տարի յետոյ:

Ի՞նչ ունէր, վերջապէս, թշատ երեւանը, իր ինքն-տասը գաւառներով, «հարթելու» եւ նոր կարգերուն յարմարելու համար: Լենինը ինք, Հայաստանը կը հռչակէր «գիււտնոե-սական երկիր» եւ խորհուրդ կուտար իր հաւա-տարիմներուն՝ չկրկնել այն ինչ որ փորձեցին Ռուսաստանի մէջ:

Եւ հայ գիւղացին ըմբոստացաւ, իր հայ-րենիքին մէջ, իր տան մէջ, իր մէջքին վրա զգալով բովանդակ արհաւիրքը նոր լուծին:

Ըմբոստացաւ, — փրկելու համար իր եւ իրեններուն կեանքն ու պատիւը: Եւ մարդկա-յին տարրական իրաւունքներ:

Ակամայ զէնք շարժեց, պաշտպանելու հա-մար արիւնով շահած աւանդներ:

Ասպարէզ նետուեցաւ ճարահատ, շերա-հաստատելու համար նորագատ հայրենիքին ազատութիւնն ու վեհապետութիւնը:

Մէկ խօսքով, շարժեցաւ այնպէս, ինչպէս կը թեյադրէր իր խիղճը եւ հայրենիքին շահը, համաձայն օրւան պահանջներուն: Եւ առանց խարխափելու դիւանապետական բարդութեանց ու նրբութեանց մէջ:

Ա՛նա թէ ի՞նչ է փետրւար 18 ը, հայկական ազատագրութեան ամեհի, անհնարին դիւցազ-նամարտին այդ եղերական բայց լուսաւոր հան-գրւանը: Եղերական՝ անոր համար որ, մեր դարաւոր տառապանքի վախճանին, եղբայր եղբօր արիւն թափելու հարկադրեցաւ, յա-նուն հայրենիքի եւ ազատութեան: Ապրելու իրաւունքին համար: Եւ լուսաւոր, այո՛, որովհետեւ, փետրւար 18 էն յետոյ էր որ, մարդիկ իրապէս ըմբռնեցին ազատութեան եւ սեփական հայրենիքի արժէքը: Ինչ որ վերա-ցական գաղափար էր կամ բաղձանք, այնու-հետեւ դարձաւ թանճարացեալ պատկեր եւ ան-հրժեշտութիւն:

Իսկ այդ արդէն պարտութիւնն է Հայաս-տանի մարդկաններուն, արհեստական յալթա-նակի այդ եղկելի ասպետներուն:

# Մտածումներ Հ. Յ. Դաւեանկցութեան մասին

Մենք տեսանք թէ ո՞վ է «դաւնակցականը»։ Բայց ո՞րն է Դաւնակցութիւնը։ ոչ թէ կուսակցութիւնը, այլ Դաւնակցութիւնն իր կուսութեան մէջ։ Բոլոր հին ու նոր ընկերները, բոլոր հին ու նոր մարմիններն իրենց գործերով միասին կազմում են մեր կուսակցութիւնը։ Եւ նրանք, որ նահատակած ու մեռած են Վարդայ, և՛ նրանք, որ բանու ու աքսորի մէջ են այսօր կամ ազատ դրժնում են աշխարհի հեռուոր կողմերում։ և՛, այն պարծերը, որ ծրարում են։ և՛ այն ձեռնարկները, որ ան, և՛ այն կուսակցական կեանքը, որ ետում է աճեալուր — այս ամենը մեր կուսակցութիւնն են կազմում։ Այստեղ մտնում են թէ՛ մեր Ծրագիրը, թէ՛ մեր Կանոնադիրը, թէ՛ մեր որոշումները։ Բայց ո՞րն է սրանցից Դաւնակցութիւնը։ արդեօք այս կամ այն Կենտրոնական կոմիտէն կամ Երջանային Ժողովը։ Այս մարմիններն ու Ժողովները՝ դաւնակցական գործ են կատարում բայց դառնալու կամ միասին առած Դաւնակցութիւն չեն, թէ՛ կուսակցութիւնն են։ Դաւնակցութիւնը կուսակցութեան ընդհանուր ժողովն է։ Նրա վճիռներն են միայն, որ ճանաչում են «դաւնակցական»։ Որեւէ Երջանային Ժողով կարող է ճարտարաւոր որոշումներ կայացնել, բայց այդ որոշումները «դաւնակցական» կը ճանաչին այն չափով, որքան չեն հակասում Ընդհանուր Ժողովի որոշումներին։ Այս կամ այն ստակական «դաւնակցականը» կամ մարմինը կարող են բազմատեսակ գործեր յղանալ և կատարել, բայց նրանք չեն ճամարի «դաւնակցական» գործ ու յղացում եթէ դէմ են Ընդհանուր Ժողովների ոգուն և թողած աւանդութեան։ Հ. Յ. Դաւնակցութեան Բիւրօն, որ հաւատարիմ աւանդապահն է կուսակցութեան և Ընդհանուր Ժողովի որոշանք իրազօրծողը, կարող է չեղնալ նկատել մի շրջանի որոշում և անգործ մի կուսակցական մարմին, եթէ նրանք դէմ են Ընդհանուր Ժողովների վճիռներին և նրանց աւանդութեան։ Ընդհանուր Ժողովի մշակած Կանոնադիրն է, որ պարտադիր է բովանդակ Դաւնակցութեան համար։ Որեւէ Երջան չի կարող մի մասնաւոր Կանոնադիր մշակել և պարտադիր հռչակել իր իսկ շրջանի համար եթէ նրա հիմունքները հակասում են ընդհանուր Կանոնադիրին, որ Ընդհանուր Ժողովի գործն են կրում։ Բոլոր ընկերները և մարմինները պատասխանատու են գերադաս մարմիններին և Ժողովներին, միմիայն Ընդհանուր Ժողովն է, որ պատասխանատու չէ ոչ ոքի առջև։ Նրա դատաւորը՝ այն պատմութիւնն է, մինչդեռ մարմինների և ընկերների գերադաս դատաւորը Ընդհանուր Ժողովն է։ Նա կարող է պատուհասուի և վարձատրել, բայց ինքը՝ կուսակց չէ պատուհասուի և վարձատրութեան։ Ամէն մի «դաւնակցական» մարմին ու անգործ պարտաւոր են

իրենց ընթացքը չտիկ այն ուղղութեամբ, որ մտածանշում է Ընդհանուր Ժողովը, միայն ինքն է, որ իր ընթացքը որոշում է ազատ և անկախ։ Նա յենում է իր անդամների իմացական կարողութեան և փորձատեսութեան, լուծում է բոլոր շրջաններ և մարմինների կարծիքն ու արժանաւորութիւնը, նկատի ունի ամենքի պահանջն ու դիտողութիւնը, բայց կենթակայ չէ նրանց։ Այս ամենը, որ գալիս են կուսակցութեան շրջաններից ու շարքերից՝ խորհրդակցութեան, դիտողութեան և կշռադատութեան նիւթ են միայն, բնաւ պարտադրանք։ Ոչ մէկ անհատ, մարմին կամ շրջան կարող են Ընդհանուր Ժողովին հրամայական լիազօրագիր ուղարկել և ոչ մէկը նրանցից իրաւասու է իրան Դաւնակցութիւնից դուրս հռչակել, եթէ իր կարծիքը չանցնի Ընդհանուր Ժողովի մէջ։ Ընդհանուր Ժողովն չէ՞մք կսկսելով՝ ամէն ոք յանձնառու է նրա որոշումները պարտադիր նկատել իր շրջանի համար, որովհետեւ Ընդհանուր Ժողովը բուն իսկ Դաւնակցութիւնն է, նրա միաքն ու կամքը։ Նա Դաւնակցութիւնն է իր ներկայ կազմով և անցեալ պատմութեամբ. այնտեղ չնշում են ոչ միայն դաւնակցական զանգամաժի ոգին, մարմինների և Ժողովների մտածումն ու արժանաւորութիւնները, այլ և այն հազարաւոր հերոսների և նահատակների յիշատակը, որ իրենց գործով ստեղծած են Դաւնակցութիւնը և իրենց արիւնքով ամբարկնած են նրա հիմունքները։ Ընդհանուր Ժողովն իր վճիռներն արձակում է ոչ միայն իր իմացութեան ու փորձին կրթնած, այլ և նրանց յիշատակին և աւանդութեան։

Մինչև Ընդհանուր Ժողովի դուրս լինելով խտտօրէն կարգապահ և կաշկանդած կուսակցականներ, պատուաւոր ընկերները ներս մտնելով՝ դառնում են լիովին ազատ և անկաշկանդ։ Այստեղ ոչ ոք և ոչինչ կարող է արգելք դառնալ պատգամաւորի մտքի և խղճի ազատութեան։ Այստեղ դադարում է ամէն իշխանութիւն և հեղինակութիւն և Ընդհանուր Ժողովն ինքն է դառնում միակ իշխանութիւն և հեղինակութիւնը։ Այստեղ իստում, դատում ու վճիռ է արձակում ոչ թէ այս ու այն պատգամաւորը, այլ նոյն ինքը քառասնամեայ Դաւնակցութիւնը։ Ինչ որ նա վճռէ՝ վերջնական է և անաւարկելի, ինչ որ կանոնադրէ՝ պարտադիր է ամենքի համար. ինչ որ մտած է բանաձևէ՝ այն է «դաւնակցական» միտքն ու կամքը։ Կուսակցութեան ներքին բարեշրջումը ադրիւրանում է շրջանների մէջ և այստեղ է յորդում գետի պէս. զանգւածների մտածումն ու արժանաւորութիւնը ծել արձակելով գառնաւոր շրջանների մէջ՝ այստեղ է ստանում իր վերջնական կերպարանը և պարտադրում ամենքին։ Ընդհանուր Ժողովը կարող էր սակ կուսակցութեան. «գեղջյւղ է քոյր քեզ

մատուցանեմ», այսինքն զո ունեցածն է, որ մատուցանում եմ զեզ, բայց վերջնապէս բանաձևած և հանրօրէն պարտադիր:

Բոլոր ինքնաւիրութիւններն ու յաւակնութիւնները դադարում են Ընդհանուր Ժողովի մէջ՝ լինեն անհատական, չըջանալիս թէ նախաժամական. ոչ ոք բռնանում է միւսի վրա՝ լինեն հատուած էջ չըջան, և վճիռները տրուում են միջին եզրով, որ իմաստութիւնն ինքն է: Ծայրագոյն աջերն ու ծայրագոյն ձախերը գոհանում են միջին եզրը գտնելով: մէկը մտածում է, որ իր տեսակէտը թէև չըջողթանակեց, բայց նրանից մի բան անցաւ ժողովի որոշում մէջ. միւսը մտածում է, թէ էև իր տեսակէտը խոտորէն քննադատեց, բայց և այնպէս հիմնովին խորտակւած չէ. մի բան մտաւ նրանից ժողովի որոշման մէջ: Եւ այսպէս կեանքը թելադրում է, չըջաններ ուղարկում են Ընդհանուր Ժողով, Ժողովը քննում ու կշռադատում է և հանած վճիռը կնքում է մի նոր փուլը Դաշնակցութեան պատմութեան, ու նաև մի փուլը հայոց նորագոյն պատմութեան, որքանով Դաշնակցութեան գործը հայոց պատմութեան մի մասն է կազմում: Այսպէս է, որ կուսակցութիւնը մնում է մէկ և անբաժան, բայց փոփոխուում է ժամանակի հետ: Այսպէս է, որ ամէն զատմանակ մի ընդհանուր ընդդիմ ունի Դաշնակցութեան պատմութեան մէջ, որովհետև ապրում ու գործում է միևնոյն Ընդհանուր Ժողովի շուրջով: Այսպէս է նաև, որ ոչ մէկ մարմին իրաւունք է համարում իրան «Դաշնակցութիւն» նկատել, թէև եւրոյրն իրանց «դաշնակցական» են համարում և ոչ ոք համարձակութիւն ունի յանուն Դաշնակցութեան խօսելու եթէ չի կրկնում կամ չի մեկնաբանում Ընդհանուր Ժողովի որոշումները: Այսպէս է դարձեալ, որ անհատ ընկերներ ժամածումները որչ ուղղութիւն են ստանում և աշխարհի չորս կողմն ընկած դաշնակցական ընկերներն ու մարմինները միևնոյն դիրքն են բռնում միևնոյն խնդիրների հանդէպ: Այստեղ նոյնպէս գործում է ազատութեան արգասաւոր սկզբունքը: Դաշնակցականները չեն թուրթաւում իրար, այլ իրենց մտածումն են արտայայտում և իրենց համոզումը: Նրանք ոչ թէ հնազանդում են վերին կարգադրութեան՝ իբր անկերպարան հրուներ, այլ արտայայտում են իրենց համոզումն՝ իբր զխտակից մարդիկ, որովհետև չըջանների պատգամաւոր ընկերները նախ քան քէ է տան մի կարծիքի, որ պէտք է դառնայ կուսակցութեան աշխարհայացքի տարբերից մէկը կամ նախ քան հաւանութիւն տան մի որոշման, որ դործունէութեան նոր ուղիներ է հարթում կուսակցութեան անդէ՛ նրանք նախապէս համոզում են ներքուստ և լիովին: Դրա համար յաճախ մեր Ընդհանուր Ժողովներն այնքան երկար են տևում և վճիռները տրւում են մեծ մտամբ միաձայն: Որովհետև սա տարբեր կուսակցութեանց պատգամաւորների մի ժողով չէ, ուր ամէն մի պատգամաւոր յայտնում է իր տեսակէտը և քէն է որոշում վերջնապէս. այլ միևնոյն կուսակցութեան Ընդհանուր Ժողովն է, ուր կան տարաձայն ընկերներ, բայց չկան հակառակորդ բանակներ. ուր ամենքի համար թանկ է կուսակցութիւնը և նրա անբեր գոյութիւնը պայման է յետապայ ամէն գործունէութեան. ուր կարծիքներն աւելի կշիռ չունեն, քան կուսակցութեան Ծրագիրն ու

հետապնդած գերազույն նպատակը, ուր բոլոր ընկերները պէտք է մտածումով նոյնանան, որ դուրս գալով Ժողովից՝ իրենց չըջանների մէջ միևնոյն ուղղութեամբ վարեն մտքերն ու գործերը և իբր նորապարծներ, նոր ետանդով ու խանդավառութեամբ վարակին շարքերը: Այս ձևով միայն կարող է կուսակցութիւնը մնալ միաձայն և անսասան և հայ Ժողովուրդի կեանքի մէջ կատարել այն պատմական դերը, որ վիճակած է նրան:

Ոմանք կարող են շփոթել մեր Ընդհանուր Ժողովը պարլամենտի հետ և մեր բիւրօն՝ կառավարութեան: Թէև երկուսն էլ ընտրւած պատգամաւորների վճռարէ մարմիններ են, բայց նրանք մեծապէս տարբեր են իրարից: Պարլամենտը մի երկիր է ներկայացնում, Ընդհանուր Ժողովը՝ մի կուսակցութիւն: Այնտեղ մի երկրից տարաձայն անձեր են հաւաքւած իբր տարատեսակ շահերի պաշտպան, այստեղ նոյն կուսակցութեան համամիտ անդամներն են հաւաքւած իբր միևնոյն շահերի պաշտպան: Այնտեղ ներկայ են հակառակորդ բանակների սպայակոյտեր, այստեղ մի համեմաշէ բանակի սպայակոյտ է հաւաքւած: Չկայ մի պարտադիր Ծրագիր պարլամենտի բոլոր անդամների համար և ոչ մի պարտադիր կանոնագիր, որ բոլորն ընթացքը ճշտէր պարլամենտից դուրս. մինչդեռ կուսակցութեան բոլոր անդամները նոյն Ծրագիրն են պարտադիր համարում և նոյն կանոնագիրը: Ընկերային երևոյթիների մէջ եթէ կայ մէկը, որ կարող է Ընդհանուր Ժողովին զուգահեռ կազմել — եկեղեցական հին ժողովներն են, ուր հաւաքւած էին նոյն դաւանանքն ունեցող մարդիկ, որ հետևում էին նոյն կրօնին (ապրելու եղանակին), ձևակերպում էին իրենց դաւանանքն ու վարքի կանոնները (Ծրագիր և կանոնագիր), որ պարտադիր էր ամենքի համար: Պարլամենտը բովանդակ ազգն է ներկայացնում, Ընդհանուր Ժողովը ազգի կազմակերպութիւններից մէկը: Նա օրինադրում է բովանդակ երկրի համար, Ընդհանուր Ժողովն՝ իր կուսակցութեան: Նա կազմակերպում ու հակակշռում է հանրային կեանքի բոլոր մարդերը, սա պայքարի կազմակերպութիւն է և պայքարներից մի տեսակի — քաղաքական-յեղավորական: Կործնական տեսակետով Ընդհանուր Ժողովը մի ռազմական խորհուրդ է, որ դժուր է պայքարի օտուտաւոր նպատակներն ու ընթացքը և թողնում է մնայուն սպայակոյտին իրաւորելու: Դաշնակցութիւնն ունի պետութեան գործառնութիւններ — զինուորական, ներքին, արտաքին, դատական, լուստրութեան, երևմտական — և Ընդհանուր Ժողովը որչանք ու վճիռ է տալիս այս ամենի մասին. բայց մինչդեռ պարլամենտի վճիռները բովանդակ պետութեան կեանքին են վերաբերում, Ընդհանուր Ժողովն իր կուսակցութեան մասին է միայն վճիռներ տալիս:

Այս տեսակէտը ամէն մի քաղաքական կուսակցութիւն մի պետական ազգ է և նպատաւոր պարագաների մէջ կարող է պետութիւն դառնալ՝ անպետութիւն ժողովուրդի մէջ և կառավարութիւն՝ պետութեան մէջ:

Պատմութեան բերումով նա իր կուսակցական կազմակերպութիւնը կարող է դարձնել պետական կազմակերպութիւն: Այնտեղ, սակայն, ուր պետութիւնն և կուսակցութիւնն նոյնանում են— ստեղծում է մի շարահանգ բոնութիւն, որովհետեւ այն կարգերը, որ սահմանած են որոշ խմբակցութեան համար՝ պարտադրում են ամենքին և այն Մրազիրը, որ մշակած է որոշ նպատակներով՝ համարում է պիտանի բոլոր նպատակներին համար: Իշխանութեան անցնելով՝ կուսակցութիւնը պէտք է դադարի կուսակցութիւն մնալ, որովհետեւ բովանդակ ազգը մի կուսակցութիւն լինել չի կարող — աղղը ույլոյան շահերի, մտայնութեանը և տրիպանիերի մի դանդաւած է — և կազմակերպութիւնը չի կարող պետական կազմ լինել, քանի որ պետութիւնը շատ աւելի այլապէս գործառնութիւններ ունի, քան կուսակցութիւնը: Նա կարող է ներկայացնել զանգուածային շահեր, բայց ոչ բոլոր շահերը: Նա կարող է հանդէպ բերել հանրային ծաւալուն մտայնութիւն և համախմբել աղղութեան որոշ տրիպանները, բայց ոչ բոլոր մտայնութիւններն ու սոպարները: Իշխանութեան հասած կուսակցութիւնը մի մասն է երկրի աղղաբնակութեան և կոչւած է ոչ թէ ամենքին թեքելու իր լուծի ֆակ, այլ ամենքի հետ միասին գտնելու շահերի և ուժերի միջինը և նրանց ընթաց տալու: Իշխանութեան հասնելով՝ կուսակցութեան գործը չի դադարում, այլ ծաւալում ու բարդանում է. նա հիմա կարող է աւելի շատ բեմերից խօսել և աւելի տիրաբար, աւելի շատ ուժեր համախմբել և աւելի ընդարձակ գործերի ձեռնարկել, բայց նա չի կարող նոյնանալ բովանդակ ազգի հետ, թէ և կարող է շահել գործը մեծամասնութիւն: Մեծամասնութիւնը, սակայն, յարում է ոչ թէ Մրազիր ամբողջութեան, այլ նրա այս կամ այն կէտին և այնքան ժամանակ «կուսակցական» է, որքան կուսակցութիւնը հետամուտ է այդ կէտերի իրացման: Իսլամական է, որ կուսակցութիւնը հետամուտ լինի իր Մրազիր լիակատար և արմատական իրացման՝ որ համակիր մեծամասնութիւնը գնալով հայրի և կուսակցութիւնը մնայ իր հին սահմանների մէջ: Իսկ եթէ կամենայ յամառել և մնալ իշխանութեան գլուխ՝ նա ստիպւած է դիմել բոնութեան և գործել անհամակիր բազմութեան մէջ — իր քարոզն ու յորդորը դարձնելով սատար և իր խօսքի համոզիչ ուժին ընկեր տալով սւին ու մարակ: Այստեղ վերջանում է յեղափոխութիւնը և սկսում է բռնակալութիւնը: Այս անփութանակ վստահանից խուսակելու համար կուսակցութիւնն և պետութիւնն պէտք է խստորէն տարբերեն «դաշնակցական» գիտակցութեան մէջ: Դաշնակցութիւնը հետամուտ է հայ պետութիւն ստեղծելու և ոչ թէ ինքը հայ պետութիւն դառնալու: Պետութիւնն ազգի քաղաքական կերպարանքն է և ոչ թէ կուսակցութեան: Կուսակցութիւնը պետութեան ազգակներից մէկն է, բայց պետութիւնն չէ և լինել չի կարող: Նրանք, որ կարծում են, թէ անկախ Հայաստանը Դաշնակցութեան մարմնացումն է լինելու, նրա նահանգները՝ շրջաններ, նրա վարչութիւնները՝ կոմիտէներ,

շատ թիւր բնուէրում ունեն և՛ կուսակցութեան և՛ պետութեան մասին: Այս մտածումը «դաշնակցական» չէ, այլ եթէ կուզէք՝ «միծամասնական» է: Նրանք է, որ պետութիւն և կուսակցութիւն չիտթում են իրար հետ և ստեղծած են պիօրինակ բոնութիւն, որ ժխտում է շահերի և մտածման ամէն տարբերութիւն: Մտածման մի եղանակ է նա ճշմարիտ համարում, որ իր իրաւունքն է. և նոյն եղանակն է ամենքին պարտադրում, որ բռնութիւն է: Նա իրան չի նկատում պատմական և ընկերային ազգակներից մէկը, այլ համարում է միակը: Այս մտայնութիւնը խորթ է Հ.Յ. Դաշնակցութեան և խորթ պիտի մնայ: Նա չի բռնանում, այլ յորդորում է յանձնառութեան: Նա պայքարում է անիրաւութեան դէմ և խուսափում է անիրաւութիւնից: Նա հրաւէր է կարողում, որ հայ մարդը քաղաքական ազատութեան ձգտէ և իր Մրազիրն՝ առաջադրում իր լաւագոյն լուծում հայ ժողովրդի հիմնական պահանջների, բայց նա չի բռնադատում, որ ամէն ոք իր մտածումն ու գործելակերպն ունենայ: Դաշնակցականն ինքն է բռնանում իր վրա և ոչ կուսակցութիւնը նրա վրա: Նա կարգապահ է ներքին համոզումով և ոչ արտաքին բռնութեամբ: Նա կուսակց է որոշ քաղաքական կացութեան և որոշ անտեսական կարգի ոչ այն պատճառով, որ ստիպում են նրան, այլ որովհետեւ այդ է իր համոզումը:

Այս հանգամանքը պէտք է մոռանալ մանաւանդ աղղային գործերի մէջ, ուր դաշնակցականը յանախ իշխանութեան մաս է կազմում: Պէտք է որոշապէս տարբերել կուսակցութիւնն և իշխանութիւն: Կուսակցութիւնն իշխանութիւնն չէ, այլ իշխանութեան ազգակներից մէկն է միայն: Նա կարող է իշխանութեան հասնել, բայց պէտք է իր ինքնութեանը գիտակից լինի: Նա պէտք է միշտ հաւել առնի այն «անտարբեր» գնդակածները, որոնց լուռ համաձայնութեամբ անցած է իշխանութեան գլուխ: Նա պէտք է հաւել առնի ոչ միայն կուսակցական քէները, այլ և այն մարդկանց, որ նրան քէ տւած են աւանց կուսակցական լինելու: Նա պէտք է հաւել առնի, ոչ միայն նրանց, որ քէարկած են թեր, այլ և նրանց, որ քէարկած են դէմ և պայքարած են իրեն կատարի հակառակորդ, որովհետեւ իշխանութիւնը ազգի և համայնքի վարչական կամքն ու կերպարանքն է և ոչ կուսակցութեան: Անցնելով իշխանութեան գլուխ՝ նա դառնում է ազգի և համայնքի բերան և ոչ միմիայն իր կուսակցութեան: Նա պէտք է աշխատէ իր Մրազիրն այն կէտերը իրացնել, որ յուսալի է թէ հանրութեան հաւանութեան կարժանանան: Սա չի նշանակում Մրազիրից հրաժարել — քանի որ ձեռնարկած գործերը Մրազիրից են բխում կամ նրա մի մասն են կազմում — սա նշանակում է յարմարել միջավայրին և Մրազիր հետապնդումը արդիւնաւոր դարձնել:

Ն. ՀԱՆԳՈՅՑ

(Վերջ)

# ԲՈՒՆԻԿԵԱՆ «ՊԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՎԱՅԻՄ» Ի ԻՃԱՍՏՈՂ

«Գրասակարգային պայքար»-ի արևեստական փոթորիկ մը բարձրացած է ժամանակէ մը ի վեր խորհրդային երկիրներու մէջ: Խորհրդային Նախաստանը, որպէս մշտական հետևող մը, աւելի չափազանցած ձևերու կը դիմէ՝ ետ չմտալու համար ընդհանուր համերգէն: Ու որպէս հետևանք այս անդիտակից կամ շարամիտ վագրին, դուք կը տեսնէք բոլշևիկեան հայ մամուլը դասակարգային պայքարի հրդեհէն բռնած: Կոչեր, սպանալիքներ, խմբագրականներ ու յօդուածներ մեծագիր վերնագիրներով իրարու կը յաջորդեն, միջոցառում արինեով ներկիլու: Ահա, եկա՛ն, կուգա՛ն, «գրասակարգային թշնամին գրեթէ բարձրացուցած է», «կուրակներ պէտք է ճնշել», «օպորտիզմի կուրակային-կապիտալիստական արտից բռնած է» կայն կայն:

Այս բոլորին ի սկս, դուք այն տպաւորութիւնը կը ստանաք, որ, իրօք, Խորհրդային ամբողջ Միութիւնը (Հայաստանն ալ հետը) ծանրապէս կը հեծէ դրամատիրական հզօր կարգերուն տակ, ու բանտրութիւնը պատրաստած է յեղափոխական շարժումով մը վերջ դնել արիւղ դասակարգին և անոր շահագործումներուն:

Սակայն, իրողութիւնները բոլորովին տարբեր պատկեր կը ներկայացնեն: Անոնց շնորհիւ կարելի է տեսնել անհաստական և խմբակցական ազդեցութեան ինքիւրը, անհաստական հաշիւներու մոլեգին դէմքը, ներքին պատակումներու փոխախաղ, որոնք, սակայն, բոլշևիկեան «անհրաժեշտութեամբ»՝ դասակարգային պիտակը կը զգենուն, բանտրական և գրամատիրական հակընդդէմ ճակատներու կը բաժնուին, ու երկրի մէջ ծայրէն միւսը, հրամայած կարգախօսները միջոցառում կը փոթորկին, միլիոնաւոր բազմութիւնները մշուշապատ կարծիքներով օրօրելով: Ու վճիռները հակասական են յաճախ: Երբեմն բոլորովին հակառակը նախորդ որոշման, թայց պայքարի ձևերը, զբական արտայայտութիւնները և ընկալումն որակումները միշտ կը մնան նոյնք: Երէկ Ստալին և Ռուսիայի Տրոցկիի ուղղութիւնը կը գտնէին կործանարար, ու զայն կը նկատէին բանտրութեան դասակարգային թշնամին: Ուրիշ օր մը Ստալին ամենայն դիւրութեամբ կիւրացնէ Տրոցկիի ուղղութիւնը, ու երբ Բուխարին մը այդ մասին առարկէ, անմիջապէս կը դասուր դասակարգային թշնամու շարքը, ու այսպէս՝ փոխադարձաբար: Եւ շարքերը կը սկսին շարժուիլ, խորտակելու գլուխ բարձրացնող կուրակներ ու կապիտալիստները, միշտ հին դիւնարանէն աննկծով բուրբ այն բառերն ու ընտրուածները, որոնք, գոնէ բոլշևիկեան յեղաշրջումէն յետոյ՝ թանգարան նետած պիտի ըլլային:

Անցած շարժուն հեռագիրները Ստալինի ճառը կը հասցնէին աշխարհի չորս կողմը՝ աւետելու թէ՛ նեպի՛ն

վերջ տրւած է և թէ հինգ միլիոն կուրակներու դէմ անողք պայքարի պիտի ձեռնարկեն: Բացատրութիւն մը՝ կընդգծէր թէ երեք կով կամ աւելի ունեցողները կուրակ պիտի նկատուին: Ուրեմն ամիսներէ ի վեր բոլշևիկեան պայքարները պիտի հասնէին այս եզրին:— Ինչքէն գնդակահարում, աքսոր, անտեսական հալածանք, լարւած սարսափի տակ պահելու լայնածաւայ երկիրները, և այս բոլորը «գրասակարգային պայքար»-ի անուն տակ, ընկերվարական բառարանի կատարակալ օգտագործումով: Նոյն սարսափը բոլշևիկեան կուրակացութեան ներքը, իրարու հանդէպ, անհատական և խմբակցական գերակշռութեան հետամտութեամբ, որ, սակայն, լայն ծաւալ կը ստանայ դուրսը, հարեւար կանցնի զանգուշուն, որ կոչուած է դեռ երկար ժամանակ փորձադաշտ մնալու բոլշևիկեան Ռայսադեմուքիստներուն, հախա-քնկերվարութեան փուլիքը բոլորելու համար: Այսպէս ընելը, ըստ երևոյթի, անհրաժեշտ է, որպէսզի իշխանութիւնը կանգուն մնայ:

Այս յօդուածով միտք շունինք ծանրանալու տեղի ունեցած զէպքերու և անհաստական հաշիւներու վրա, և ոչ ալ վեր հանել բոլշևիկեան այս կամ այն նախաձեռնութեան արժէքը, այլ կուզենք «գրասակարգային պայքար»-ի թանձրացեալ միջոցառումները, և ցոյց տալ թէ հալածանքի հիմունքները անտեսական-դասակարգային ըլլալէ աւելի զարգական են, և եթէ տնտեսական ինքիւր մը կայ, այդ ալ պետութեան տնտեսական տագնապն է, որ կեղծ ու պատիր ձևերով «գրասակարգային պայքար»-ի յեղափոխական շողողուն կարգախօսին կը կապուի:

Այս կեղծիքի պատկերն աւելի որոշակի ցոյց տալու համար, կարճէ շարք մը հատուածներ բոլշևիկեան մամուլէն, այստեղ մէջ բերել: Անոնց թափանցիկ քօղին տակէն՝ դիւրին է տեսնել վեր յիշածս միտումները: «Գրասակարգային պայքարի լեռնեան և լիբերալ ըմբռնողութիւնը» վերացրով «Ուղղակիտի»-ի առաւնորդը, գետեղած «Խորհրդ»՝ Հայաստան»-ի նոյնմը: 16-ի թիւին մէջ, ուղղւած է աջ թեքումի դէմ: Ահա թէ ինչ կը գրէ պաշտօնական օրգանը.

— «Ինչպէս յայտնի է, մեր տնտեսական շինարարութիւնը, որ լայն ֆրոնտով ծաւալուած է քաղաքում և գիւղում, իրագործուած է բանուր զստակարգի ամենակատարի պայքարի պայմաններում՝ ուղղւած տնտեսութեան կապիտալիստական և այլ մեծոգ ձևերի դէմ: Մեծ կատուցում ենք, յայդպէս արեւել կուրակի-մեպ-մանի և իմպերիալիստական գիշտուիչ բուրժուազիայի դիմադրութիւնը: Ահա թէ ինչու չի կարելի լեռնեան ճիշտ գնահատական տալ մեր մեծ շինարարութեանը. չի կարելի ըմբռնել երկրի ինդուստրացիան ճանապարհ.

հին կատարուող հիմնական փոփոխութիւնը, առանց իւրացնելու դասակարգային պայքարի դիմաւիկան» :

*Գիշ վարը կաւելցնէ .*

«Լեւնիեան վերադիշնայ կանոնի իրենց դատողութիւններով խորք մեր այ օպորտունիտետները մշտապէս աշխատում են դասակարգային պայքարի դիմաւիկայի եւնց այդ հիմնական հարցը բողոքելով՝ տայով նրան բացայայտ օպորտունիտետական մեկնարքանութիւն» :

*Մեկուգրելով աջ օպորտունիտետները, որ դասակարգային պայքարի հարցը բացբող զննէ կը խուսափին, կը շարունակէ —*

«Այդ հարցում նրանք լիովին անտեսում են հիմնական այն դրութիւնը, թէ այդ շինարարութիւնը կարող է առաջ ընթանալ միմիայն այն դէպքում, երբ մեկն անվերապահօրէն դնեմք խորիքային տնտեսութիւնների շինարարութեան շտաբը մղող դասակարգային պայքարի հարցը և ընդունեմք, որ այդ շինարարութիւնն այն մտնանակ միայն դուրս կը գայ սոցիալիստական լայն ճանապարհը, երբ նա խտրի անսխալաբողջի կուլակային-կապիտալիստական աստիճան» :

— «Կուռակցութեան հետք սոցիալիստական յետագայ շինարարութեան հարցը անխուսափելիօրէն կապւած է կուլակային-կապիտալիստական տարրերի վրա յարձակում գործելու անհրաժեշտութեան հետ» :

*Իզվեստիան պահանջելով, որ աջ «Փրակցիոնէրներն» աւելի որոշակի յայտարարութիւններ ընեն դասակարգային բարձրման մասին, կրտէ —*

«Մակայն, այդ յայտարարութիւնները միայն այն մտնանակ կը հանդիսանան կուռակցութեան ընդհանուր գծի իրական ընդունում (և ոչ թէ ստրատեգիկ մի միջոց)՝ երբ նրանք լրացնեն առնազն իրենց սխալների խոտուովանութեամբ՝ սոցիալիստական շինարարութեան հիմնական հարցերում, և երբ նրանք կապւած լինեն դասակարգային պայքարի ոչ թէ լիբերալ, այլ լեւնիեան գնահատականի հետ, դասակարգային մի պայքարի, որ մղում է բանուսը դասակարգի և նրա ղեկավարած չխառն ու միջակ գիւղացիութեան կողմից՝ քաղաքի և գիւղի կապիտալիստական տարրերի դէմ ուղղած ամենալայն արշաւի պայմաններում» :

*Ինչպէս կը տեսնէք վերի մէջբերածներէն, խօսողը Կ. Մաքսի «Անհիճնատն» է ստակաւին, թէ և Լենինի անունը կը արւի, և ամբողջ քարոզներն ու սպառնալիքներն ուղղւած են Բուխարին և «աջ օպորտունիստ»ներու դէմ : Անչուտ, բուլշեիկական կուռակցութեան պատակաւորը, որքան անհաստակն, նոյնքան խորհրդային երկիրներու ընկերային կեանքի որոշ երդութիւններէն կը բխի : Մակայն, Հոսանքներու տարբերութիւններն երբ իրարու կը բախին, անձնական շահերն ու անհատական կիրքերը թև կտանեն, ու ճակատներ կը դառնան «քառակարգային թշնամի»ներ : Այս յարած թշնամութիւնը ետ կը դառնայ դէպի Ժողովրդական լայն զանգածը (որ Հիմունք ծառայած էր ստրակարծութեան) բազմապատկւած գոյներով և թշնամութեամբ : Վերի խաւերու լարւած թշնամութիւնը շատ մեծ դիրբութեամբ երկրի մէջ կը գտնէ Հինդ միլիոն կուլակ, որոս պէտք է Հարլանդ Հուրով ու սուրով : Այս կախարդական և միևնոյն ժամանակ դաւադրական շրջանակը կը դառնայ, բազմաձիւղոն ժողո-*

վուրդը նոր ստրակներ կապրի, աղքատութիւնը նորէն դռնէրէն ներս կը մտնէ, բանագործիւնն ու շքատր գիւղացիները նորէն ստիպւած են սպասել ընկերվարական այս փորձարկութեան արգիւնքին, ու վերին շերտերուն մէջ ոմանք շտրհարուկ կըլլան, նոր լարախողացներ հրապարակ կուզան՝ ժամանակ մը իրենք ևս անելին փորձելու խիստ համբերատար ու անուժանդածներու գլխին :

\* \* \*

Այս բոլորը գրող, խօսող և գործող բուլշեիկները կարծես գլխու շին ինքն այն աղաղակող հակասութեան, որու մէջ կը գտնուին : Բարձրագու ստիճանով նոյն բուլշեիկներն որոշիւն են ու մամուլը յայտարարած են ամբողջ աշխարհին թէ, որպի՛սի ընկերվարական դրախտ է Պորտուգալիին Միութիւնը : Ամբողջ աշխարհին յայտնի է, որ մասնաւոր սեփականութիւնը (գոնէ դրամատիրական արժէք ներկայացնող) վերացած է և մասնաւոր նախաձեռնութիւնը նապագոյնի թլած է, դարբերով տնտեսական-քաղաքական արժէք ունենալէ : Մակայն, ներքին պայքարի նոպաներու ընթացքին, դարձանքով կը տեսնենք թէ ԽՆՀԿԻԻ լարում կը ցուցադրեն բուլշեիկներն կուռակցութիւնն ու կառավարութիւնը բոլոր տարու «քաղաքի և գիւղի պիտատիրական տարբերու դէմ» : Նման պայքար մը, Եւրոպայի մէջ, մեր աչքերուն առջև, իսկապէս հող ունի և դասակարգային հակամարտութեան կատարեալ կերպարանքը կրնայ ստանալ մինչդեռ մենք այն սուր արտայայտութիւնները չենք տեսնել, ինչ որ կրնեն բուլշեիկներն իրենց ամբողջ թափով յարձակելով «երեք կով» ունեցողներու վրա : Մարքս և Լենին տիրուր մտածումներ պիտի ունենային «երեք կով»ներու արտադրութեան յաւելեալ արժէքի մասին ու թերեւս ստրակներ տեսնելով, որ իրենց աշխարհները ընկերվարութիւնը կառուցանելու համար, երբ իրենց զէմ կապիտալիստ դասակարգ չունին, մեռած տեղէն նոր դասակարգ կը ստեղծեն (հազարած խրտիւլակ) իրենց «չեղափոխական» մոլուցքին դոհաղում տալու :

Նոյն արշաւանքի ստրակական ընդօրինակումը կըրկնակի խեղճ Հայաստանի մէջ : Աւելի պզտիկցած շրջանակ, ուր եսերն ու կիրքերը լեռնանման են, ուր «թայֆաններն անպակաս են, ուր անձնական քնիտանքութիւնը հայկական սխալարտութեամբ՝ տեսական է : Սեղծ երկիր մը, որու ընկերվարական վերելքի մասին, իրենք բերցին թէ հէջով սոցիալիզմ կառուցել չի կարելի», և սակայն, գիւղական խառնարանի և «դասակարգային պայքար»ի բեմ կը դառնայ, անուշտ, Հայաստանի մէջ գոյութիւն չունեցող Հարստութեան փոխարէն, զի մը արեւն խլելու համար ժողովուրդէն :

Հայ գիւղը թէ՛ 3 կամ աւելի կով ունեցող կուլակներ զիչ ունի, սակայն, ձայնագուրկներ շատ ունի : Բմահան հակադաշնակցականութիւն մը, Հին սխալու կուռակցութեամբ այնքան ծաւալ ստացաւ Հայաստանի մէջ, որ տարածեցաւ ամբողջ ժողովուրդին վրա, ու Հայ ժողովուրդը զանգածօրէն աչքի փուշ դարձաւ երկրը բուլշեիկներու, որոնք ձայնագուրկներու դառնակներ ստեղծեցին՝ կուլակ մկրտելով գանոնք : Ու Հայա-

ծանրը ընդհանուր կարգով կը սկսի Հայաստանի «կուլտ» ներուճն զգժ, որովհայտ Հայաստանն այլ զդասակարգային պայթարքէն ետ չմտայ: Տեսնենք թէ ինչպէ՞ս կարտոյալուի այդ պայթարքը:

«Գիւղխորտրոնները դասակարգային պայթարի դիրքերու է խմբադասականով մը «Ջորճրդ. Հայաստան»-ը նոյնմբեր 22-ի թիւին մէջ կը գրէ:—

«Նոր կանոնագրութեան մէջ նախագծած փոփոխութիւններն ու ճշտումները խփում են մի նպատակի—գիւղխորտրոնը դարձնել պետական մի զեմէ, որով զինւած բարտրակներն ու շխտարները, միջակի դաշնակցութեամբ՝ դասակարգային սրման ներկայ պայմաններում՝ հակահարւած տան կուլակների դիմադրութեանը և յարթահարեմ այն: Այս նպատակով կանոնադրութեան նախագիծը վերացնում է մոխայեղակախական շրջանից մնացած «գիւղխամայնիքի ժողովուրդ» և նրա տեղ ղեկում է նոր խտրիւրդային հասկացողութիւն — գիւղի բնորոշների բնիհանուր ժողով: Այդ ժողովներին մասնակցելու չպիտի թողնեն կուլակները և ծայրնագրակները»:

«Դասակարգային սրման ներկայ պայթաններում», պէտք կը գտնուի «հակահարւած» տալ կուլակներու դիմադրութեան, երևի մտահողւած, որ Հայաստանի կապիտալիզմը (պէտք չէ խնդալ այս որդերգութեան վրա) արդէն շատ համոզած՝ կարող է զլուխ բարձրացնել իշխանութեան ուղեմ: Ու Հայաստանի պայթաններու հետեանքով, ստիպւած են մանրադիտակ դործածել՝ Հայաստանի տիրող ու ճնշող դասակարգերը գտնելու, հասարակութիւնը երկու ճակատներու բաժանելու, և ըսելու, որ՝ իրենք կը քալեն դասակարգային պայթարի հուշում:

Ամէն անգամ, երբ բուլշեիկ ղեկավարները քաղաքական կամ տնտեսական ուղեգիծ մը կը որդեգրեն, նախ հայասանքի կը ձեռնարկեն՝ դործնակասորէն աճ ու դողի մատնելու, իսկ խոջքով կը սպառնան իրենց այն հատուկներուն, որոնք տիրող հասարակին հետ չեն: «Դասակարգային պայթար»-ը՝ դործնականը, որովս խիստ ազդարարութիւն, արդէն շատ բան կրտէ ընդդիմադիրներուն, որոնք կուլակներու կարգը կը դասուին և աքտորի ձմարաններուն վրա կը դռնուան բանուորականկարգի թշնամին: Ներքին հաշիւները կը կարգադրին, ուրեմն, սուրբ ծայրը ցոյց տալով, կամ սուրն ամբողջութեամբ գործածելով: Այս բոլոր պարագաներուն, ժողովրդական հոծ գանդակածներն են, որ անողք հարւածը կը ստանան: Զանգազը օրէնքէ դուրս է և զեւ մինչև և այսօր կը մնայ փորձադաշտ մը:

Այս բոլորէն գատ, կայ բուլշեիկան իշխանութեան համար խիստ ծանրակշիռ խնդիր մը, որ իր կարգին կը մղէ դանտէ կեղծ դասակարգային պայթարի մթնուորտ մը, ստեղծել Ջորճրդային Միութեան սահմաններէն ներս, և պարբերական բունդներով մտքէրն այլ ուղղութեամբ՝ լարել: Այդ մտահոգութիւնը կը բխի այն պարզ իրողութենէն, որ տնտեսական բոլոր մէծ ձեռնարկները պետութեան կը պատկանին: Տնտեսական հրմնական օրէնքներու գերուհով, միլիոնաւոր բանուորներ զգժ զգժի կը գտնեն կառավարութեան հետ, որ, խորհրդային պայթաններու մէջ, կը փոխարինէ գործատէրը: Այդ դասակարգային պայթարը տնտեսական գարգացման ամենէն շօշափելի երևոյթն է, դրա-

մատիրական ներկայ կարգերուն մէջ. այդ կոխը կը մղի բանուորութեան և դրամատէր-գործարանատէրութեւ միջև: Բանուորութեան կոխը կրնորարձակի մինչև կառավարական կարգը, որ վերջին հաշուով դրամատէր դասակարգի պաշտպանի կը հանդիսանայ: Իսկ խորհրդային տնտեսակարգի մէջ միլիոնաւոր բանուորութիւնը կը տառապի աշխատանքէ և բարտրութենէ, իր զգժ ունենալով բուլշեիկան կառավարութիւնը, որ ըստ ձեռք բանուորութեան կառավարութիւնն է: Բանուորութիւնը դժգոհ է. այդ դժգոհութիւնը կը բխի հինց անոր աշխատաւորական հանգամանքէն, թէկուց խորհրդային կարգերու մէջ, գանդակածօրէն ամենէն շատը նպատաւորւած ըլլայ: Բայց բանուորական դժգոհութիւնն իր պողոթնումն ունի: Բուլշեիկան կառավարութիւնը, ի հարկէ, զինեալ ուժով բանուորութիւնն իր աշխատանքի գլուխը կը պահէ, ու ճշտական մեքենայութիւններով, բանուորութեան և բուլշեիկան շարքերու ուղղորութիւնը կը յարէ զդասակարգային պայթար» յալ ճակատներու վրա: Տնտեսական ձեռնարկները չեն յաջողիր, — բանուոր դասակարգի ներքին թշնամիներն են պատճառը: Բանուորութեան վիճակը չի՞ բարելաւիր — գիւղական կուլակներն են պատճառը: Խուսաստանի ճարտարաբետը չի՞ ծաղկիր, ընկերվարութիւնը արագօրէն չի՞ կառուցիր — պատճառը դասակարգային թշնամին է, միացած արտաքին կայսերապաշտութեան: Ու եթէ զիչ մըն այլ առաջ երթանք, կը տեսնենք, որ մեղաւորները կը ներկայանան իրենց ծոցին մէջ դործող «աջ օպարտունիստ»ները, որոնք երկէ նոյն երկրի «փրկիչներն էին: Այսպիսով, աշխատաւորական հոծ գանդակածներու դժգոհութեան սարքը կը թեքէ այլ ուղղութեամբ ու խախտու կացութիւնը ժամանակ մը ևս կը տեղ:

Յիշատակենք փորձիկ նմոյշ մը «Ջորճրդ. Հայաստան»էն, որ այնքան յատկանշական կերպով կարտայայտէ իշխանութեան մտահոգութիւնը:

Արտադրական ձեռնարկումս միայնարտութիւն մը ընցնելու վերաբերմամբ «Մեր հերթական խնդիրները» վերնագրով յօդուածի մէջ («Խորհրդ. Հայաստան» նոյ. 10) կը կարգանք:—

«Սակայն, ի՞նչպէս են մեկնաբանուում որոշ կալածելի «գործիչներ» շատ տեղիում իրենց կուսակցական անհատների կողմից այս որոշումը: Այսօրեան ցաւով տարած, ճախութեան փրագներով իրենց քողարկող մարդիկ խոճապ են առաջացնում բանւորների շրջանում. և թէ՛ ժողովներում, թէ՛ մասնաւոր խօսակցութիւնների մէջ այդ որոշումը համարում են «գեմնակրատիզմի նմոյշ», «միահեծան վարչութեան ստեղծում» և այլն: «Այս սխալ մեկնաբանութիւնների յաջող գեմ են դառնում մեր մէջ դեռ իրենց ցոյալութիւնը քարտուղ հակախորհրդային ելժմեանների ձեռնում և արամբ անկրտակից բանւորների շրջանում աշխատում են անելի հիմնադրել իրենց դասապարտելի կարծիքը խորիքային շինարարութեան մասին, թէ՛ «տեսէ՛ք, ադմինիստրացիան այժմ ինճակալ է լինում, ում կուլի գործից կը հանի, ում կուլի, կը ննչի, ինչպէս ռիգի այնպէս կը վարի գործարարի հետ, ինչպէս ուղի այնքան կը ծախսի, նա ոչնչալ չի տարբերում հին յանգլիները...»

Ինչպէս կը տեսնենք վերի հատուածէն, երբ բանու-



րուժիւնը խորհրդային վարչութիւններու և գործարաններու ղեկավարութեան գէժ կը կենայ իր բանուորական պահանջներով, կը դառնան «հակախորհրդային էլիմենտներ», կը մոտցի անոնց բանուորական ծառայումը, ու և՛ է՛ք շատ առաջ կը թանկանայ իրենց արտադրութիւններու մէջ, անխուսափելիօրէն կը նկատեն «գասակարգային թշնամի»:

Որ կողմէն ալ վերցնենք և քննութեան առնենք «գասակարգային պայքար» ի խմատը, ինչ մեկնութիւն ալ ուղենք տալ ներկայիս տեղի ունեցող անողոր գործնէրուն, որոնք «գասակարգային սրման» փուլ մը կը բնորոշեն, Եզրակացութիւնը որոշ է. — գասակարգային պայքարի կիրարկած ձևերը ժամանակավրէպ մըն են խորհրդային կարգերուն մէջ: Դասակարգային պայքարը ետդ չունի խորհրդային սահմաններէն ներս. մինչդեռ բոլշևիկեան դեկալարները հանուր ժամ միտքը կը մոլորեցնեն շատ ինի մեթոտներով ու գոց եղած ֆրագներով և կը բանան իրենց պայքարին հազցնել յեզպիտակամ շտպիկ մը, որ շագուցիչ էր երբ ցարական կառավարութիւնը կանգուն էր և երբ դրամատիրական կարգերը կեանքին կը թելադրէին իրենց

ուժը: Իսկ հիմա, այդ բոլորը կը թւին կեղծ, նոյնիսկ հակախզափոխական, ու շատ անգամ՝ ծիծաղելի: Այդպիսի կեղծ մթնոլորտի մը մէջ միայն կարելի է բռնակալ իշխանութիւն մը կանգուն պահել, բանուորութիւնը կամ սարկացնել կամ անոր ուշադրութիւնը դարձնել այլ ուղղութեամբ, գոհացում տալու անոր «գասակարգային պայքար» ի անհրաժեշտութեան:

Այդ կեղծ մթնոլորտին մէջ բոլշևիկները կը հաստատան իրենց կեղծիքին, ինչպէս ստախոս մը հետոցհետէ կը համոզուի իր ըսածներու ճշմարտութեան. և, սակայն, կը տառապին այս ներքին փոտիտէն: Բոլշևիկմը մնացած է տակաւին ռազմական կոմունիզմի և նոյնիսկ նախապատերազմեան ընկերավարութեան պայքարի հոգեբանութեամբ, առանց կարենալու նախարկներվայական կարգերուն համապատասխան մթնոլորտ և մեթոտներ ստեղծելու: Այս ներքին ճգնաժամը որդի պէս կը կրծէ բոլշևիկի մէջ: Իսկ հո՞ գտնուածները կը մնան շարքած ու սպասող: Անշուշտ, ստապաւորը կամ հիմնապէս փոխուող բոլշևիկմը պիտի ըլլայ:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

## Խորհրդային Տնտեսական Բազմականութիւնը

Բոլշևիկեան տնտեսական քաղաքականութիւնը ներկայիս ընթանում է երկու հիմնական ուղիներով: Առաջին՝ երկրի ճարտարարւեստացում մանուկարճ ժամանակամիջցում, և երկրորդ՝ գիւղական տնտեսութեան ընկերվարական վերակառուցում, որի հետ սերտօրէն կապած են հումոյթի և պարենաւորման խնդիրները: Խորհրդային երկրներէ տնտեսական շինարարութեան գլխաւոր պատւանդանը համարում է ճարտարարւեստացումը, որը և նպաստելու է թէ պրոլետարիտի դասակարգային զինքերի ամրացման և թէ զիւղաւտնտեսութեան զարգացմանը՝ նոր տեխնիքական հիմունքներով:

Այս քաղաքականութիւնը իր ձևակերպումն ստացաւ հինգամեայ ծրագրի մէջ, որի կիրառումը խորհրդային կենտրոն թիւակոտել է արդէն երկրորդ տարին: Հինգամեայ ծրագրի նպատակն է, համեմատաբար, պատմական կարճ ժամանակաշրջանում, խորհրդային տնտեսութիւնը ոչ միայն բարձրացնել դրամատիրական երկրներէ տնտեսութեան աստիճանին, այլ և վերջինից շատ աւելի առջ անցնել: Ծրագրի իրագործումը կամրացնի խորհրդային երկրներէ անկախութիւնը և դիմագրական ուժը: Ծրագրի իրականացումով ոչ միայն վերջնականապէս կը լուծուի պարենաւորման տագնապը, այլ և հնարաւորութիւն կը լինի

լայն չափերով արտահանել զիւղաւտնտեսական մթերքներ: Եւ որ գլխաւորն է, հինգամեայ ծրագրիւր, — դա ընկերվարական տնտեսութեան կառուցումն է:

Չպէտք է մոռնանալ, որ հինգամեայ ծրագրիւր կազմելիս, բոլշևիկներն ի նկատին են ունեցել, որ այդ ծրագրին իրականացնելու են միմիայն երկրի ներսում գտնուած միջոցներով:

Հնգամեայ ծրագրի հաստատումից ի վեր անցել է մէկ տարի և այժմ հնարաւոր է, դատելով տւած արդիւնքից, աւելի յստակ գաղափար կազմել այդ ծրագրի մասին: Սրա համար մէկ տարին բաւական է, քանի որ իրենք բոլշևիկներն էլ խստովանում են, թէ ծրագրի յաջող ընթացքը կախած է առաջին մէկ-երկու տարւայ ձեռք բերած արդիւնքներից:

Մեկնելով պաշտօնական գեղուցումներից ու տււււրներից, պէտք է ասել, որ առաջին իսկ տարւում, ոչ միայն լրացւել են ծրագրում նախատեսւած թւերը, այլ և տնտեսութեան մի շարք ճիւղերում, նոյնիսկ նշանակւած չափը անցել են: Այսպէս, օրինակ, խորհրդայինարքութիւնը փոխարինակ 21.3 տոկոս յաւելումի, տւււ է՝ 23.7 տոկոս, Էլեկտրակայանների ոյժը 13 տոկոսի դիմաց՝ 20.3 տոկոս, փոխադրական միջոցների ապրանքի տարողութիւնը աւելացել է երկու անգամ և, վերջապէս, հասաքական (կոլեկտիւ) տնտեսութիւն-

ները միացրել են գիւղական տնտեսութիւնների կրկնակին այն թիւ, որը նախատեսուած էր ամբողջ հինգ տարւայ համար («Պարւզա», 18 նոյեմբ. 1929): Այս նախնական զուգընթաց չարիքանք զանազակ է առաջանում գիւղատնտեսութիւնը և մասնաւոր չացահատիկաւին և անասնաբուժական ճիւղերը»:

Կարելի է ասել, որ այս գերազանցօրէն յաջողեցան թւերի մէջ էլ կայանում է խորհրդային տնտեսական քաղաքականութեան թոյլ կողմը: Տնտեսութեան զլխաւոր ճիւղերը գտնելով պետութեան ձեռքում, վերջինի վիճակի է իր բոլոր միջոցները կենտրոնացնելով արդիւնաբերութեան որոշ մասի վրա, չարիքանք զարգացնել այդ մասը, և միտմամբ, անուշադրութեան մատնելով տնտեսութեան մէկ ուրիշ ճիւղը: Մի երկրի տնտեսական բոլոր ճիւղերի անբախտելիօրէն միմիանց շարժապայւած լինելու հետևանքով, տնտեսական անհամաչափութիւնը առաջ է բերում մեծ դժարութիւններ, որպիսին է տեղի է ունենում խորհրդային երկրներում: Օրինակ, մի կողմից չտեսնւած արագութեամբ աճում է արդիւնաբերութիւնը, իսկ միւս կողմից երկրում տիրում է թէ՛ ապրանքի և թէ՛ գիւղատնտեսական մթերքների սով:

Գիւղատնտեսութեան յետամնացութիւնը զգալապէս անդրադառնում է երկրի ճարտարաբանտնային ընթացքի վրա, որովհետև թէ՛ արդիւնաբերութեան հումքի մի մէջ արդիւնաբերական աշխատատեղիների պարենի մատակարարողը գիւղն է: Միւս կողմից էլ, արդիւնաբերութեան որոշ ճիւղերի յետամնացութիւնը խոշոր դեր է խաղում գիւղի տնտեսական կենտրոն: Վերջինք, թէկուզ, բնիական արդիւնաբերութիւնը, որը խորհրդային արդիւնաբերութեան ամենաթոյլ ճիւղերից մէկն է: Յայտնի է, որ հումքի մի մասը արտադրութեան տեսակէտից շատ մեծ արժէք է ներկայացնում հողի բնիական պարտաբացումը: Հետոյ իջեմիական պարտաբացման, Գերմանիայի, Շոտլանդիայի և Գանիայի Ռուսաստանից շատ աւելի պակաս բերրի հողը մի քանի անգամ աւելի բերք է տալիս: Այն ինչ, ծրագրով նախատեսուած խորհրդային բամպակի մի միայն յաւելումը պահանջում է լրացուցիչ մէկ միլիոն թան պարտաբացման նիւթ, որի մէկ շնչին տոկոսն անգամ անկարգ էն արտադրել:

Քաղաքի արդիւնաբերութիւնը նոյնպէս ի վիճակի է բաւարարել գիւղին՝ անհրաժեշտ քանակութեամբ երկաթադրծական մեքենաներ մատակարարելու: Իսկ մատակարարում մեքենաների փոքրաթիւ քանակն էլ որակով ցած է, շնորհիւ գործարանների արհեստագիտական (տէխնիկ) յետամնացութեան, արտադրութեան արագութեան և որակաւոր բաներների պակասի:

Արդիւնաբերութեան աճումը մեծապէս կախում ունի փոխադրութեան միջոցների վիճակից: Արագօրէն հումքի հաշտեցնել և արտադրած ապրանքը չբնականաբանութեան մէջ ղնելը ամբողջովին կախած է փոխադրական միջոցների կազմակերպման գործից: Այն ինչ յայտնի է, որ Ռուսաստանի տնտեսութեան ամենասանձիթարական կողմը կազմում է հէնց փոխադրական գործը:

Արդիւնաբերութեան մէջ առաջնակարգ նշանակութիւն ունի մետաղը: Իսկ մետաղագործութիւնը Ռու-

սաստանում շատ ու շատ աւելի յետ է մնացած Ամերիկայից ու Եւրոպայից: Ստիպւած են տարեկան խոշոր քանակութեամբ գունաւոր մետաղ ներմուծել արտասահմանից խորհրդային երկրներ, որի համար վճարում է ոսկեղրամով: Այն ինչ ուսուական հողն իր ծոցում պարունակում է երկաթի անուպատ քանակ:

Ճարտարաբանի կանոնաւոր և անչլոյ զարգացումը պահանջում է խիական որակաւոր բաներների բանակներ և պատրաստուած մասնագէտներ: Պատերազմը և յաջորդող յեղափոխութիւններն ու քաղաքացիական կռիւները Ռուսաստանին մեծապէս զրկեցին այդ ուժերից: Բուլճիկների թշնամածը մասնագէտների հանդէպ կրկնակի հարւած հասցրեց խորհրդային արդիւնաբերութեանը և, այսօր, այդ բացը լրացնելու համար, իրար են անցել: Ինչպէս ամէն ինչ, այս խնդիրն էլ փորձում են կարգադրել հարաւաճային կարգով և ամիսների ու մէկ-երկու տարւայ ընթացքում պատրաստել նոր մասնագէտներ: Դժուար թէ այս միջոցը ցանկաւի արդիւնք տայ, որովհետև հարաւաճային կարգով հնարաւոր չէ տիրանալ գիտութեան վերջին խօսքին:

Արդիւնաբերութեան զարգացման արագ թափը, որակաւոր ուժերի պակասը և արհեստագիտական յետամնացութիւնը պատճառ են դառնում արտադրած ապրանքների ցած որակի, աշխատանքի գուր վատտուումի և արդիւնաբերութեան արտադրածի բարձր ինքնարժէքի: Հինգամբ մշտաբար համաձայն, ստալին իսկ տարին ինքնարժէքը պէտք էր իջնցնել 7 տոկոսով. այն ինչ յաջողւել է իջնցնել միայն 3 տոկոսով. իսկ ամենէն համեստ հաշիւներով ինքնարժէքի իջնցւած ամէն մէկ տոկոսը տալիս է մօտ յետոն միլիոն բուրլու խնայողութիւն: Հասկանալի է, որ բարձր ինքնարժէքի շնորհիւ ապրանքը գնորդի ձեռքն է անցնում աւելի թանկ գնելով:

Երկրի արդիւնաբերութեան յաջող զարգացման տեսակէտից ոչ պակաս կարեւոր նշանակութիւն ունի արտաքին առևտուրը: Արտաքին առևտուրի մենաշնորհը գտնուում է պետութեան ձեռքը, հետևաբար, հասաստարակչութեան պահպանումը կախած է իրենից: Որպէսզի հաշիւկշիւր բաց չունենայ, պէտք է ներմուծումից աւելին արտահանել: Քանի որ Երկրի ներքում տիրում է ապրանքի և պարենի սով, ապա, ուրեմն, մեծ քանակութեամբ արտահանումը մեծապէս զրկանքների է մատնում ժողովրդին: Դրա դիմաց, ներմուծելու պայանքներն էլ այնպիսին են, որ ջնեմ ծառայած ժողովրդի անմիջական պահանջներին: 1927-28 թ. արտաքին հաշիւկշիւրը տւել է 171 միլիոն բուրլու բաց: Իսկ հինգամեայ ծրագրի ստալին տարւումը՝ 1928-29 թ. 32 միլիոն բուրլու յաւելում: Այս վերջին գրութիւնը նպաստաւոր չէ ժողովրդի համար, որովհետև արտաքին առևտուրի բացը գոցելու համար ստիպւած է իր բերրի պատտը արտահանել, փոխաբէնը ոչինչ չտաւնալով: Հակառակ զէպքում էլ, հարկադրւած կը լինի արտաքին վնասը լրացնել ներքին նոր տուրքերով...

Ճարտարաբանի բարձրացմանը գուրնիթաց աւելանում է նաև երկրի բիւջէն: Պետական արդիւնաբերութեան յաջողութիւնը, աշխատավորների վճարումը, խորհրդային և հաւաքական տնտեսութիւնների դրա-

մապէս օժանդակելը պահանջում են նորանոր միջոցներ : Խորհրդային երկիրը համարուած թէ Ֆինանսապէս մեկուսացած է արտաքին աշխարհէջ . այնպէս որ, որևէ կարևոր փոխառութեան վրայ յոյս դնել չի կարող : Եւ սովորած, անվերջ թղթազրում են կտրում, որով և ընկնում է շիբոնեցի արժէքը : Այս անկման առաջն ստեղծու համար հիդրամայ ծրագրով նախատեսուած էր տպել ընդամենը 1250 միլիոն ռուբլի : Այն ինչ, միայն ստալինն սարին տպել է այդ դումարի կէսից անկէն (671,4 միլիոն ռուբլի) : Չեղմանցի անկման հետևանքով է, որ հակասական գրութիւն է տիրում սպրանքի սովի, արտադրութեան և սպառման չափի միջև :

Յար և նման դժարութիւնների վերացումն ու տնտեսական խնդիրների լուծումն է, որ առաջին հերթին պէտք է մտահոգի բուլղերիկեան կուսակցութեանը : Բաւական չէ մի քանի թւեր ամբողջարտութեան նիւթ զարձնելով ողջ աշխարհը զգրդացնել խորհրդային տընտեսական նւաճումների մասին : Եւ, իրօք, հինգամեայ ծրագրային երկրորդ տարւայ սեմին, վերը յիշուած դժարութիւններն արդէն իրենց զգալ են տալիս :

Այսպէս խոշոր արդիւնաբերութեան արտադրութեան դումարը հոկտեմբերի համեմատութեանը նոյնմբերին պակասել է 1,7 տոկոսով : Կոշոր արդիւնաբերութեան ճիւղերի մեծ մասը աշխատում է ծրագրով նախատեսուածից շատ անելի պակաս : Իսկ անցեալ տարւայ նոյն շրջանի համեմատութեամբ՝ պակասել է 14,4 տոկոսով : Ուրալի անհասանքներ արդարացրել են առաջադրուած ծրագրի 80,6, Մոսկուայինը՝ 88,4 և Դոնիւնը՝ 93,4 տոկոսը : Նոյնը և մետաղագործութեան և ցեմենտի արդիւնաբերութեան մէջ : Թեթև արդիւնաբերութիւնը չի կատարել ծրագրի 2,2 տոկոսով : Իսկ ինքնարժէքը, 11 տոկոսի փոխարէն իջեցած է ընդամենը 3 տոկոսով («Պրուդա», 5 յունւար, 1930) :

Ընկնողագի նման արդիւնաբերական խոշոր կենտրոնում, արդիւնաբերական սպարներ նոյնմբերին պակասել է 7,2, առանձին սպարների արտադրութիւնը՝ 8,7 և արտադրութեան միջոցների արտադրութիւնը՝ 3,6 տոկոսով (նոյնը սեպտեմբերի համեմատութեամբ հոկտեմբերին պակասել է 13,8 տոկոսով) : Իսկ հումոյթի և ելկտրական ոյթի պակասի ու այլ տեխնիքական անյարմարութիւնների հետևանքով, նոյնմբերին արտադրութիւնը կորցրել է արեւի քան 7000 աշխատանքի օր («Պրուդա», 6 յունւար, 1930) :

Ելկոմուխիսի օրօքմիսի թիւ 10-ի մէջ կարդում ենք՝ «այժմ այլևս կասկածից վեր է, որ արդիւնաբերութեան արտադրանքի որակը դնալով ոչ թէ լուսնում, այլ վառանում է» :

Անձեռնհաս տնտեսաւարութիւնն ու յետամնաց արհեստարկութիւնը թէ էնչպիսի վնասներ են հասցնում երկրի տնտեսութեանը, բաւական է միայն ծանօթանալ հետեւեալ թւերին :

Կտուցւող նոր շէնքերի պատերի չափազանց հաստութեան պատճառով տարեկան սպաւուում է 1500 միլիոն անկ աղւա :

Կաշկործութեան վտանգը կազմում է արտադրութեան մէջ երրորդը (300 միլիոն ռուբլի), իսկ մե-

տադագործութեան մէջ վտանգը հասնում է 70-80 տոկոսի :

Ելկտրական լամպաների գործարանում տարեկան կտարաւում է 560 հազար ռուբլու ապակի :

Միայն Արխանգելսկի շրջանում տարեկան փշանում է 400 հազար թօն փայտի թեւի . մի նիւթ, որն արտասահմանում լայնօրէն օգտագործուած է և նոյն իսկ արտահանուած :

Դոնի աւազանի հանքերում փորող մեքենաներն օգտագործուած են միայն 25 տոկոսով : Մի շարք գործարաններում մեքենաներն օգտագործուած են հնարաւորութեան 50-70 տոկոսով :

Կենսամթերքների արդիւնաբերութեան մէջ տարեկան փշանում է 200 միլիոն ռուբլու սպրանք : («Պրուդա», 10 և 19 յունւար, 1930) :

Առանց այս բացերի վերացման անհնար է Խորհրդային Միութիւնը ճարտարաբանական երկրի վերածել :

Անցնենք դիւղին :

Խորհրդային տնտեսական քաղաքականութեան մէջ առաջնութիւնը տրուած է ճարտարաբանասացումին, որ և պատճառ է դառնում, որպէսզի գիւլատնտեսութեան զարգացման թափը դանդաղօրէն առականայ : Թոյլ է զարգանում, մասնաւոր, գիւլատնտեսութեան հացահատիկի մասը և գիւղը ի վիճակի չէ բաւարարելու արդարնակութեան պահանջներին : Սակայն, որքան էլ որ գիւլատնտեսութեան աճումը յիս մնաց քաղաքի արդիւնաբերութիւնից, անհերքելի փաստ է, որ խորհրդային ժողովրդական տնտեսութեան մէջ գերակշռող դեր է խաղում գիւղը՝ իր 26 միլիոն անհատական տընտեսութիւններով : Հէնց այս մանր գիւլացիական տընտեսութիւնների գոյութեան մէջ են տեսնում բուլղերիկեաները գիւղի յետամնացութեան բուն պատճառը : Եւ քանի որ գիւլատնտեսութեան մասրութիւնը խոշորոտ է ժողովրդական տնտեսութեան զարգացման համար, ապա, ուրեմն, մասր տնտեսութիւնների խոշորացումը հրամայական անհրժեշտութիւն է դառնում : Այստեղից էլ առաջանում է հաւաքական (կոլլեկտիւ) տնտեսութիւնների յղացումը :

Բուլղերիկեաների տեսակէտով, խորհրդային երկրներում գիւլատնտեսական արտադրութեան կենտրոնացումը ընթանում է ոչ թէ դրամատիրական երկրներում տեղի ունեցող կենտրոնացման ուղիներով, այլ ընկերվարական եղանակով : Եթէ տնտեսութիւնների խոշորացման դրամատիրական ձևը տեղի է ունենում ի հաշիւ մանր և միջակ տնտեսութիւնների ոչնչացման և դրանց հողից ու արտադրութեան միջոցներից զրկման, ապա խորհրդային կենտրոնացման ձևը չի հակադրում մանր անհատական աշխատաւորական տնտեսութեան : Այս մասին, «Գիւղի կոմունիստ» ամսագրի անցեալ տարւայ յուլիսի համարում կարդում ենք :— «Խոշորացած տնտեսութեան վերելքը և զարգացումը չի պայմանաւորում մանր, անհատական տնտեսութեան ոչնչացումով (բարեկեցութեան անկման իմաստով), այլ ընդհակառակն, այդ խոշորացած, համայնացած

արտադրական պրոցեսով անտեսութիւնը դառնում է օգնող մանր անհատական անտեսութիւններին, սրանց օրինակը և սրանց զարգացման ուղին ցոյց տւողը» :

Վեց ամիս առաջ եղած նման մի յայտարարութիւն ցոյց է տալիս, որ Հինգամեայ ծրագիրը կազմելու բողոքները որևէ միտում չեն ունեցել ոչնչացնելու անհատական տնտեսութիւնները: Ընչհակառակն, ծրագիրը կազմողներն ի նկատի ունէին, որ առաջիկայ 5 տարիներում գիւղատնտեսական մթերքների արտադրողները լինելու են գլխաւորապէս անհատական արտեսութիւնները: Բայց ներկայիս, Հինգամեայ ծրագրի երկրորդ տարւայ սկզբին, բոլշևիկները բոլորովին տարբեր տեսակէտներ են յայտնում: Որպէս գործնական առաջադրում, որոշում են հաւաքական տնտեսութիւններէ միջոցով գիւղացուն, որպէս անհատական արտադրողի, իսպառ վերացնել ասպարէզից:

Նոր տնտեսական քաղաքականութեան սկզբնական տարիներին, գիւղացին, լայնօրէն օգտւելով որոշ իրաւունքներից, հնարաւորութիւն ունեցաւ իր տնտեսութիւնը վերականգնել: Այդ շրջանում գիւղի կարեւորութիւնն այնքան զգալի էր երկրի կենտունականութեան տեսակէտից, որ նոյնիսկ իշխանութիւնը սկսեց սիրաբանի սեփականատէր գիւղացու հետ: Գիւղի և քաղաքի միջև տնտեսական կապը պահպանւում էր առևտուրի պազը շրջանառութեան ճանապարհով:

Երբ գիւղի տնտեսական կայունացումը հնարաւորութիւն տւեց պետութեանը ձեռնարկել քաղաքի արդիւնաբերութեան վերականգման աշխատանքներին, այդ ժամանակ իշխանութիւնը իր արամադրութեան տակ եղած բոլոր միջոցները գործադրեց զարկ տալու համագործակցականին և սրա միջոցով կապել գիւղը քաղաքին: Առևտուրի մենաշնորհն իր ձեռքում ունենալով, պետութիւնը մի քանի տարիների ընթացքում կարողացաւ հրապարակից զելլ մասնաւոր առևտրականին և գիւղը պատել համագործակցականի ցանցերով: Չնայած այդ յաջողութեանը, իշխանութեանը չի յաջողում կտրել գիւղացի արտադրողի դիմադրական կորովը, որովհետև գիւղացին հանդիսանում էր, որպէս անհատ-սեփականատէր: Իշխանութիւնը դիմեց բռնի միջոցների՝ հալածանք, տուրքերի յաւելում, պարենի բռնադատում և այլն: Այդ քաղաքականութեանը որպէս պատասխան գիւղացին թաղացրեց պարենի և կրճատեց ցանքերի արածութիւնը: Երկիրը կրկին պարենաւորման ճգնաժամի մէջ ընկաւ:

Գիւղի և քաղաքի պայքարի ամենածայրայեղ սրման պայմաններում էր, որ բոլշևիկները ձեռնարկեցին արդիւնաբերութեան վերակառուցումը: Պարզ էր, որ առանց գիւղի օժանդակութեան չպիտի յաջողել վերակառուցումը մեծ չափերի հասցնել: Իսկ գիւղը բացառապէս թշնամանք ունի իշխանութեան հանդէպ: Եւ որպէսզի ազատարարէր սեփականատէր գիւղացու տնտեսական գերիշխանութիւնից, բոլշևիկ կուսակցութիւնը որոշում է ոյժ տալ խորհրդային (պետական) և հաւաքական տնտեսութիւններին՝ այնպիսի չափերով, որ հնչածեայ ծրագրի վերջին տարին հացի արտադրութեան ապրանքի մասի 40 տոկոսը ստացւի այս երկու տնտեսութիւններից:

Հնգամեայ ծրագիրը նախատեսում էր հաւաքա-

կան տնտեսութիւնների ցանքերի տարածութիւնը հասցնել 22-24 միլիոն հեկտարի (ամբողջ ցանքերի հինգերորդ մասը): Մակայն, առաջին տարւայ յաջողութիւնն այնքան ռեկորեց բոլշևիկներին, որ որոշել են առաջիկայ իսկ զարեանը ցանքերի քանակը բարձրացնել 30 միլիոն հեկտարի, յարնքն՝ աւելին, քան պէտք է արեւը հինգ տարւայ ընթացքում: Նոյնպէս որոշւել է 1930թ. աշնանը հաւաքական տնտեսութիւնների վերածել ամբողջ Հիւսիսային կովկասը և Միջին ու Ներքին Վոլգայի շրջանները, իսկ միւս ցորենաշատ շրջանները՝ 1932թ. գարնանից ոչ ուշ:

Բնակաւնարար, հաւաքական տնտեսութիւնների այսքան լայն չափերով ընդգրկած քաղաքականութիւնը չէր կարող չանդրադառնալ անհատական տնտեսութիւնների ճակատագրի վրա: Եւ, իրօք, «Պրաւա»-յի յունւար ամսւայ խմբագրականների և յօդւածների մեծ մասը ներում են այդ խնդրին: Անգամ ինքը Ստալինն արտայայտեց (յունւար 21):

Այս նոր քաղաքականութեան էութիւնը հետեւեալն է —

Մինչև այժմ բոլշևիկները նպատակն է հղել միայն սոցիալական ունեւոր գիւղացու դէրը երկրի տնտեսութեան մէջ: Այժմ, երբ արդէն շնորհիւ հաւաքական տնտեսութիւնների իրենց ոտքերի տակ նիւթական ամուր պատւանդան ունեն, ապա ուրեմն հնարաւոր է «վերջնականապէս ոչնչացնել գիւղի ունեւոր տարրերին»: Մասնաւոր, երբ բնիկարութեան կառուցումը խորհրդային աշխարհում այլևս հեռաւոր ապագայի խնդիր չէ, որի «իրականացումը կհանրում պէտք է տեսնեն մեր թոռները, — ոչ, արդէն ներկայիս յստակօրէն շօշափում ենք բնիկարական տնտեսութեան հիմքերը» (19 յունւար, 1930)...

Բոլշևիկները գիւղացիական քաղաքականութիւնն էր, որ առաջացրեց ընդդիմադիր աջ շարժումը: Աջերի տեսակէտով երկրի ճարտարաբանապետութիւնը յաջողութիւնն իսկ պահանջում է նախ զարկ տալ գիւղական տնտեսութեան և մանր արդիւնաբերութեան զարգացմանը:

Գիւղատնտեսութիւնը կանի այն դէպքում միայն, երբ պահպանեցի գիւրհարը, վերացւի ունեւոր տնտեսութիւնների առանձին հարկահանութիւնը, ինչքան անհրաժեշտ ապրանքների գները, անխտիր բոլոր գիւղացիներին թոյլատրելի մասնացել համագործակցականներին, գիւղում վերջ տրել ռազմական կոմունիզմի մնացորդ կարգերին, զարգանալու ազատութիւն տրել տնայնագործութեանը և արհեստներին և, վերջապէս, աւելի ոյժ տրել արդիւնաբերութեան այն ճիւղերին, որոնք մասնակարարում են գիւղացուն գործիքներ և մշակութեան անհրաժեշտ նիւթեր: Բացի այս, աջերն առաջարկում են գիւղում արհեստականորէն չարել դասակարգային պայքարը և գոհանալ ունեւոր տարբերին զրկելով ընտրական իրաւունքից: Իսկ երբ կուսակցութիւնը ստորքերի յաւելումով փորձում է մնչում գործ դնել ունեւոր տարբերի վրա, դրանով հարւածում է նաև միջակ գիւղացիութեանը:

Բուխարինը յայտնում է հետեւեալ տեսակէտը: Արտաքին ու ներքին կառուցողներում բանւոր դասակարգը յաջթող հանդիսացում և երկրում հաստատեց

իր տիրապետութիւնը: Իշխանութեան գլուխն անցնելուց յետոյ, այլևս կարիք չկայ երկրի ներսում քաղաքացիական կրիւն ստեղծելու, քանի որ այսուհետև անտեսական ձևերի պայքարը ընթանալու է բարձրջջական ճանապարհով: Երկրի տնտեսութեան համար փաստագուր է, երբ հսկայական միջոցներ են կենտրոնացնում անտեսութեան աշխարհի հաստատները շուրջ, որոնք արդիւնաւէտ կարող են լինել միայն սարկինթ յետոյ: Գիւղացիութեանը, ինչպէս Լենինն է ամփոփեցրել, պէտք է շահագրգռել իր օգուտի տեսակէտից և համադրուակցական միջոցով տանել դէպի ընկերավարութիւն:

Ստալինի թեւը, ավերին ի պատասխան, հրապարակ նետեց «գասակարգը դասակարգի դէմ» նշանաբանը և կրկնակի ոյժ տուց հաւաքական տնտեսութիւնների քաղաքականութեանը: Իսկ Բուխարինին էլ ներքեցին, յայտարարելով, թէ համադրուակցական առելով, Լենինն ի նկատի է ունեցել գիւղական տնտեսութեան հէջը հաւաքական ձևը... Տուրքերի յաւերժումով, մասնաւոր անտեսութիւններին մեքենաներ մեքենելով, վարկից դրկելով և բունարբանելով ու շիկացած երկաթով սեփականատէր գիւղացուներն այնպիսի պայմանների մէջ դրեցին, որ միակ փրկութեան ճանապարհը մտում էր՝ պատասպարել հաւաքական տնտեսութիւնների մէջ: Ահա՛ թէ ուր է հաւաքական տնտեսութիւնների յաջողութեան գաղտնիքը:

Հաւաքական տնտեսութիւնների երեք տեսակները կան, — հողը համայնորէն մշակող ընկերութիւն, արտել և կոմունա: Առաջինը հաւաքական տնտեսութեան ամենապարզ ձևն է. միացնում են իրենց հողը և համայնորէն մշակում. իսկ տնտեսութեան մնացած ճիւղերը վարում են անհատորէն: Կոտավարութիւնն այս տնտեսութիւններին տրամադրում է ձեռնուռ պայմաններով գործիքներ և վարկ: Արտել կազմողները պարտաւոր են համայնացման ենթարկել նաև իրենց սեփական արտադրութեան միջոցները՝ գործիքներ, շինքեր և անասուններ:

Առաջին ձևի հաւաքական տնտեսութիւնների մէջ, ինչպէս փաստերը ցոյց տւին, միանում է գիւղացիութեան խոշորագոյն հատածը: Արտելներ են կազմում մեծ մասամբ ընչապտրկները՝ պետութիւնից լծկան և միջոցներ ստանալու յոյսերով:

Իրւնկիւններին ձեռնուռ է արտելների ձևը: Նախ, գիւղացին վերջնականապէս գրկուում է սեփականութիւնից: Երկրորդ, գիւղացին աւելի կախում ունի պետութիւնից և, հետեալաբար, պետական հսկողութիւնն աւելի ուժեղ է: Խորհրդային իշխանութիւնը, հսկողութեան տակ աւանդով գիւղական տնտեսութիւնը, յոյս ունի իր ցանկացած ուղիով տանել և վերջնականապէս իրեն ենթարկել գիւղական արտադրութիւնը: Գիւղացին գրկելով հողից և գործիքից, իրաւագութիւ վարձու բանտրի վիճակի մէջ է ընկնում, որի աշխատանքի ամբողջ արդիւնը պետութիւնն ինքն է կարգաւորելու իր ուզած ձևով: Գիւղացին կը ստանայ միայն իր բաժին հացն ու մթերքը այն չափով, որ բաւարարի ըն-

տանիքի սնդամներին: Ուրիշ խօսքով, ճորտապիլութեան վերահաստատում ընկերավարական պիտակի տակ:

Այլերն այսպէս էլ բնորոշեցին խորհրդային ներկայ քաղաքականութիւնը գիւղում՝ «գիւղացիութեան վիճակի վերաբերյալ» (Պրաւդա, 26 նոյեմբ. 1928): Իսկ նման պայմաններում, պարզ է, որ գիւղատնտեսութիւնը ծաղկել չի կարող:

Վերջին տեղեկութիւնների համաձայն, համայնացումից խուսափելու համար, գիւղացիութիւնն սկսել է ունշացնել գործիքները և ծախել ու մորթել անասուններին: Եւ այնպիսի շափերով, որ յուշուար 16-ի հրամանով, կառավարութիւնը պատժական նոր օրէնքներ սահմանեց, որով մինչև երբու տարի բանտարկութեան և սոացւածքի բռնազրուածան են ենթարկուում այն գիւղացիները, որոնք գիտաւորաւ կը ծախեն կամ կը մորթեն իրենց անասունները:

Երկրորդ՝ գիւղացիութիւնը, առյուծ շղիմանալով հարստահարութիւններին, սկսել է դանդաձօրէն գաղթել: Արդէն մի քանի հազար ընտանիքների յաջողւել է անցնել արտասահման:

Իացի այդ, արդէն գիւղում, ինչպէս Բուխարինն էր նախատեսում, քաղաքացիական կրիւն սկսել է: Վերջին ամիսներին օրկական, միջին հաշուով, խորհրդային երկրներում գնդակահարուում են երեքեց հինգ հոգի...

ԱՇՈՏ-ԱՐՄՐՈՒՆԻ

Սոյն յօդւածն արդէն մամուլի տակ էր, երբ ստացեցին «Պրաւդա»-ի վերջին համարները: Յունւար 25-ի թիւ առաջնորդողի փոխարէն սուլած է կենտրոնական կոմիտէի կոշը, ուղղւած՝ կուսակցական, օրհնատակցական, կոմերիտասարդական և տնտեսական կազմակերպութիւններին:

Կոշի մէջ կենար. կոմիտէն յորդորում է բոլոր կազմակերպութիւններին աւելի գործած ու եռանդուն աշխատանք տանել տնտեսական ճակատում, որովհետև, ինչպէս վերջին ամիսների թւերն են ցոյց տալիս, արդիւնաբերական ծրագիրը լրիւ չի կատարում: Իսկ մի քանի ճիւղերում, «թեքացումը ոճբագործութեան աստիճանի է հասնում»: Առանձնապէս կազում են ածուխի, մետաղի, քիմիական արդիւնաբերութեան, մթերքի արտադրութիւնը և ինքնարժէքի իջեցումը (միայն ածուխի արտադրութիւնը, տնտեսական տարւայ առաջին եռամսեակին, պակասել է 860 հազար թծով):

Կենտրոնական կոմիտէն այս բոլոր թերութիւնները վերաբրում է վերը յիշւած կազմակերպութիւնների թոյլ գործունէութեանը: Եւ եթէ այդպէս էլ շարունակւի, հիւպամեայ ծրագրի իրագործմանը վտանգ է սպառնում: Իսկ թէ կենտրոնական կոմիտէի տնտեսական քաղաքականութիւնն այս խնդրում ինչ դեր է խաղում, ի հարկէ, այդ մասին ոչ մէկ խօսք...

Ա. Ա.

### ՓՐԱՆՍՄԱՆՅԻ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ՏԵԳՆԵՎՐ

(Յունւար 25-26 ի համագումարին առքիւ)

Յունւար 25-26 Փարիզի ժան-փօրէս սրահին մէջ արտակարգ համագումար ունեցաւ Ֆրանսայի ընկերվարական կուսակցութիւնը՝ լուծելու համար քաղցքնի կառավարութեան մը մասնակցութիւն բերելու կնճռոտ խնդիրը, որ աւելի քան երեսուն տարւան պատմութիւն մը ունի:

Կարժէ քանի մը լուսաբանութիւններ տալ խնդրի անցեալին վրա:

1870-71 ի Ֆրանքեփրման պատերազմէն յետոյ, հանրապետական Ֆրանսայի մէջ ընկերվարական կուսակցութիւնը վերակազմեցաւ և նոր թափով մը սկսաւ հետզհետէ նոր արմատներ ձգել: Հակառակ կարգ մը հատուածական խմբակցութեանց (Պլանքիի, Ալմանի, Պրուսիի և այլն կուսակիցներ) գոյութեան, մօտ 30 տարի, այսինքն մինչև 1904 զարաւ վերջին տարիները որոշ միութիւն պահուեցաւ Ֆրանսայի ընկերվարական կուսակցութեան ծոցին մէջ: Այդ միութիւնը հիմնաւ չէր Կարլ Մարքսի էական վարդապետութեանց վրա և ուղղափառ մարքսական մը՝ ժիւլ Կէտ իր բարձր հեղինակութեամբ ուղղութիւն կուտար կուսակցութեան:

Այս վերջինիս ուղղափառ մարքսականութիւնը ի յայտ կուգար ոչ միայն տեսարանական հարցերու, այլ գործընկերայի խնդիրներու մէջ՝ վերջնական նպատակ ունենալով ընկերային յեղափոխութիւնն ու արտադրութեան բոլոր միջոցներու ընկերվարացումը:

Ընկերվարական կուսակցութիւնը կը հետապնդէր ընդհամարեալ դիրք՝ դասակարգային պայքարի հիման վրա: Լա յնօրէն կօտազործէր ժողովուրդին քեշարկութեան գէնքը՝ օրէնսդիր ժողովներու մէջ իր ներկայացուցիչները ունենալու և խորհրդարանին մէջ ընկերվարական սկզբունքներ բխած օրէնքներ քեշարկել տալու համար: Այս ձեւով ընկերվարականները կը յուսային մեծամասնութիւն ձեռք բերել խորհրդարանին մէջ և օր մըն ալ իշխանութիւնը ձեռք առնել ամբողջութեամբ՝ օրինաւոր ճամբով, առանց զինելու յեղափոխական բռնու միջոցներու: Սակայն, մինչև այս նպատակին հասնելը ընկերվարական կուսակցութիւնը պիտի մնար զօտ ընդդիմադիր գերբնի մէջ՝ հանդէպ բոլոր քաղցքնի կառավարութեանց և կուսակցութեանց ընկերվարական երեսփոխաններուն բացարձակպէս արգելւած էր մասնակցութիւն բերել օրէն քաղցքնի կառավարութեան, որքան ալ յուսաւորէր և արդարական սարբերէ կազմուած ըլլալ անկէպ: Այս քաղաքականութիւնը հիմնուած էր այն սկզբունքին վրա, թէ ո՛չ մէկ ընկերվար գործ կարելի է կատարել և ընկերվարութեան նպատակներն իրագործել, որքան ատեն որ կանգուն կը մնան զրամատիրական-քաղցքնի կարգերը:

Մէկ խօսքով, դասակարգային պայքարի սկզբունքը թոյլ չէր տար օրէն իրաւախոհութեան դալ կամ գործակցիլ քաղցքնի կուսակցութեանց հետ, այլապէս ընկերվարութիւնը կը մեղանչէր իր կոշման դէմ և պայքարը կը կորսնցնէր իր թափը:

Տեսարանական այս սկզբունքը, սակայն, կարելի չէզաւ անաղարտ պահել գործնական կեանքի մէջ և 1895էն սկսեալ շեղումներ կատարեցան և անիշխանականներու դէմ քեշարկուած խիստ օրէնքի մը առթիւ, ընկերվարականները դուրս եկան իրենց ընդդիմադիր գերբնի և քեշարկեցին ի նպատակ կառավարութեան: Ընկերվարական էական սկզբունքներու դէմ մեղանչումը ուշադրաւ երևոյթ դարձաւ 1899 յունիսին, երբ ընկերվարական երեսփոխան մը՝ Ալեքսանդր Միլլան (որ յետոյ Հանրապետութեան նախագահ եղաւ) մտաւ Վալտէ-ճիւտոյի ցաղափառ դահլիճին մէջ՝ իբրև առևտրական և հանրօգուտ շինութեանց նախարար: Այդ օրերուն բռնկած էր Տրէյֆիւսի ծանօթ խնդիրը, հանրապետութիւնը վտանգի մէջ էր և Վալտէ-ճիւտոս կը չկողմնէր հանրապետական բոլոր կուսակցութեանց՝ փրկելու վարչաձևը:

Միլլան դահլիճին մէջ մտաւ, առանց ընկերվարական կուսակցութեան հաւանութիւնն առնելու: Այս դէպքը հերձուած առաջ բերաւ կուսակցութեան ծոցին մէջ: Փօրէս և Կէտ Տրէյֆիւսի խնդրին առթիւ արդէն լարած էին: Փօրէս կը պաշտպանէր Տրէյֆիւսի արդար դուրը, իսկ Կէտ անտարբեր կը մնար՝ քարոզելով, որ քաղցքնի շարժքները կը դարձանէին միայն զրամատիրական կարգերու անհետացումով: Ընկերվարականի մը այս ձեւով նախարար դառնալէն յետոյ, Երկու հատուածներու միջև պառակտումը աւելի ևս շեշտուցան: Փօրէս և Համախոհները բոլորովին հակասակ չէին, որ ընկերվարական մը մտնէ քաղցքնի դահլիճի մէջ, ու այդ հարցը կը նկատէին ոչ թէ սկզբունքի, այլ գարծելակերպի խնդիր: Ժիւլ Կէտը կուսակիցներուն համար սկզբունքի հարց էր ատիկա: Անոնք աննրեւի յանցանք կը նկատէին ընկերվարականի մը նախարար դառնալը, յանուն Մարքսի ուղղափառ վարդապետութեան:

Ֆրանսայի մէջ ծագած այս խնդրը շուտով ստացաւ միջազգային հանդամանք և անցաւ Բ. Միջազգայինի համագումարներու օրակարգին մէջ: Արտոյայի զանազան երկիրներու ընկերվարական կուսակցութիւններն ևս զբաղեցան անով: Ընկերվարական մը կրնայ նախարար ըլլալ քաղցքնի դահլիճի մը մէջ:

1900 ին Փարիզի մէջ գումարակցաւ Բ. Միջազգայինի հերթական համագումարը: Մասնակցութեան հարցը օրակարգի զլսաւոր հարցերէն մէկն էր: Երկար

վիճարանութիւններէ յետոյ գերման սոցիալ-դեմոկրատիայի յայտնի տեսարան կարգ կառուցելի պաշտօն տրուեցաւ դեռեկ այնպիսի բանաձև մը, որ միանգամ ընդմիջտ վերջ տար բանալէճին և հաշտեցնէր երկու հակառակորդ հասուածները: Կառուցելի պաշտօնը շատ դժուար էր: Ու ինչպէս կիրլայ, առհասարակ, նման պարագաներու, գերման տեսարանն ալ խմբազբեց «գիււանազիտական» բանաձև մը, երկու կողմին ևս հաճելի ըլլալու համար: Ահա՛ միջ բանաձևը.

« . . . Եթէ որևէ բացարկիկ պարագայի մէջ քաղաքական վիճակը անհրաժեշտ դարձնէ այդ վտանգաւոր փորձը, ասիկա գործիակերպի խնդիր է և ոչ թէ սկզբունքի: միջազգային համագումարը չի կրնար վերստի այդ մասին»:

Այս բանաձևն ընդունեցաւ համագումարին կողմէ, հակառակ կէտի և ընկերներու բողոքին:

«Քաջատիկ պարագաներու» խնդիրը 30 տարիէ ի վեր անդիլը վէճերու դուռ բացած և անպիսի քառակուսիներ մեկն սպասել տա՞ծ է, աստուք, սակայն, վերջնական լուծում մը պարտադրելու: «Քաջատիկ պարագան» առաձգական բացատրութիւն էր և կրնար ենթակարգական դանդաղ մեկնութիւններ տեղի տալ: Ուստի և Փարիզի համագումարը չհասաւ իր նպատակին և չլքեցաւ հաշտեցնել երկու հակամարտ հասուածները:

1904 ին Ամսթերտամի ընկերվարական համագումարը նոյնպէս գրադրեցաւ այս խնդրով և որոշեց սկիզբունքով թէ ընկերվարական կուսակցութիւնը կրնայ, և, ի հարկին, պարտի համաձայնութեան գալ թողքենի յառաջալէճ հասուածներու հետ, որոշ նպատակներ առաջ տանելու և որոշ դատեր պաշտպանելու համար: Վալտէք-Ռուսօի և Գոնպի օրով Փրանսական խորհրդարանին մէջ ապաստան և յոռաձայնէ՛ տարբեր մեծամասնութիւն կը կազմէին և ընկերվարականներու գործակցութիւնը անոնց հետ ունեցաւ որոշ օպտակարութիւն:

1905 ին համերաշխութիւն Կոյսցալա Տրանսայի ընկերվարական կուսակցութեան հակամարտ հասուածներու միջև և յունւար 13 ի Ընդիանուր Յայտարարութիւնով ընկերվարական կազմակերպութիւնները միացան իբրև « Տրանսպակն Հատուած Բանտրական Միջկազմային (S. F. I. O.): Այստեղ ալ ընդունեցաւ նոյն սկզբունքը:

1911 ին Մոնիս-Պերթօ-Քայնօ արժատական դաշինքը կազմեցաւ ընկերվարականներու աջակցութեամբ: « Բացարկիկ պարագաներ » մղած էին ընկերվարական կուսակցութիւնը՝ ոյժ տալ ազատական կառավարութեան մը:

Իսկ համաշխարհային պատերազմի ընթացքին, երբ «բացարկիկ պարագաներ» մասին երկու կարծիք չկար, իբրև անպաշտօն նախարար, Քաղքենի դաշինքին մէջ մտաւ նոյն ինքն ժիւլ Կէտ՝ մասնակցութեան կառույթի հակառակորդը. իրեն հետևեցան նաև ուրիշ երկու ակախուոր ընկերվարականներ՝ Մարսել Սանդա և Ալպիս Թոմա, որոնք երեքն ալ 1914 օգոստոսէն մինչև 1916 ի վերջը մաս կազմեցին «Ազգային Պաշտպանութեան» կառավարութեան:

Ժիւլ Կէտի այս ընթացքը խստիւ քննադատեցաւ

միջկազմային ընկերվարական շարքերու մէջ, ու Լենին գլուսճանութիւն որակեց այս քայլը, հիմնւած անոր խօսած մէկ ճտօրն վրա՝ 1893 ի համաշխարհային մէջ: Պատասխանելով Լենինին, Ժիւլ Կէտ կը գրէր.

— «Ինչպէս որ խաղաղութիւն ժամանակ և ընկերային հարկերու մէջ դասակարգերու քաղաքական և կառավարական գործակցութիւնը պէտք է դատապարտուի իբրև ամենալատ խաբէութիւն մը՝ քանի որ կը ձգտի պիտակամանը «դրամատիրական ընկերութեան», որուն կործանումը անհրաժեշտ է՝ ազատագրելու համար աշխատանքի ու մարդկութիւնը, այնպէս ալ արշաւանքի պարագային և ազգային պաշտպանութեան խնդիրներու առիթի այդ գործակցութիւնը կը զրոնայ ընկերվարական կամ պարտակամութիւն, քանի որ կը ձգտի «պիտակամանի սպիտակ», որ միանգամայն անհրաժեշտ տարրն է այսօրվան բանտրական գործողութեան և պայմանը վաղուան Միջազգին»:

Այսպէս, ուրեմն, Տրանսայի ընկերվարականներուն մեծ տեսարանը՝ Ժիւլ Կէտ մինչև վերջ մնաց հակառակորդ մասնակցութեան տեսակետին, բացի պատերազմի ընթացքին իր ունեցած մէկ շեղումէն:

Մեծ Պատերազմէն վերջ, կրկին ործարձեցաւ քաղքենի դաշինքներու մասնակցութեան և Քաղքենի կուսակցութեանց հետ գործակցութեան խնդիրը:

1919ի ընտրութեանը մէջ ընկերվարական և արժատական պատգամաւորներ փոքրամասնութեան մէջ մնացին և կուսակցութիւնը որոշեց պահել իր ընդդէմադիրի դերը խորհրդարանին մէջ:

1920 ին՝ Թուրի համագումարին մէջ համայնավարները գտուեցան ընկերվարականներին և առանձին կուսակցութիւն կազմեցին: Տրանսայի ընկերվարական կուսակցութիւնը վերակազմութեան ենթարկեցաւ 1921 փետրարին Փարիզի համագումարին մէջ: Այս վերջինը, կերպով մը, կուսակցութեան Սահմանադիր Ժողովը եղաւ, ու Թուրի մէջ բանաձևւած բերանացի համաձայնութիւնները միաձայնութեամբ զբաւոր որոշումներու վերածեցան:

Նախկին համագումարներու մէջ մասնակցութեան խնդրի մասին ընդունւած բանաձևերու ամբողջութիւնը այժմ կը ճանչցի «Կուսակցութեան Սահմանադրութիւնը» անունով: Այդ բանաձևերը բոլորն ալ հակառակ են նախարարական մասնակցութեան սկզբունքին, հետևաբար, բոլոր անոնք, որ կուսակցի են մասնակցութեան, ըստ վարիչ մարմին, հակառակ են «Կուսակցութեան Սահմանադրութեան» և չեն գիտեր անոր էական սկզբունքները:

Այս «Սահմանադրութիւնը» կը հաստատէ թէ՛ « ընկերվարական կուսակցութիւնը դասակարգային պայքարի կուսակցութիւն մըն է».

Թէ՛ «Ընկերվարական Ժողովրդավարութիւնը չի կրնար որևէ մասնակցութիւն փնտել Քաղքենի ընկերվարական կառավարութեան մէջ» (բացի այն բացարկիկ պարագաներէն, որոնց մասին կը խօսի Կատեցի):

Թէ՛ «Ընկերվարական կուսակցութիւնը կը մնայ միշտ հիմնական և անզիջող ընդդէմադիր կուսակցութիւն մը հանդէպ ամբողջ Քաղքենի դասակարգին և պետութեան՝ որ անոր գործիքն է».

թէ՛ «Աշխատանքներուն ի նպաստ օգտագործելով՝ Հանգիւրձ սեփականատէրերու երկրորդական վէճերը և շնորհակցումով բանտուր դասակարգին պահանջած անմիջական բարենորոգումներու իրագործումը, ընկերվարական կուսակցութիւնը ս'չ թէ բարենորոգչական, այլ յիպոփոխական կուսակցութիւն մըն է»:

Թէ՛ «Կուսակցութեան ընտրականները Ռորհրդարանին մէջ կը կազմեն միակ խմբակցութիւն մը Հանգիւրձ քաղաքին քաղաքական համաձայնութիւն»:

Թէ՛ «Մ'չ ձայներու խմբակցութիւնները, ոչ ալ նախարարականութիւնը — դատապարտած տեսարանականներն և փորձով — յանդուրժեան ամենազոյցն պատահութիւն պիտի դառնն ընկերվարական կուսակցութեան շարքերուն մէջ»:

Ահա՛ թէ ինչպէս կը բացատրէ այդ «Ահաճանագրութիւն» ը՛ կուսակցութեան օգնական-քարտուղար Ալվարաք, մասնակցութեան կատարելի նախադրուք մը:

1921 ի խորհրդարանային ընտրութեանց ատեն, երբ ընկերվարական կուսակցութիւնը տեսաւ պէ՛ ընտրական օրէնքի անհեթեթութեան պատճառաւ արհեստի շինարարական ատակալի «Ազգային խմբակցութիւն» (Պրոք Նախտնայ) անունին տակ Համախմբուած աջ-պահպանողական մեծամասնութիւնը, ժամանակաւոր զինակցութիւն կնքեց արմատական-ընկերվարական կուսակցութեան հետ, «մէկ պայկեան»ի դաշնակցութիւն՝ ձախ թեկնածուներու ընտրութիւնը յաջողցնելու համար:

1925ին էրիտի արմատական-ընկերվարական դահլիճին ոյժ տալու և աջ տարբերու դէմ դաշն պաշտպանելու համար, ընկերվարական կուսակցութիւնը տեսաւ պահպանողական օրոշումներ, առանց, սակայն, արտօնելու ընկերվարական երեսփոխանները, որ մտնեն ձախ դահլիճի մը մէջ: Ուրեմն, գործակցութիւնը ընտրական պայքարին և խորհրդարանային քաղաքականութեանց պահուն միայն ի յայտ պիտի դար:

1926 յուլիսին տապալեցաւ արմատական-ընկերվարական կառավարութիւնը և կրկին իշխանութեան գլուխ անցաւ Ազգային խմբակցութիւնը:

1927 ապրիլին կուսակցութեան ԻԳ. համագումարը՝ Լիտնի մէջ անժամանակ դատաւ կրկին քննել գործակցութեան խնդիրը և քաղաքական բանաձև մը, որով կը ճշտէ իր դիրքը՝ մէկ կողմէն արմատականներու, միւս կողմէն Համայնապաշտներու հանդէպ:

1928 ի խորհրդարանային ընտրութիւններէն վերջ, նոյն տարան մայիսին, Թուրքի մէջ դուժարած ԻԵ. համագումարը քաղաքական բանաձև մը, որով կը ճշտէ իր դիրքը՝ մէկ կողմէն արմատականներու և կանոնաւոր ընդդիմադիրի դիրքը»:

Գանի մը ամիս վերջ, 1928 նոյեմբերին, Անժէի մէջ տեղի կուճենար արմատական-ընկերվարականներու համագումարը և այս կուսակցութեան պատկանող 4 նախարարներ իրենց հրատարականը կուտային Փուանքարէի Ազգային Միութեան դահլիճէն: Այս առթիւ հրահրելու ընկերվարական խորհրդարանային խմբակցութեան յայտնելու թէ՛ ի հարկին, ընկերվարականները կուզէին՝ արմատականներուն հետ միասին ստանձնել կառավարութիւն կազմելու պատասխանատուութիւնը: Նոյեմբեր 11 ին ընկերվարական կուսակցութեան վարիչ մարմինը և խորհրդարանային խմբակցութիւնը ժողով գումարեցին՝ այս մասին որոշման մը յանդէպ համար: Սակայն, արդէն նախարարական տաշնապը լուծուած էր և Փուանքարէի կազմած իր «Զինանապարի դահլիճ», ստանց արմատականներուն: Ընկերվարական այս ժողովը քաղաքական բանաձև մը, որով կը յայտարարէ թէ՛ «Ընկերվարական կուսակցութեան կառավարական կառավարութիւնը պաշտօնին ու պարտաւորութիւնը: Այսինքն, կուսակցութիւնը չի գործակցի ուրիշներու հետ դահլիճ կազմելու համար, սակայն, ինքն առանձին պատրաստ է ստանձնելու իշխանութիւնը:

Կացութեան մէջ որեէ փոփոխութիւն չէր մտած, երբ 1929 յունիսին Նասաիի մէջ դուժարեցաւ ԻԶ. համագումարը, միանձնութեամբ Հաստատելով Թուրքի մէջ ընդունուած սկզբունքը:

Ամիս մը վերջ — 1929 յուլիսին — Փուանքարէ կը հրատարակէ և իրեն կը յաջորդէր Պրիան, առանց որեէ փոփոխութիւն մտցնելու դահլիճ կազմին մէջ:

Հոկտեմբերի խորհրդարանային վերամուտին, Պրիանի դահլիճ տապալեցաւ՝ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ հարցապնդումներու թեւականը ճշտելու առթիւ: Հանրապետութեան նախագահը արմատական-ընկերվարական կուսակցութեան նախագահ Տալատիէն հրահրեց կազմել նոր դահլիճը:

Տալատիէի առաջին գործին եղաւ նամակ մը ուղղել ընկերվարական կուսակցութեան խորհրդարանային խմբակցութեան նախագահ Լէոն Պրուտի, յայտնելով թէ՛ իր նպատակն է զկազմել հանրապետական գործօն նախարարութիւն մը, որ կորովի կերպով հետապնդէ խաղաղութեան կարմիրպարտիզները, տուրքերու թեւաբեկումը, երկրագործական տաշնապին արագ դարմանումը և իրագործումը այն ընկերային բարենորոգումներուն, որոնց կը ձգտին ժողովրդավար կուսակցութիւնները և բանտարակած մեծ կազմակերպութիւնները: Ըստ իր, ժողովրդավարութեան կողմէ սպասուած գործնական այս ծրագիրը իր շուրջ պէտք է Համախմբէ հանրապետական մեծամասնութիւն մը: Իմ մտածումովս, հասարակաց այս գործի իրականացման պէտք է գործակցի ընկերվարական խմբակցութիւնը՝ իր գործնական մասնակցութիւնով կառավարութեան պատասխանատուութեանց»:

Յաջորդ օրը, հոկտ. 27 ին, ընկերվարական խմբակցութեան գործադիր պատերազմութեան և Տալատիի միջև կատարուած տեսակցութիւնէ մը յետոյ, խմբակցութիւնը 12 ի դէմ 36 ձայնով ընդունեց հետեւեալ բանաձևը.

« Խորհրդարանի ընկերվարական խմբակցութիւնը կընդունի պ. Տալատիի առաջարկները, կը հաստատէ իր կողմէ գործադիր պատերազմութեան տրուած պաշտօնը և կը իրաւիք Կուսակցութեան Դիւանը Ազգային Խորհուրդի իրաւիքի՝ աւելի կատարելի տեղեկութիւն հաղորդելու համար անոր »:

Նոյն օրը կէսօրէ վերջ հետադիւրներ դրկեցան Ազգային Ռորհրդարանի անկախներուն, գանոնք ժողովի հրահրելով հոկտ. 28 ի համար: Կուսակցութեան վարիչ մարմինը՝ հոկտ. 28 ի ժողովը բանալէ առաջ, Ազգային Ռորհուրդին ներկայացուց յայտարարութիւն մը, որուն



մէջ կրուր թէ խորհրդարանային խմբակցութեան տւած որոշումը համապատասխան չէ ընկերվարական համագումարներու գործունէութեան, ու կը հրաւիրէ խորհուրդը անպիտան մը եւ յայտարարել թէ անհրաժեշտ է հաւատարիմ մնալ այդ որոշումներուն և մերժել Տալաթիէի առաջարկը:

Երկար վիճարանութիւններէ վերջ, Ազգային խորհուրդը հոկտ. 29 ին 1451 ի դէմ 1500 ձայնով հաստատեց ընկերվարական ազգային համագումարներու որոշումները և մերժեց Տալաթիէի առաջարկը, աւելցնելով որ՝ «Կուսակցութիւնը միշտ պատրաստ է ստանձնելու իշխանութեան ուղղակի պատասխանատուութիւնը կամ բոլորովին առանձին՝ ձայն խմբակցութեանց աջակցութեամբ, կամ ուրիշ խմբակցութեանց ներկայացուցիչները հրաւիրելով իր կազմելիք կառավարութեան մէջ՝ ուր ինք պիտի պահէ հեղինակութիւնն ու մեծամասնութիւնը՝ այն ձեռք, որ միշտ ապահովութիւն ունենայ երաշխաւորելու կանաչավարական գործերու մէջ վճռական, կրօնի, յանգուզի և միակամ լուծումներ, որոնք միայն, իր կարծիքով, կրնան ապահովել երկրին ապագան և փրկել վասնզուստ ժողովրդավարութիւնը»:

խորհրդարանային խմբակցութիւնը գոհ չմնաց այս որոշումէն և նոյն օրը քուէարկեց երկու բանաձեւեր: Առաջինով կը հաստատէր թէ՛ ինչպէս անցեալին մէջ, այսուհետև ալ ընկերվարականները իրենց քուէն պիտի ան որեւէ հանրապետական կուսակցութեան, որ վճռած է բարենորոգումներու և խաղաղութեան քաղաքականութիւն վարել: Երկրորդով՝ ցաւ կը յայտնէր Ազգային խորհուրդի որոշման համար, որ «հակառակ է միանգամայն Կուսակցութեան և ժողովրդավարութեան հիմնական կանոններուն և ճշմարիտ շահերուն»: ու կը պահանջէր, որ դեկտ. 25 ին արտահայտէ համապատասխան մը հրաւիրելի՝ իբրև գերիշխան մարմին արտայայտելու համար Ազգային խորհուրդին ներկայացած խնդրին մասին:

Վարչմ մարմինը, ի վերջոյ, որոշեց 1930 յունւար 25 ին և 26 ին հրաւիրել Կուսակցութեան արտակարգ համապատասխանը:

Այս որոշման թւականէն սկսեալ ամբողջ երեք ամիս պաշտօնաթիւրթ Փափուլէրի և՛ ընկերվարական այլ թերթեր լայն բացին իրենց էջերը՝ մասնակցութեան հակառակորդներուն և կուսակցիներուն առջև՝ իրենց տեսակէտները պաշտպանելու համար: Լէոն Պլում Փափուլէրի մէջ երկար յօդածառաբանով մը պարզեց անցեալ համագումարներու որոշումները վճիռ առարկայ խնդրին մասին: Ռեւոտէի և Փոլ Պոնզուր յայտնեցին իրենց տեսակէտները նոյն թերթին մէջ: Փարիզի և դաւաններու մէջ երկու կողմի պաշտպաններն ալ ընկերական ժողովներու մէջ պարզեցին իրենց տեսակէտները: Կուսակցական բոլոր մարմիններն ալ համապատասխան թւականէն առաջ վիճարանութիւններ ունեցան օրակարգին մասին և բանաձեւեր քուէարկեցին: Այդ քուէարկութեանց արդիւնքէն կը տեսնուր թէ՛ մասնակցութեան հակառակորդները մեծամասնութիւն կը կազմէին:

Մասնակցութեան հակառակորդները կը կռթնին կուսակցութեան ազգային և միջազգային անցեալ համագումարներուն տւած որոշումներուն վրա: Մասնակց-

ցութեան կողմնակիցները նոյնպէս կողեկոշեն՝ հին բանաձեւերը և կը յայտարարեն թէ՛ իրենք երբեք չեն շնորհ կուսակցութեան դերագոյն սկզբունքներէն:

Փիեռ Ռյնտուլի Փոփուլէրի մէջ (թիւ 2521) պարզելով մասնակցութեան կուսակցիցներու տեսակէտները, կը գրէր.

— «Նախ պէտք է փարատել կարգ մը թիրիմացութիւններ: Ու քանի որ ատոր կը տարպեն մեզ, ընենք որոշ և բացարձակ յայտարարութիւններ:

Մեզմէ ոչ ոք ո՛րիսէն կանցնէ տկարացնել ընկերվարութեամբ հիմնական պահանջը, այն որ անոր յիշատակական խորունկ իմաստը կը կազմէ. այսինքն՝ ուրացումը իրաւունքին ներկայ ընկերութեան, որ կառավարողէ զԿպի արտագրութեան և փոխանակութեան միջոցներու ընկերվարացումը:

Մեզմէ ոչ ոք միտէն կանցնէ տկարացնել դասակարգային պայքարը և ընչազուրիք դասակարգի կազմակերպութեան անհրաժեշտութիւնը՝ գայն տանելու համար զԿպի քաղաքական յալթանակ միտամանակ, հետպնդելով «հիմնարկութեանց ընկերվարութիւնը», որուն արժէքը ցոյց տայէ չենք դադարած երեք՝ արհեստակցական միութեանց և գործակցականներու շարժման ձեռն տակ:

Այսպէս՝ կը մերժենք որեւէ միտք թէ Ընկերվարական Կուսակցութիւնը իրապէս այստեղ կրնայ լքել իր գոյութեան պայքարը, կորսնցնելով իր ինքնավարութենէն, իր կազմական անկախութենէն, կամ նոյնիսկ լքելով մաս մը իր վարչապետութեան և իր ծրագրի էական պահանջէն:

Ինչ ալ ըլլայ մեր զգացումը, որ ընաւ չպիտի փոխուի, թէ ընկերվարութիւնը ժողովրդավարական կուսակցութիւն մըն է, մեր աչքին անկախ չի շփարհիւր ուրիշ ոչ մէկուն հետ, քանի որ ուրիշ ոչ մէկը կը ձգտի ընչազուրիցները առանցորդի դէպի կատարեալ ընկերային ժողովրդավարութիւն, որ հասկնալի կըլլայ միայն՝ երբ իրագործի աշխատանքի գերիշխանութիւնը:

Ուրանալ թէ՛ մեզ վճռած ենք կանգնել այն հողին վրա, ուր կանգնած էին մեր վարպետները, պիտի նշանակէր արդարև ուրանալ մեր ընկերվարականի հանգամանքը:

Իայց ոչ ոք իրաւունք ունի ատոր, ու կը կարծեմ թէ այս կէտերու մտախն համաձայն ենք»:

Մասնակցութեան ուրիշ եռանդուն կուսակից մը՝ Փոլ Պոնզուր կը գրէր նոյնպէս պաշտօնաթիւրթ Փոփուլէրի մէջ (6 դեկտ. 1929, թիւ 2496).

— «Ճեւարանութեան մասին չտեսնեք: Երբ հանրապետութիւնը փրկուելու համար պէտք ըլլայ վտանգի ենթարկել ամբողջ վարչապետութիւնը, ներկայ՝ կը պատասխանեմ: Ես կը հաւատամ միայն դործին, դործի անհրաժեշտութեանց, դործի պահանջած որոշումներուն:

Զիս հետաքրքրող դիտեալ չէ թէ կուսակցութիւնը ինչ կը մտածէ բուն իսկ մասնակցութեան մասին: Նոյնպէս խնդիրը չի կայանար մասնակցութեան շուրջ, այդ հանգումներ առնուած է արդէն, երբ անոր մասին կը վիճենք դեռ: Զիս յուզողն ու մտատանջողը դիտեալն է թէ՛ վճռապէս կուզենք մեր վրա կնքել նախկին որոշումներու ապաստանքը, թէ՛ ընդհակառակն կընդու-

նեն թէ նոր կացութեան մը համար անհրաժեշտ են գործելու նոր մեթոդներ, նոր միտք մը, բաներ՝ որոնցմէ յեզգոտիական կուսակցութիւն մը, նւագ քան ուրիշ որեւէ մէկը, պէտք է վարնար:

Այսօր այլևս խնդիրը կը դառնայ մէկ կամ քանի մը ընկերավարականներու կառուցարարութեան մասնակցելուն չուրջ, որուն կողմնակից էին և մնացին փօրես և անքան ուրիշներ. շնորհիւ իր աճուածին, իր կազմակերպութեան, իր հաւատքին, ինչպէս նաև շնորհիւ անհատական մասնակցութիւններով չփորձելու մասին իր նախարարներու կամքին՝ ընկերավարական կուսակցութիւնը շահած է հետևեակը. հիմա այլևս կառավարկէն իրեն կէս առ կէս բաժնէլ իշխանութիւնը: Վերջին տաղնապէս ի վեր պատմական փամ մը հնչած է, որովհետև առայժիմ անգամն է, որ ասիկա կառավարկի մեղի (Մ. Յ. — ակնարկութիւն Տարատիէի առաջարկին, որով կուզէր նախարարներու կէսը ընկերավարականներէն աննել):»

Փօլ Պոնզուր ցաւ կը յայտնէ, որ կուսակցութիւնը չկցաւ օգտագործել առիթը, երբ կէս առ կէս պիտի կրնար բաժնէլ իշխանութիւնը արմատականներուն հետ, իսկ հիմա երկար սպասել պէտք պիտի ըլլայ, որպէսզի նոր առիթ մը ներկայանայ...

Մասնակցութեան կուսակիցներու և հակառակորդներու միջև սկզբունքի հիմնական տարբերութիւն չկայ: Երկու հատածներն ալ կողմնակից են մասնակցութեան, ևս տարբերութեամբ միայն, որ մինչ առաջինները մասնակցութեան համար պայման կը դնեն «քաջադիպ պարագաները», վերջինները այդ առաձգական բացատրութիւնով կապուի չեն ուզեր: Եւ արդէն ամբողջ վէճին ստանցքը հոս է:

Ի՞նչ կը նշանակէ, ի վերջոյ, «բացառիկ պարագայ»: — Եզր կարծեմ, թէ ասիկա պէտք է հակնալ բառերու անմիջական իմաստով, կը գրէ Լէոն Պլում (Փափիւլէր, 6 դեկտ. 1929): Բացառութիւնը ա՛յն է, որ կը շեղի կանոնէն, սովորութենէն: Բացառիկ պարագան հակառակն է ընդհանուն, հասարակ վիճակին, այն է՝ որ զուրպ կելլէ սովորականն և ընթացիկէն:

Վժժ մասին երբեք չեմ մերժեր այս բառերը հակնալ աւելի լայն աճուածով: Միայն պատերազմ կամ ազգային ուրիշ ազլտներ չեմ հասկնար անոնցով: Երբեք չեմ մերժեր զննել թէ՛ արւած վարկեանի մը, ու բացառաբար, կուսակցութիւնը շահ չունի՞ մասնակցելու, թէ՛ վայրկեանի պարագաներուն ամբողջութիւնը բացորոշ կորուստներու և վտանգներու դէմ բաւարար հատուցում մը չի՞ ներկայացներ: Այս խնդիրն, ինչպէս ուրիշ բոլոր խնդիրներու մէջ կուսակցութեան բոլոր որոշումները միշտ իրենց խորհուրին մէջ լուծի ենթին անպատեհութեանց և առաւելութեանց կշիռ մը:

«Փոխարէն կրեսմ որ՝ եթէ նախարարական իւրաքանչիւր տաղնապի ատեն շարժման մէջ պէտք է դնել այս կշիռը, եթէ անիկա ծռել տալու համար բաւական են քաղաքական շահերը, անշուշտ, լուրջ կամ նոյնիսկ կարևոր, բայց որոնց կարելի է հանդիպել խորհրդարանական կեանքի իւրաքանչիւր պատահարին, այն ատեն մասնակցութիւնը կը դառնայ ընթացիկ, հասարակ դործեակերպ: Ու կրեսմ թէ՛ քանի մը տարւան նման դործեակերպէ՛ յետոյ, կուսակցութիւնը կը

դադրի ըլլալէ ինչ որ է, ինչ որ չի կրնար դադրել ըլլալէ՝ սոսնց դադրելու ապրիլէ», ինչպէս կրնէ կրօնոպիլի բանաձևը»:

Այսպէս, ուրեմն, «բացառիկ պարագաները» ճշտելու համար չկայ առարկայական չափանիշ մը, այլ ամէն մարդ կրնայ գայն մեկնաբանել՝ ըստ իր հայեցողութեան:

Յունւար 25ի արտակարգ համագումարը բացեցաւ այնպիսի պահու մը, երբ ամբողջ 3 ամիսներ խնդիրը ծեծած էր կուսակցութեան մամուլին և հաւաքովիներուն մէջ, երբ կուսակցութեան բոլոր մարմինները քննարկած էին իրենց թէր կամ դէմ բանաձևերը:

Փողովին ներկայ էին 323 պատգամաւորներ, որոնք կը ներկայացնէին 3608 ձայն:

Բացումը կատարեց նախագահ Ջիրոմսքի, Ալէնի Դաշնակցութեան ընդհանուր քարտուղարը, որ բարի գալուստ մտղթեց պատգամաւորներուն, աւելցնելով, որ վիճարանութիւնները պիտի կատարէին ընկերակիան համերաշխական ջերմ մթնոլորտի մէջ: Եղբայրական ողջոյն ուղղեց օտար ընկերավարական կուսակցութեանց ներկայացուցիչներուն, որոնց շարքին կը գտնուէին Յրից Ատլէր՝ քարտուղար Բանտրական Միջազգայինի, աը Պրուքեր և Վան Թոռպրօզը՝ պելժ բանտրական կուսակցութենէն, Ծալիշիլիլի՝ վրացիներու սոցիալ-դեմոկրատ կուսակցութենէն: (Յետոյ եկան նաև Վանտերվելյո և Մոտիլիլիանի):

Նախ խօսք առաւ Բամատիէ, փոքրամասնութեան կողմէ, որ առաջարկեց նախապէս քննարկել բանաձև մը՝ հաստատելու համար կուսակցութեան միութիւնն ու համերաշխութիւնը:

Ահա՛ այդ բանաձևը.

— «Համագումարը կը հաստատէ թէ՛ խնդիրը, որ իրեն ներկայացած է՝ հակառակ իր անվիճելի ծանրութեան՝ ըլլալով միայն գործելակերպի և ոչ վարդապետութեան խնդիր, ինչ որչառում ալ տրի այդ կետի մասին, կուսակցութեան և իր դաշնակցութեանց միալիւր յիմար ոչ ռի կողմէ պիտի կրնայ խնդիրը առարկայ դառնալ:

Իրեն գրաւական միութեան այս կամքին, համագումարը կորոշէ իր նիստերը վերացնելէ առաջ վերանորոգել իր բոլոր կեմիտոմակամ մարմիններն ու պատւիրակութիւնները՝ իրեն ներկայացած խնդրի բեւարկութեան հիմամբ վրաս:

Այս բանաձևով փոքրամասնութիւնը կը պահանջէր, որ իր ներկայացուցիչները համեմատական քանակութեամբ ընդունին կուսակցութեան վարիչ մարմիններուն մէջ:

Փօլ Պոնզուր իր կողմէ յայտարարեց հետևեակը.

— Կուզեմ մասնակցել ընկերավարական եղբայրութեան ցոյցի համար եղած հրաւերին: Ինձէ համար դիւրին էր լուի, բայց աշխարհի վրա ամենէն աւելի վատութիւնն է, որ կատեմ: Ես այս բեմն ելայ, հանդարտութիւն խնդրելու համար ձեզմէ՛ միութեան ցոյցին մասնակցելէ առաջ:

... Չեմ ուզեր զննել թէ՛ ընկերավարականներուն իշխանութեան մասնակցելու խնդիրը գործելակերպի՛, թէ՛ վարդապետութեան խնդիր է: Չեմ դիտեր թէ՛ ո՞րն է այն գիծը, ուր կը սկսի կամ ուր կը վերջանայ գոր-

ծելակերպն ու վարդապետութիւնը: Բայց կը կարծեմ թէ մեր վիճարանութիւնները կը վերաբերին քիչ մը տարբեր տեսարանական յայտնաբերում: Ըստ իս ասիկա քաղաքական հարց է և խիստ բարձր քաղաքականութեան հարց: Կաւելցնեմ, որ ի թէ կուսակցութեան հակառակութիւնը իշխանութեան մասնակցելու մասին վերջնական է, իմ կարծիքով, ասիկա անշտ մը պիտի ըլլայ ընկերավարութեան և խաղաղութեան համար: Ես հպատակելով հանդերձ ընդհանուր կանոնին, նպատակ ունիմ շարունակելու կոչելը՝ յոյս ունենալով մտքի, համոզումի և պրոպագանտի փոխադրմանը մտքը:

Հետոյը երեսփոխանը լուսաբանութիւններ կը պահանջէ նաև: «բարևորական միութեան» և «ազգային պաշտպանութեան» շուրջ կուսակցութեան վարիչ մարմինի նոր տեսակէտներուն մասին:

Կուսակցութեան ընդհանուր քարտուղար Փօլ-Փօր, գլխաւոր հակառակորդը մասնակցութեան, պատասխանեց Փօլ Պոնջուրի՝ սպահնակութիւններ տալով անոր մտատանջութեան առարկայ դանդաղան հարցերու մասին և համեմատելութիւն յորդորելով:

Բամատիէի բանաձևը մասնաժողովի մը կողմէ քննելէ վերջ կրկին ժողովի բերեցաւ: Վէճը դարձաւ փոքրամասնութեան համեմատական թիւով մասնակցութեան շուրջ կուսակցութեան վարիչ մարմիններուն մէջ:

— Փոքրամասնութեան բոլոր պահանջներն ալ ընդունելի են, ըստ Փօլ-Փօր, բայց մէկէն: Այո, համեմատական ներկայացուցչութիւն կուսակցութեան վարիչ մարմնին (Վարչական Մնարուն Յանձնաժողով), մնայուն պատերազմութեան, թերթին մէջ, բայց ո՛չ կուսակցութեան դիւանին (Բիւրօ) մէջ: Ու ասիկա՝ բուն իսկ կուսակցութեան շահին համար: Տեսած էք դիւանի մը՝ որ բարկացած ըլլալ գնահատեց ձգտումներու պատկանող մարդերէ: Հետեանք պիտի ըլլայ կոչի, վէճ: Միութիւնը պիտի խախտուի վարչութեան մէջ: Բայց ուրիշ ամէն տեղ ընկերավարական մտածումի դանդաղան հոսանքները տեղ ունին, կատարեալ ուղղամտութեան և ապաստանութեան նշանակին տակ: Փոքրամասնութիւնը երկու անգամ մերժեց գրաւել այն տեղը, որուն իրաւունք ունէր կուսակցութեան վարիչ մարմնին մէջ, իսկ հիմա իր հաճոյքը այնպէս կուզէ, որ անմիջապէս մտնէ ձոն՝ իր ուժին համեմատական թիւով: Նանսիի համաժողովին միջև այսօր սպասեցիք: Չորս ամիս ևս համբերեցէք, ու կուսակցութեան հերթական համազումարը կորուչէ այդ խնդիրը:

Այս խմատով բանաձև մը ներկայացուց Փօլ-Փօր՝ մեծամասնութեան կողմէ:

Մարտէլ Տէա փոքրամասնութեան կողմէ ներկայացուց նոր բանաձև մը՝ առաջարկելով, որ փոքրամասնութեան վարիչ մարմիններու մասնակցութիւնը յետաձգել յառաջիկայ համագումարին, պայմանաւ, որ համեմատականութեան հիմ բունի այդ օրուան օրակարգին շուրջ կատարուիք ընթարկութիւնը:

— Վիճարանութեան ամբողջութիւնը ցոյց կուտայ թէ, ըստ Տէա, հակառակ տեսակէտներու միջև երբեք չկայ անդունդ մը, նոյնիսկ փոս մը: Ընդհակառակն, ի յայտ եկաւ կուսակցութեան միութեան խորունկ կամքը: Անշուշտ, տարակարծութիւններ կան, բայց

վերջապէս, այս համագումարը կրնանք ձգել՝ ապահոված կուսակցութեան ապագային մասին:

Երկու բանաձևերն ալ քէի դրւեցան: Փօլ-Փօրի բանաձևն ստացաւ 2059 ձայն, Մարտէլ Տէայինը՝ 1470 ձայն, ձեռնպահ՝ 70:

Յետոյ կրկին վիճարանութիւններ սկսան նախարարական մասնակցութեան խնդրին մասին:

Երկու օր տեղի վիճարանութիւններու ընթացքին խօսեցան բազմաթիւ հոնտորներ: Մասնակցութեան ի նպաստ՝ արտասպառեցան Փօլ-Պոնջուր, Փիէր Ռեյնօտել, Մալէնլը: Արթիւր Կրուսիէ, Մարտէլ Տէա, Տիէա, Անտրէ լը Թրոքէ, Սփինաս, Էմիլ Գան, Մարքէ, Հիւսէլ, Վէյլ-Բէնալ և օրն: Մասնակցութեան հակառակ խօսողներն էին՝ Փօլ-Փօր, Գոնիէր-Մորել, Զիրոմսքի, Պրաք, Լըպա, Վենսան-Օրբոլ, Ժան Լոնկէ, Պարիէ, Լրիֆլըր, Փարքի, Մօրէն, Կրաչիանի և այլն:

Նախկին երեսփոխան և Ռուսիի քաղաքապետ Լըպա կարգաց մեծամասնութեան բանաձևը մասնակցութեան մասին, այնպէս ինչպէս խճաբարած էր բանաձևերու յանձնաժողովին կողմէ: Ահա՛ այդ բանաձևը.

«Համագումարը կը յայտարարէ թէ՛

1. Հաւատարիմ պիտի մնայ կուսակցութեան մասնակցութեան:

2. Կը վաւերացնէ Ազգային հարիւրդին 1927 ինկու. 28ի և 29ի որոշումը.

3. Կուսակցութիւնը միշտ պատրաստ է ստանձնելու իշխանութեան պատասխանատուութիւնը, ըլլայ առանձին, ըլլայ ձեռք առնելով կառավարութեան մեծամասնութիւնը և ղեկավարութիւնը իր կողմէ ընտրած ընկերավարական նախարարներով և իր յատուկ դրաշմը կլազ ծրագիր մը կիրարկելու համար.

4. Իսկ ինչ կը վերաբերի ընկերավարականներու համակցան մասնակցութեան յստի կառավարութեան մը, այդ գազապարը, նախ և առաջ, պէտք է մէկդի դնել ներկայ յետեւի. Ժողովի համար, իսկ կարելի է նկատի առնել միայն «բացառիկ պարագաներ» մէջ, պայմանաւ, որ վճարակն իրր այդ աննչցի կուսակցութեան գերիշխան մէկ ժողովին կողմէ՝ համագումար կամ Ազգային հարիւրդը:

Վերոյիշեալ նախատեսած երկու պարագաներու ալ, այդ ժողովը իմէ պիտի նշանակէ կուսակցութեան ներկայացուցիչները կառավարութեան մէջ:

Այս բանաձևը, որ ընդունուեցաւ 1507 ի դէմ 2066 ձայնով, կը ներառարժէ նախարար համագումարներու որոշումները: Ընկերավարական կուսակցութիւնը պատրաստ է ձեռք առնել կառավարութեան ղեկը առանձին, կամ պայմանաւ, որ կարգուեալ կատարութեան մէջ վարչապետը կամ նախարարներու մեծամասնութիւնը ընկերավարական ըլլայ:

Գալով խառն դահլիճի մը մասնակցութեան խնդրին, որ վէճի բուն նիւթն է, նկատելով, որ ներկայ երեսփ. ժողովը յետաշրջակայն է, այդպիսի խնդիր մը չի կրնար յուզել այժմ: Ուրեմն, 1932 ի երեսփոխանական ընտրութիւններէն յետոյ է, որ կուսակցութեան դերագոյն ժողովը պիտի որոշէ թէ՛ «բացառիկ պարագաներ» կա՞ն՝ քաղաքի կառավարութեան մը մասնակցելու համար:

Կըր նաև փոքրամասնութեան բանաձևը՝ զոր կար-

դաց և մեկնարանն էլ մի Բան: Այդ երկար բանաձևին մէջ կրտսի:

. . . Պատերազմէն ծնած միջազգային, ընկերային և տնտեսական մեծ վերլվայլուամենքը՝ որոնց հետեւանմենքը դեռ շատ հեռու են իրենց վախճանին յազգելէ, քաղաքական կացութեան կուտան իրապէս բացառիկ համգաւանմէ մը: . . . Համայնավար կուսակցութեան յարաճուն անկումը միւս կողմէ պարտականութիւն կը դնէ մեր կուսակցութեան վրա ապացուցանելու թէ՛ ընդունակ է անմիջական իրագործունենքը սպասակալ թոյլիկներէն խարած ընկազույի դասակարգին: . . . Հարևան կուսակցութեանց հետ ճակարակական մասնակցութիւն մը եթէ բնական է և սովորական ընթացք մը դառնար, անշուշտ, շատ շուտով անխուսափելի շփոթ կրնար առաջ բերել մտքերու մէջ: Քայց երբ կը գտնէ թէ մասնակցութիւնը չպիտի նկատուի իրրէ տեսական և վերջնական գործիակիրայ մը, համագումարը կը դատէ թէ կուսակցութիւնը ատար համար պէտք չէ ինք իրեն արգիլէ կառավարական ամեն փորձ, մինչ ծանր պայմանները, որոնց մէջ կապրինք, կը մղեն մեզ առաւելագոյն ճիգն ընել՝ պայքարելու համար յետաշրջակայն ռզիի մը դէմ՝ որ ամէն օր անելի ապերաստն կը դառնայ՝ ժողովրդավարութեան թուլութեան պատճառաւ: Եւ այլն:

Եզրակացնելով, բանաձևը կը ջտագովէ մասնակցի խառն դահլիճի մը՝ հասարակութեան գեանի վրա ու կառաջարկէ ստեղծել «գործադիր վարիչ կոմիտէ» մը, որ համագումար չեղած ատեն զերէխանօրէն վարէ կուսակցութեան գործերը Ազգային Խորհուրդին տեղ, որ ներթափաչէ անկարող է վարիչ դեր կատարելու:

Այս բանաձևը ստացաւ 1507 ձայն միայն: Այս արդունքէն դալրացան մասնակցութեան կուսակցիցները, որոնց կողմէ դրաւոր յայտարարութիւն մը կարդաց Մարտի 1 Տէա, ըսելով ի մէջ այլոց.

— «Ձեզմէ պահանջեցինք խոստանալ, որ յառաջիկայ համագումարին մենք պիտի կրնանք կրկին մտնել կուսակցութեան կենտրոնական մարմիններուն մէջ, այսօրուան օրակարգին վրա դրած մեծ խնդրին համար մեր ստանալիք ձայներու հիման վրա: Դուք կուսակցութեան ընկերներուն մերժեցիք այս արդար և ընկերվարօրէն սրտապին ժեսար, որ պիտի արաւարացնէ ծրագրի վերաքննութեան ձեր յանկարծական լքումը: Մենք բացարձակ իրաւունք և հաստատ կամք ունինք կոչ ուղղելու կուսակցութեան բոլոր զաշնակցութեանց և հատաճններուն, որոնք պիտի ըսեն թէ այս համագումարի մեծամասնութեան տւած որոշումը նպատաւոր կը նկատեն ընկերվարութեան զարգացման համար:

Գալով մեր վիճարանութեանց բուն հիման, իշխա-

նութեան մասնակցութեան խնդրին, ինքնին հասկնալի է թէ ո՛չ ոք կրնայ վերջնապէս կարգադրած համարել խնդիր մը, որ այնքան կախում չունի կուսակցութեան կամքէն, որքան բուն կազմակերպիչ:

. . . Բնական պիտի գտնէք, որ մենք շարունակենք կուսակցութեան մէջ մեր պրոպագանդի և համոզուելու ճիգը, աւելի քան երբեք ուժգնօրէն պաշտպանելու համար այն, զոր կը նկատենք ամենատիրուպական շահը ընկերվարութեան, ժողովրդավարութեան և բանուր դասակարգին»:

Եզրակացնելով, փոքրամասնութիւնը պատերազմ կը յայտարարէ մեծամասնութեան դէմ՝ ընդունել տալու համար իր գաղափարները:

Մեծապէս յուզած, Փոլ-Պօր բեմ բարձրանալով յայտարարեց.

— «Բարեկամական զգացումով մը արդէն քանիցս ձեզի երկնցուցինք ձողը և դուք բռնեցիք դայն, մեր գլխուն իջեցնելու համար: Ինչպէ՞ս, արդէն կը սպասանք: Այս համագումարը դեռ չէ վերջացած ու կըսէք, թէ կոչ պիտի ուղղէք զաշնակցութեանց, իրրէ թէ ըստ օրինի ձեր հատաճններուն մէջ իրաւունք չունենալիք վերաքննութեան ենթարկելու մեր որոշումները: Անձնապէս, այս համագումարին մէջ մեծ ճիգ թափեցի համերաշխութիւն գոյացնելու համար: Ու քանի որ դեռ կը ստիպէք, ըսած, որ եթէ չուզէք վարիչ մարմին մէջ ներկայացուցիչ չունիք, պատճառն այն է, որ չուզեցիք. եթէ այլևս կանոնաւորապէս չէք գրեր ՓՊՎիւլէրի մէջ, պատճառն այն է, որ չէք ուզեր: Քանի՞ անգամ լէնն Պլում չէ հրաւիրած ձեզ օգտագործելու թերթին սիւնակները: Ուրեմն, կուր կողմէք, այս համագումարէն կը մեկնիք՝ բունցքները սեղմած: Դաշնակցութեանց պիտի դիմէք. մեզ ալ պիտի ստիպէք անոնց դիմել»:

Նախագահ Գոնփեր-Մորել ժողովը փակելէ առաջ ցաւ յայտնեց, որ համագումարը կը վերջանայ այսպէս: Արտակարգ համագումարը փակեցաւ, և, սակայն, հակառակ մասնակցութեան թշնամիներու ջախջախիչ յողթանակին, խնդիրը չէ փակած: Ընդհակառակն կարծարծուի աւելի քան երեք ուժգնօրէն թէ՛ Երեսփ. ժողովի ընկերվարական խմբակցութեան և թէ՛ շարքերու մէջ՝ սպանալով նոյնիսկ հերձուած առաջ բերել:

Հարց մը՝ որ չէ լուծւած Երեսուն տարիէ ի վեր, անկարելի է, որ լուծուի կիրքով և բանավէճերով: Կեանքը ինքնին պիտի լուծէ օր մը այդ հարցը: Մինչ այդ ձերանայի ընկերվարական կուսակցութիւնը, անշուշտ, պիտի յաղթէ այս սպանալին ալ:

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

# ՔԱՌԱՄՆԱՄՆԱԿ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

## ՔԻԹԼԻՍՅԻ ՄՈՒԾԵՂ

(Նիւթեր գիւնորի Յուշատետրէն)

Կը հրատարակեմք առանց մեծ փոփոխութիւններ կատարելու յեզիմ մէջ. որ իր անարեւետ շարադրութեամբ աւելի պարմայնօս է ու արտի մօտիկ:

ԽՄԲ.

1897ին, առաջին անգամ Սերբերի հօրեղբոր որդին, Ճարտարը 65 հոգուց բաղկացած խմբի հետ Կարգւանի ճամբով կը հասնի Ախլաթ: Այդ յաջող փորձից խրատուակելով, Սերբըը նորէն Ճարտարը կուղարկէ Կովկաս:

Սոյն թւի աշնան, մեծ քանակութեամբ ոսգմամթիւրք ու 150-ի շարի գինւորներ միասին առած, Մուշեղը Կովկասէն կը վերադառնայ սահմանադուրեւ, Կարգւան գիւղաքաղաքը:

Առումը կազմուած է լիթում ընտիր գինւորներէց, որոնց մէջ էին սոսկիսի հին ու փորձուած Ֆիլգայիներ, ինչպէս Արիւս Աւագ, «Փալարեթ» Կարապետ, Բիթլիցցի Մուշեղ, Առաքել, Չուլումաթ, Երկայն Նադօն և ուրիշներ:

Ջինւորական խորհրդի միաձայնութեամբ խումբը բաժանուում է երկուսի: Ընդհանուր հրամանատար կը նշանակուի Մուշեղը, օգնական՝ Ախլաթի Թեղութ գիւղացի Երկայն Նադօն:

Հ. Յ. Դաշնակցութեան իրաւասու մարմնի վերջին հրահանգը ստանալէ յետոյ, ճամբայ կ'ելլէ առաջին խումբը Նազօի առաջնորդութեամբ: Մնացած մասով Մուշեղը յաջորդ օրը շարժուում է, սահմանը անցնելով դէպի Ալաշկերտ:

### Ա. ԿՈՒԻՒՂ ԳԻՒՌԳ ԳԻՒՂՈՒՄ

Երկայն Նազօին յանձնուած խումբը սահմանի միւս կողմը կը ստիպուի մնալ զիւրդի մը դիւղ, ցերեկը հօն անցնելու: Այդ բանի համար զիւրդին կը վճարեն որոշ գումար մը, որպէսզի գիւրեմք պատասպարէ մինչև երեկոյ: Քիւրդը կը խաբէ տղաներին և կը լեցնէ տունը ու գումարն էլ անելուց յետոյ, կը վազի լուր կը տայ գիւղապետին: Գիւղապետն էլ իսկոյն կը հաւաքէ

րուր գիւղացիներին, որոնք կը գան կը շրջապատեն Ֆիլգայիները իջևանած տունը:

Թակարդի մէջ ընկած մեր հերոսները. «Կուեցէ՛ք սղեւը, կուեցէ՛ք քաջ քաջ»-ը երգելով, կը սկսեն պատերազմիլ: Թշնամին դուրսէն, մերոնք ներսէն: Այդտեղ Նազօի խումբը մեծ զոհեր կուտայ:

Մուշեղը նոյնպէս ստիպուած էր այդ գիւղէն անցնելու: Երբ որ լսում է հրացանների ձայները և տղաների պաշարելով, ետևից օգնութեան է հասնում իւր խմբով ու պաշարում է դաւաճան գիւղը: Մի քանի ժամայ մէջ բնակչութիւնը պատուհասելէ յետոյ, կենդանի մնացած մեր գինւորներին կադատի:

Մուշեղը իր ոսգմամթիւրքը, որ մինչև հոս շարկով կը բերէին, բեռնակով քիւրդ գիւղի գրաստներէ վրա, մայրամուտին կը շարունակեն իրենց ճանապարհը:

### Ք. ԳՐԼԸ Հ ԳԵՌՈՒՍԻ ԿՈՒԻՒՂ

Այդ գիւղէն հեռանալէ յետոյ, խումբը ցերեկ մը, իրեցի գիւղի (Ալաշկերտի շրջան) սահմաններում խորտի դէզերի մէջ հանգստանալով, մայրամուտէն վերջ, կը շարունակէ իր ճանապարհը: Քիչ յետոյ Շիռեան կոչուած գետի եզրը հասնելով (Այդ գետը հասնելով գալիս է արևմուտքէն դէպի արևելք, Ղարաքիլիսայի օժու միանում է Եփրատին) կանցնեն ու կը սկսեն դէպի Գրլը Հ Գեղուկ լեռը բարձրանալ:

Մուշեղը կը ջանայ որքան կարելի է շուտ հեռանալ Ալաշկերտի գաւառէն, բայց զօրախտաբար, հակառակ րուր թափած ջրաքերին խումբը իր հետքը բորբովին չի կրնար կորսնցնել: Յաջողապէս կը հասնեն լեռան գագաթը: Բայց երբ որ լեռան կատարէն դէպի միւս լանջը վար կ'իջնեն լուսաբացին, լեռան ստորտը կը նշմարեն լրտեսող զիւրդեր, որոնք հաւար կը կանչեն:

Մուշեղը երբ կը տեսնի զիւրդ խումբերին, որոնք դէպի իրանց կողմն են առաջանում, կը հրահանգի

խումբին տարածել և ժայռերի հոսեր զիրքեր բռնել: Միևնոյն ժամանակ հասնում է հետապնդող զօրքը, և կր սկսի համադարկ տալ: Իսկ զիմացէն վեր բարձրացող քերի ձիւտըները հասկանալով, թէ կրա-կողները թուրք զօրքերն են, իրանք ևս կը սկսեն համադարկ տալ:

Մուշեղը իր խմբով միասին կը մնայ երկու կրակի մէջ: Գծոխային կրակը, սակայն, չի ազդի մերոնց վրա: Մուշեղը նկատի ունենալով այդ չըջնի բազմաթիւ հայկական գիւղերի միծակը, կը հրահանգի Ֆիդայիներին, մերթ րնդ մերթ կրակել և սուր կերպարանք չտալ կուէին:

Բայց թշնամին երթալով աւելի կը սաստկացնէ կրակը: Այդտեղ կը գարնել Ախլաթից կտրիճ Գէորգը: Մուշեղը երբ կը տեսնի Գևորգի անշնչացած դիակը, կը հրամայէ — Տղե՛րք, լաւ նշան բռնեցէք դէպի թշնամին: Մեր Ֆիդայիները մէկէ փոխարէն 20ի շափ դիակներ կը փռեն:

Այդ անսպասելի շարժը մեծ աղղեցութիւն կը զործէ և թշնամին կամաց կամաց կրակը դադարեցնում է, որոշելով յաջորդ օրուայ լուսարացին շրթան աւելի նեղցնել և վթէժ լուծել:

Մուշեղը օգտուելով կրակի դադարէն և դիշուրան մթութենէն, խումբին հետ միասին վար կիջնէ լեռից, ու աննշար կը քաշի դէպի Գուժաղ գիւղաքաղաքը: (Եփրատ գետի եզրերը): Այդ տեղէն Եփրատը անցնելով, հակառակ ճանապարհի երկարութեան, նպատակ կունենան սպաստանել Կաթաւին լեռը: Երբ կը հասնեն Եփրատի ափը, Մուշեղը կը կարգադրէ, որ լողալ գիտցողները օգնեն չլիտցողներին: Եւ ամբողջ խումբը միւս ափը ցամաք դուրս կուգայ, բայց կը տեսնեն, որ երկու ընկերներ չկան: Գիշերուան մթութեան մէջ նրանք զո՛հ էին դացեր Եփրատի ափքներին... Այդ աղէտէն բոլոր Ֆիդայիները խորունկ վշտի մը մէջ խորատուգած, կը շարունակեն ճամբան և տաժանելի ուղևորութենէ մը վերջը արշալույսին կը հասնին Կաթաւին լեռը (Բաթնոց գիւղէն դէպի արևմուտք):

Թշնամին բոլորովին անտեղեակ՝ Ֆիդայիների գիշերուան փախուստէն, արշալույսին կը սկսի համադարկը, բայց Ֆիդայիները գիրքերից պատասխան չկայ: Երբ բոլորովին կը մտնեն, կը տեսնեն ու կը դարձանան, որ Ֆիդայի մը կը թնած ժայռի մը՝ անտարբեր դէպի իրանց կը նայի: Աղբացեալ Գէորգն էր:

Նստիքան խումբի հետանալը, Մուշեղը գիտամար ոտքի է կանգնեցնում դիակը, թշնամու խաբելու համար: Թշնամին կը տեսնէ, որ սպանած է, կանոն Գէորգը ու կը թաղէ փոսի մը մէջ, ու ամէն մէկը ըստ սովորութեան քար մը նետելով վրան, կը թողնեն ու կը հեռանան սարէն «բռն ու փռձամ»:

Այդ օրէն, ամէն անցողը, քար մը կը նետէ Գէորգի վրա, և Գրլըճ Գետին կը յարձակուի մէկ կազմած է քարէ փորթի վրայ մը:

Գ. ԿԱԹԱՒԻՆ ՍԱՐԻ ԿՈՒԻՐԸ

Վերև յիշեցի, որ արշալույսին մեր գիւնդները

հասան Կաթաւին լեռը: Բայց և այնպէս աննկատի չեն մնար թշնամու շար աչքերին:

Առաջին և երկրորդ կողմերը ամբողջ տաճիկ կառավարութիւնը ոտքէ էր հանած: Երկրի չորս կողմերը հեռագիրներով լուրեր էին արւած, Կարին, Վան, Իթիլիս և այլն: Այդ հեռագիրների հիման վրա, 4000է աւելի կանոնաւոր զօրք և զինւած զրուսթիւն դուրս են դալիս, որսկան շների պէս, որսալու մեր հալոցուկները: Այդ բոլորը կը գան կը հաւաքեն Կաթաւին լեռան շուրջը, որու ժայռերի հոսեր և ծերպերի մէջ սպաստանած էին մեր մի բուռ գիւնդները:

Մուշեղը և իր ընկերները չլիտեն, դուրսը ինչ է կատարում: Յանկարծ Մուշեղը կը տեսնէ զինւած քերպ մը իր գլխի վերի տնկած: Անին թարթի մը մէջ զայն գետին կը տապալէ: Հրացանի ծախք արդէն կը մատնէ իրանց ներկայութիւնն ու բռնած դիրքերը:

Անմիջապէս կորոտան թշնամու կողմից հազարաւոր հրացաններ և մերոնք կը ստիպւին պատասխանել: Հակառակ այդ դատման կացութեան, երեք-չորս օր անօթի, ծարաւ, անքուն մնալով հանդերձ չեն վճառի, այլ դիւցապիսար կը շարունակեն կռիւր: Ամենատաք ժամանակին քանի մը Ֆիդայիներ կը նահատակին: Իսկ թշնամու կողմից 50-ի շափ դիակներ կը փռուին գետնի վրա: Երբ որ մութը կիջնէ, երկու կողմից ալ հրացանածողութիւնը կը դադարի, մինչև լուսարաց:

Չինպաղաք է և մութը կոխելէ յետոյ, Մուշեղը քանիցս կը փորձէ խոյս տալ, բայց չի յաջողի, այլ և ընկեր մըն ալ զո՛հ կը տայ թշնամու զնդակին: Ամբողջ գիշերը երկու կողմից ալ պահակները ժամը անգամ մը կը կրակեն: Այդպէս կը յաւանան դիշերը: Թշնամին շափազանց կուրախանայ, որ որսը ձեռքէն չէ հանած: Եւ կը սկսի կատաղի կռիւր:

Մուշեղը ժայռերի մէջ ցցւած կը կրակէ և կը դոնայ. — «Տղե՛րք, գնդակները պարապի շանցնեն»: Դարձեալ գիշեր: Այդ օրը թշնամու կողմից 200-է աւելի մեռեալ կը թափի լեռան կողերի վրա: Մայրամուտէն յետոյ, թշնամին կամաց կամաց կը դանդաղեցնէ կրակը, ու քիչ յետոյ բոլորովին կը կասեցնէ: Մուշեղը այդ կացութիւնը օգտանործելով՝ խորհրդակցելէ յետոյ, ընկերներից 12 հոգի կը թողու դիրքերում (12 գիւնդները քաջի պէս կուտելով կը նահատակեն): Մնացած Ֆիդայիներով կը քաշի աւելի խոր և սպառնով վայրեր ու կը ծածկիին խոտերի զէջերի և մացառների մէջ: Յետոյ կը քնանան, պահակներ նշանակելով: Բայց յոգնած ըլլալով, պահակներն ալ կը քնանան:

Թշնամին կը տեսնէ, որ այլևս իրենց պատասխանող չկայ, կը կասկածի Ֆիդայիների փախուստի մասին, ու աւելի կը սաստկացնէ հետախուզութիւնը: Այդպէս կը գան ու կը գտնեն մեր բոլոր տղաները, յորձած ու դադարձ խոտերի մէջ քնացած: Թշնամին կանգնած իր գոհի գլխին՝ կը մտնէ բնաջնման ձևի մասին: Հրացանադարկ ընել, թէ ողջ ողջ այրել: Կընտրեն վերջինը ու դէզերը կրակ կուտան ամէն կողմէ, իսկ իրանք հեռուն շրթայ կազմած, պատրաստ կը սպանեն կրակէն աղատող Ֆիդայիները զնդակահարելու:

Երբ որ կրակը կը հասնի Մուշեղին, տաքութիւնից

կարթննայ և կը փութայ արթնացնել իր միւս ընկերները, որոնք մեռելի պէս ընկած կը լինեն: Մուշեղը հրաման կուտայ տղաներին կրակել զէպի թշնամին ու դուրս դալ բոցերի միջից: Ինքը կանցնի առաջ, զինուորները կը հետեւն իրան: Բայց զժաբխտաբար, զինուորներից մէկ մասի դուրս քունը գլուխները ըլլալով, չեն կարող կուել, ոմանք էլ բոցերէն ցատկելու միջոցին կը զարնեն: Այնպէս որ Մուշեղը կը մնայ 25 Ֆիդայիներով: Ասոնք կատաղի կուի մղելով, թշնամու շղթան կը պատեն ու դուրս կուգան, թէ կուելով և թէ նահանջելով:

Այդ կուխների մէջ ալ Մուշեղը կորցնում է հինգ ընկերներ: Մուշեղը պատած է լինում, երբ Մուշեղը 20 ընկերներով միասին կրկին կանխարտնայ թշնամու աչքից:

Կաթաւինէն հեռանալով, կը հասնեն Չափուշ և Բաթնոց գիւղերի սահմաններում գտնուող լեռների մէջ ու կը ծածկուեն: Հոն ամբողջ ցերեկը աննշմար կանցնեն:

**Պ. ԶԱՎՈՒՇ ԵՒ ԲԱԹՆՈՅ ԳԻՒՂՆԵՐԻ ԼՅՈՒՆԵՐՈՒ ԿՈՒՒԿ**

Կաթաւինի երեք օր տեսող արիւնայի կուխէն յետոյ, Մուշեղը իր 20 ընկերներով կը հասնի Չափուշ և Բաթնոցի լեռները:

Արեւը կը սկսի մայր մտնել: Մեր Ֆիդայիները փութած գետինը, իրենց յոգնած մարմինները կը հանդատացնեն: Իսկ թշնամին դուրահարի պէս սար ու ձոր ընկած, կը փնտէ Ֆիդայիները: Մուշեղը ծայր աստիճանի յուզած՝ կը մտածէ իր կորուսած ընկերներու մասին ու յանկարծ զինուորներու փախուցէն կը սթափուի: — Կը տեսնեն թշնամին արդէն մտեցած է իրենց: Վեր կը ցատկիլն և ամէն մարդ իր գէնքը ձեռքին՝ նշանակած դիրքը կը մտնէ:

Տղաներու ապաստանած ամբողջ լեռը պաշարւած էր թշնամիի բազմաթիւ զորքերով: Եւ ահա սկսուած է համազարկերը թշնամու յառաջապահներու կողմից զէպի մեր հաղուկներու դիրքերը:

Կուիւ շարունակուած է մինչև յաջորդ առաւօտ: Մերոնք ունենում են Երեք զոհեր, բայց թշնամու կողմից 50-էն աւելի զիակներ կը մնան լեռներու և ձորերու մէջ: Լուսաբացէն յետոյ ալ աւելի կը աստիճանայ կուիւը: Թշնամին թարմ ուժեր ասանալով, կաշխատի պաշարման օղակը աւելի խառցնել: Մուշեղը, նկատի առնելով, որ թշնամին իր պաշարման օղակը աւելի պիտի թանձրացնէ, կը հրահանգէ ընկերներուն լեռնի վեր մերթ կուել մերթ յառաջանալ, զէպի Մարմուտ գիւղը:

Այդպէս յառաջանալով մինչև մայրամուտ հոն կը հասնեն, և քիչ մըն ալ զիւղի սահմաններուն մէջ կուուլէ յետոյ, կանհետանան մթութեան մէջ: Այլևս կուիւը զայրած էր, բայց Մուշեղի խուճրէն կը մնայ միայն 8 հոգի, ասոնք ալ մութ զիւղերին, տխուր և տրտուած կը յառաջանան... Մտա երեք ժամ անընդհատ քալելէ կը մերթ, կը հասնեն հայկական Գարաբաղի մաս,

Առահուտ բերդի ստորոտը գտնուող քարայրի մը մէջ կապաստանին:

Քարայրը մտնելէ յետոյ, մուտքի բուր ծակերը լաւ կը փակեն քարերով, և կը քնանան:

**Ե. ԱՌԱՀՈՒԴ ԲԵՐԻԻ ԿՈՒՒԿ**

Յաջորդ առաւօտ, 20-ի չափ հեծեալ ոստիկաններ պատահամբ Մանագիբերի բերդէն դալով, կերթային զէպի Գարաբաղ գիւղը: Խոսքը պիտի անցնէր Մուշեղի ապաստանած քարայրի առջևից: Մուշեղ լսելով ձիերի զոփուիւր, կաղաքարէ զինուորների պատրաստուել: Երբ որ քարերի ճեղքերէն ալ կը տեսնէ ոստիկանները, կը հրահանգէ տղաներին դուրս դալ քարայրից, մտածելով, որ կարող է թշնամին իմանալ իրենց տեղը և քարայրը գերեզման դառնայ իրենց համար: Բայց հաղու դուրս են դալիս ու մի քանի քայլ չբարձրացած լեռնի վեր, ոստիկանները տեսնելով կը սկսեն կրակել ու կուիւր կը սկսի: Մէկ ժամ միայն կը տեւէ կուիւր, ոստիկանները կը նահանջեն, ու կերթան Գարաբաղ գիւղը, տանելով իրենց հետ սպանւած ոստիկանի մը դիակը:

Իսկ Մուշեղը և իր ընկերները կը քաշեն զիւղի վերեւ լեռների մէջ և կանհետանան:

**Զ. ԱՒԵՐԱԿ ԶՐԱՂԱՑԻ ԿՈՒՒԿ**

Այստեղ երեկոցանոց զէմ Մուշեղը, երթալիք ճանապարհի մասին, իր որոշումը կը յայտնէ ընկերներին: Իր կարծիքով, Գերեզ գիւղի վրայով պիտի լինէր: Այդ որոշումին մի քանի ընկերներ կը հակադասին ու կը պահանջեն Եկմալ գիւղի ճամբան բռնել:

Երկար վիճարանելուց յետոյ, Փայլաբի կարապետը և Թեղութցի Աստուրը և ուրիշ երկու ընկերներ միասին, բաժանելով խմրից, կը շարունակեն իրենց ստած ճամբով ու կը հասնեն մինչև Պուլաբերի Գարաբաղ գիւղը ու կապտուեն:

Իսկ Մուշեղը երեք ընկերներով, կերթան Մանագիբերի բերդի վրայով զէպի Եփրատ գետի եզերքը գտնուող աւերակ ջրաղացը, ու հոն կը մնան գիւղերը: (Աւերակ ջրաղացը Մանագիբեր գիւղաքաղաքէն կէս ժամ հեռու է, Խաթուն և Եփրատ գետերի միացած տեղը): Առջևից Եփրատը, ձախից Խաթուն գետերը, կը դնան զէպի արեւմուտը:

Մուշեղը ջրաղաց մտնելէ յետոյ, կաշխատի բան մը գտնել իրանց դատարկ ստամոքսը լրնելու համար: Կը սկսեն ամէն անկիւն խոզարկիւ ուտելիք ճարելու համար: Պատերի վրայի և անկիւնների ու քարերի տակ մնացած ալիւրները (պատ ալիւր) հաւաքելով, չորս բաղարջի խմոր կը յաջողուն ձեռք բերել:

Մինչև այդ, դեռ ոչ մէկ թշնամի կերևայ: Մտիկուած կը քալուի և Մուշեղը կը սկսի բաղարջներ

եկել: Հակառակ աւոր, լոյսը նոր կը սկսի բացել ու ալք ժամուն թիւրջ մը ջրաղացի վերի արահետով անցնելու միջոցին, կը տեսնէ ջրաղացի ծխնելուղից դուրս եկող կրակի ծուխը: Քիւրդը կտահելով կասի. «Տացի Ֆիդայիներէից ալս ժամանակ հոս ոչ ոք էլ չէ գար»:

Ճամբան շարունակելով, թիւրջը կը փութայ հասնել Մանազկերտ բերրը, ու իր տեսածը մի թիչ էլ աւելի վրան բարդելով կը պատմէ ոստիկանութեան:

Առմիջապէս կը հաւաքին ոստիկան-գինւորներ, զօրք և թիւրդերու զինւած մեծ բազմութիւն, սրարչաւ կը դան զէպի աւերակ ջրաղացը: Մուշեղի մահուան ժամը հնչած է — կը խորհի տանկական զօրքի հրամանատարութիւնը: Բոլորովին վառահրեան յաջողութեան վրա, գալիս պաշարում և՛ ջրաղացը:

Մուշեղը և ընկերները բազարջները եկելէ յետոյ, երկուքը կուտեն, իսկ միւս երկուքը ինամբով կը պահեն աւելի նեղ ժամանակի համար:

Ճաշէն վերջ, Մուշեղը դուրս կը գայ ջրաղացէն, չորս կողմը գիտելու նպատակով: Երբ որ կը հասնի Եփրատի ափը, կը տեսնէ, որ հեռուէց, մեծ թւով ձիաւորներ սրարչաւ զէպի ջրաղացն են առաջանում:

Մուշեղը վերադառնալով ջրաղաց իր տեսածը կը պատմէ ընկերներին: Ասոնք ալ դուրս ելնելով ջրաղացէն, կը հաստատեն ու վերադառնալով կը սկսեն պատրաստութիւններ տեսնել զիմպոլիտը համար:

Նախ դուռը կը գոցեն ջրաղացի մեծ քարով մը, ու կուսելու դիրքեր որոշելէ յետոյ, պատրաստ կը սպասեն: Ձիներ ալ հեծեալ զօրքն ու ամբողջ մօտենալով, կը սկսին շորս կողմէն պաշարել ջրաղացը:

Թշնամին թիւրջ լրտես մը կուղարկէ ստուգելու թէ Մուշեղը իսկապէս ջրաղացի մէջն է թէ ոչ: Քիւրդը ստուգումով հաղիւ թէ կը մօտենայ ջրաղացին, Մուշեղը կը նշմարէ, ու շեշտակի գնդակով մը գետին կը փռէ լրտեսը:

Լրտեսի գարնիւրով այլևս թշնամին կը համոզուի, որ Ֆիդայիները ջրաղացումն են, ու կը սկսի հրացանաձգութիւնը՝ թշնամի դուրսէն, մերոնք ներսէն:

Մուշեղի համար արդէն պարզ է լինում և հասկանալի, թէ այդ կուրը յամառ և երկար է սեւելու, ու փրկութեան թիչ յոյսեր ունենալով, կը պատուիրէ տղաներին ինստիդութեամբ գործածել փամփուռաները: Թշնամիի կատաղի համազարկերին մերոնք կը պատասխանեն միայն մերթ ընդ մերթ: Կուրը կը շարունակուի մինչև երկիւրս:

Մուշեղը չափազանց կուրախանայ, որ այդ օրը անցաւ առանց գոհի: Ու կը մտածեն փախուստի ուղի մը դռնել: Քանի մը անգամներ ամբողջ գիշերը փորձեր կանեն, բայց չեն յաջողի: Լոյսը կը բացուի, մեր կործանները նոր գիրքեր կը բռնեն աւերակ ջրաղացին մէջ, և նորէն թշնամին դուրսէն, մերոնք ներսէն կը սկսի յամառ կուրը:

Թշնամու շարքերի մէջ Սերոբ անուն հայ ոստիկան մը կը լինի, որ միշտ խոյս կը տայ կուրէն: Կը ստիպեն պոսարով երեսին. «Քաֆի՛ր, կը մեղքնա՞ս Ֆիդայի գաւուրներին», շուտ առաջ անցիր»:

Սերոբը կամայ կը փախչի յառաջանայ, ու միևնոյն ժամանակ կը պափաքի հակացնել Մուշեղին թէ

ինքը հայ է, որպէսդի ինայնն ու չլսիկն իրան: Եւ կը պոտայ, սեւելով.

— «Ես Սերոբն եմ, Մուշեղ, անձնատուր եղիր, և թէ ոչ, չես ապատի իմ գնդակէս»:

Մուշեղը ծիծաղելով, գնդակով մը կը թոցնէ Սերոբի դղակը գլխին:

Սերոբը ետ կը դառնայ, բայց թիւրքերը նորէն կը ստիպեն ու բռնի յառաջ կը քշեն: Սերոբը կը համակերպուի, մտածելով գնալ ուղղակի և մտնել ջրաղացը ու միանալ նրանց:

Այսպէս համոզուած, կը յառաջանայ զէպի ջրաղաց, բայց դեռ չհասած, Առաքելը կը փրբաւորէ սրունքէն: Եւ թիւրքերը Սերոբին ետ կուղարկեն Կոր:

Կէսօր է. կուրը սաստիկութեամբ կը շարունակուի երկու կողմերից ալ: Պաշարող թշնամին, խաթուն գետի վրայի կամուրջով, յարձակողականի փորձեր կը կատարէ, ու միշտ մերոնք կողմէն ետ կը շարժուի, շնորհիւ մեր հերոսների աշալուրջ գիմադրութեան:

Հարկւրպակետ մը, կատարած այդ բանի վրա, վաշտի մը գլուխ անցնելով կը յառաջանայ զէպի կամուրջը, Մուշեղին ողջ բռնելու նպատակաւ: Բայց դեռ կամուրջի կէտը չհասած, Մուշեղը գնդակով մը ուղիղ ճակատէն նշան բռնելով գետին կը գլորէ նրան: Իր տակը կանցնի յինստիդետ մը և մերկայացած սուրբ իր ճակատին դնելով, կը շարունակէ յառաջանալ: Բայց չուտով, այդ ալ իր կիծկը գնելով, կարժանանայ իր մեծի բախտին: Ամէն մէկ յարձակումը թշնամու վրա կը նստի 10-15 սպանեալ:

Թշնամին յուսահատ կը վերադառնայ իր հին դիրքերը, ուր կորոշեն այրել ջրաղացը: Նաթ կը բերին և քանի մը հողի բանակէն գտաւելով, պտտապողի կը բարձրանան ջրաղացի տանիքը, քարիւղին հետ կը հաւաքեն կտուրի վրա շոր մացառ և դանակաւ խոտեր ու կը պատրաստեն կրակի բռնիկեցնելու: Ներսից մերոնք ոտնաձայներ լսելով, Մուշեղը կուղղէ իր հրացանը զէպի ոտնաձայնը, և կը յաջողի գետին գլորել թիւրջ մը: Միւսը կը փորձէ սպանածի դիակը տանել. ան ալ տեղն ու տեղը կը թողնէ, երբորդ փորձողը նոյն ճակատագրին կարժանանայ:

Իրիկուներ կուրը ինքնաբերաբար կը դադրի: Մուշեղը և իր ընկերները կորոշեն օգուտի դադարէն, գիշերով փախուստ տալու: Դժբախտաբար ջրաղացի ղանից հաղիւ դուրս ելած, Ֆիդայիներէից Մակարը կողքից ծանրապէս կը փրբաւորի: Մուշեղ այդ անյաղուցութիւնը տեսնելով, կը հրահանգէ ընկերներին ետ դառնալ, կրկին հին դիրքերը բռնել: Ձեն մոռնար վերաւոր Մակարին ապահով տեղ մը գնելու: Այդ բանին թշնամին ոգևորուած, կը սկսի համադարկելը զէպի ջրաղացի ղուտը սաստկացնել: Նոյնպէս ներսից մերոնք: Մէկ ժամայ չափ տեղող զարհուրելի կրակից յետոյ թշնամին նորէն կը դադարեցնէ իր կրակը:

Թիւրք գինւորները և Քիւրդերը, երկու օրէ ի վեր անգուն և յոյժած ըլլալով, կուսելու այնքան ալ տրամադրութիւն չեն ցոյց տար:

Քիւրդ ցեղապետներէն Բաթրոսցի Հուսէյն փալան (Քէօր Հուսէյին) ուրիշ քանի մը բէգերի հետ կը վերադառնայ գիւղ, գիշերը հանդստանալու, որպէսզի յաջորդ առաւօտ շարունակեն վճռական կուրը: Ու երբ



գորացուցիչ և բնական կը հետանան, թշնամի գործը տարածելով գետնի վրա, կը ճանաչայ խոր քունի մէջ:

Հետոտես Մուշեղը ստուգելով գինադալարը, կը հասկանայ, թէ ազատութեան ժամը արդէն հասած է: Կը սկսի խորհրդակցել փախուստի ձևի մասին:

Կորոշեն ջրաղացի ջրտունէն (այն անցքն է, որտեղէն խողովակով ջուրը ներս է մտնում և ջրաղացի քարերը դարձնում է) բարձրանալ տանիք ու այնտեղէն մտնելով ջրաղացի ստուն, սղորդիլ և հեռանալ:

Այդ ծրագիրը դժարութեան կը հանդիպի Մակարի ծանրապէս վերաուրուած ըլլալով: Մուշեղը և Զուլումաթը ամէն միջոց ու ջանք գործ կը դնեն, որպէսզի անոր կեանքը փրկեն: Բայց գնալով կողէն խորը մտած լինելով անկարելի է դառնում արեւահասութիւնը դադարեցնել: Կործն հերոսը ինչպէս էր աւերակ ջրաղացի յատակի վրա, արիւնքաքամ և ուժասպառ: Անվերջ պայքարի ու յաղթանակի հերոսը ինչպէս ձգել կրնար վրա ու հեռանալ նրա հոգեվարքի սրբազան ժամերին: Միասին տանել ևս անկարելի է:

Մուշեղը ծուծիկ կը շոքէ իր պաշտելի ընկերոջ մարմնի առևն ու խոր կը մտածէ: Մակարը վերջին անգամ ըլլալով աչքերը կը բանայ և Մուշեղի երեսին կը նայի: Գիտէ և համոզուած է, որ Մուշեղը իրան մենակ չի թողնի, նա այդ վստուութիւնը չէ անի երբևէ: Ուտու հանդարտութեան իր ձևաքը երկարելով կը զնէ Մուշեղի ձևաքի մէջ, և կը խնդրէ, որ նախ գինքը սպանեն և յետոյ ջրաղացէն դուրս ելլեն դէպի կեանք, դէպի ազատութիւն: Բայց ո՞վ պիտի կարողանայ այդ ոճիբը գործել, ու եղբայրասպան դառնալ: Լուռ են բոլոր ընկերները:

Մակարը աւելի ուժգին և վճռականապէս կը պարտադրէ, եր գինքը ողջ չձգեն թշնամու ձևաքը: Մուշեղը խոնարհելով կը համբուրէ վերաւոր առիւծին ճակատը (նոյնպէս և միւսները), և ոտքէ ելլելով հրացանը կողդդէ ընկերոջ սրտին... Այն սրտին, որ բացի ընկեր և հայրենիքէն ուրիշ բան չէր ճանաչել...

Նախ կը մտնեն ջրտունը, յետոյ կը բարձրանան տանիքը, ու իրարու օգնելով աննկատ կը մտնեն ջրաղացի ստուն և սողողալով կը հեռանան:

Թշնամին լուսադաշտին արթնանալով, կը սկսի հրացանազուծիւնը աւերակ ջրաղացի վրա: Այլևս թող կրակեն, որքան կուզեն: Մերոնք գնացել ազատուել են: Աղօթարանը շրջաւած կը հասնեն Պուլանքի Շէխ-Աղուբ գիւղը ու նրա մտակալ ձորերից մէկի մէջ կը պահուեն:

Այդ գիւղը Մուշեղին շատ լաւ ծածօթ կը լինի, որովհետև հոն հարս է գացած իր քոյրերէն Անթառամը:

Յաջորդ առաւուտ լուսուն Մուշեղը գիւղ կ'երթայ, իր քրոջ տուն, հաց բերելու իր սովահար ընկերներին:

Մուշեղը հազու քանի մը ժամու չափ կրնայ մնալ Շէխ-Աղուբ գիւղի սահմաններում: Իրիկնադէմին Կորէն եկող հայ ճամբորդ մը լուր կը բերէ, թէ Կոր են հասել թիւրք գործերը և քերդգիւրը: Մուշեղ այդ լուրը տաններուն պէս իր երկու ընկերներով իսկոյն կը հեռանայ այդ տեղէն: Երկու գիւղը ճամբա թալելէ յետոյ, կը հասնեն Ախլաթ դաւառի Փրիտու և Սպրաձորի մէջ-

տեղ գտնուող Մուշխան ձորը, ու ժայռերի մէջ կը ծածկուեն:

Մուշեղ նպատակ կունենայ դէպի Նեմրութ երթալ, բայց սատարի յոգնութեան և այլ պատճառներով յարմար կը տեսնեն հոն մնալ:

Է. ՍՈՒՉԽԱՆ-ՁՈՐԻ ԿՈՒՒՐ

Երբ կը մտնեն յիշեալ ձորը, արդէն լոյսը բացւած կը լինի: Նախաճաշէն յետոյ, Մուշեղը գետափ կը շնչէ ջուր խմելու: Այդ ժամանակ վերեւ ճանապարհով անցնող Ալի-Բէգի խալաճներէն չեքեղ մը տեսնելով Մուշեղին, ձայն կը տայ, բայց Մուշեղ չի պատասխաներ: Ատոր վրա չեքեղը հրացան մը կարճակէ դէպի Մուշեղը: Բարբախտաբար, գնդակը պարագայ կանցնի: Մէկ երկու անգամ ևս արձակելով չեքեղը կը թողնի ու կը հեռանայ: Յետոյ ճամբան հանդիպող գիւղացիներին կուղարկի Փրիտու, լուր տալու Փրիտուներէ մասին:

Մուշեղը ջուր խմելէ վերջ, կը վերադառնայ ընկերներէ մօտ ու գիւրքեր կը բռնեն:

Երկար չի տեսի. Փրիտուէն զօրքեր, թիւով 200, Ախլաթեան և Պուլիի գիւղերի չեքեղները Ալի Բէգի առաջնորդութեամբ, Ախլաթի զօրքերն ու թիւրքերը մօտ հարիւր ձիաւորներ կը գան ու կը պաշարեն Մուշեղի ապաստանած վայրը: Կուր անխուսափելի կը դառնայ: Երկու կողմից ալ կատաղութեամբ կը կուեն: Յոյն թափով կը շարունակեն մինչև իրիկուն: Թշնամու կողմից բաւականաչափ դիպակներ կը մտնի փուսած գետնի վրա, բայց Մուշեղի կողմից մէկուն քիթն անգամ չի արիւնի:

Արևը դեռ մայր չ'տած, յանկարծ Մուշեղ կը տեսնի, որ 35 գինւած մարդիկ քերդի տարագրով դէպի իրանց կողմը կը գան՝ Մուշեղը կը յայտնի ստոնց գալլել էր ընկերներին, միևնոյն ժամանակ կասի. «Պէտք է ամէն գնով արգելել անոնց մօտենալ, որովհետև այդ տեղէն է կախած մեր փրկութիւնը»: Ու կը սկսի կապել դէպի եկողները, որոնք նոյնպէս ստիպուած կը պատասխանեն: Մուշեղը թէ կը կրակի և թէ լարած ուշադրութեամբ կուսումնասիրէ եկողները:

Յանկարծ անպատիւիօրէն կը լսի Մերոբ Աղբիւրի ձայնը, որ կը պոռայ:

— «Մուշեղ ջան, այդ ի՞նչ է քո արածը, ես ահաւոր կուրիւնք մղելով հազու յաջողեցայ թշնամու շղթան պատռել ու անցնել և ձեզ օգնութեան հասնել, դուն մեր վրա կրակ կը բանաս:

Մուշեղը գիւրքէն ցատկելով կը վազի դէպի կտրիճ Սերոբը, ու կը փաթառէ նրա վրով: Մուշեղը անշափ կուրախանայ Սերոբի ներկայութիւնից: Կարծես թէ մեռած էր և յարութիւն կանչէր:

Նոր ուժերով, ու կորովով բոլորը միասին կը շարունակեն արեւմտեղ կուրը մինչև ուշ գիւրք: Կէս գիւրքէն յետոյ, Սերոբը, Մուշեղը և միւս ընկերները միասին կը սկսեն կամաց կամաց ձորն ի վեր բարձրանալ, մերթ կուելով, մերթ նահանջելով, մինչև որ կը

յաջողին թշնամու շղթան կտրել ու անցնել դէպի Նեմ-  
րութ լեռը:

Մերոնց հետանալէն յետոյ, թշնամին վերջ կուտայ  
իր կորստաբեր կրօնին:

Իսկ Մուշեղը և Սեւորբը իրենց բոլոր կործնական-  
ներով միասին կը հուսաբան Նեմրութ լեռան զազաթի  
վրտ, սպաս արծիւների նման:

\* \* \*

ԱՒԵՐԱԿ ԶՐԱՂԱՅԻ ԵՐԳԸ

Առաքել, Մուշեղ լեռներից իջան,  
լեռներ ու ձորեր, եղբայր ջան, օթևան եղան:  
Եկանք-հասանք պատերազմի դաշտ  
Քայ Մուշեղ առիծ, եղբայր ջան, մենք ենք  
ընկերները:

Եկանք հասանք կապալինա սար  
Անբողջ քիւրդ ամբոյսը մեզ վրա լցնեցաւ:  
Գե՛հ, կուէ՛ք տղի՛ք, դե՛հ կուէ՛ք քայ քայ,  
Տիրոջ սուրբ կամով, եղբայր ջան, մենք  
կերբամք առաջ:

Մենք ենք առիծ, անոնք են ագուս.  
Չարս հազար հոգի, եղբայր ջան, արեցինք սակաւ:  
Եկանք-հասանք առիտակ ջաղաց,  
Աւերակ ջաղաց, եղբայր ջան, օթևան եղանք:  
Սարեր ու քարեր մեզ վերա դարձան մարդ,  
Աւերակ ջաղաց, եղբայր ջան, մեզի օգնեց շատ:  
Աստուծ աներէ կախուել ըսած գեղ,  
Կորուստ տեցինք, եղբայր ջան, քայ Մուշեղ  
գուր տեղ:

Մուշեղը և ընկերքը իսխակ գեղ մտան  
Միամիտ սրտով, եղբայր ջան, տան մէջն ալ  
նստան:

Յարութիւն իր եղբայր քիւրդին դիմեցին,  
Մուշեղի մարմինը, եղբայր ջան, գետին փռեցին:  
Աստուտ լուսուն պոսն չալեցին,  
Մալեքրան քիւրդեր, եղբայր ջան, խումբեր  
կազմեցին:

Յարութիւն իր եղբայր խորհուրդ կազմեցին  
Աստուծ կրակը իրանց վրա թափեցին:  
Յարութիւն իւր եղբայրը Բաղէ՛զ գնացին  
Մուշեղի մարմինը, հոգի ջան, փաշիմ զրկեցին:  
Մուշեղը պոռաց, ազնիւ ընկերներ,  
Մուշեղի վրէժ, եղբայր ջան, շուտով հանեցէ՛ք:

ՂԱԶԱՐ

Լ Օ Է Ա Ձ Է Ի Ա Հ Ա Ք Ե Կ Ո Ի Մ Ը

1905-ի ուսական առաջին յեղափոխութեան վի-  
ժուժից յետոյ, որի պատճառները շատ բարդ են, իրենց  
յանդգնութեամբ և պատանութեամբ աշգի ընկան մի  
չարք ցարձական պաշտօնականներ, մասնաւորապէս Կոմ-  
կասի մէջ:

Սրանց թւին պէտք է դասել նաև Լօյաձէին, որ 1906

թիւ ընթացքում Թիֆլիսի մէջ զլիսուորապէս իր ազ-  
գակից վրացի յեղափոխականների ձերբակալմամբ և  
վերջիններին կողմից իր վրա կատարւած մի շարք ան-  
յաջող մահափորձերի պատճառով, օրւան մարդ էր  
դարձել:

Ինչպէս լսել եմ, Լօյաձէն մեծ դեր է կատարել  
կողմասեան փոխարքայ տիրահաշտակ Գոյեցիւնի դէմ  
անյաջող մահափորձ կատարող հնչակեան ահաբեկիչ-  
ների ձերբակալութեան ժամանակ, դէպքի պահուն  
պատահաբար փողոցով անցնելիս: Յետոյ մասնակցել է,  
որպէս սպայ ուսուցանողական պատերազմին, բայց  
փոխանակ թշնամու դէմ կուրուս, սպանւած ուսու  
սպանների գրգռաններում պիլոտներ կատարելիս ձեր-  
բակալւել է և զինուորա-դաշտային դատարանի կողմից  
մահաւն դատապարտւել, բայց Գոյեցիւնի միջնորդու-  
թեամբ, ներման է արժանանում և վերադառնալով  
Կողկաս, մտնում է Թիֆլիսում ոստիկանական ծառա-  
յութեան մէջ:

Թիֆլիսում Լօյաձէին կատալարութիւնը մեծ լիա-  
զօրութիւններով 1907 թիւ յունւարի սկզբներին ու-  
ղարկեց Գանձակ, որտեղից պէտք է անցնէր Շուշի,  
Բազու և այլա, որպէս վարձատրութիւն յեղափոխ-  
ականների դէմ իր յայտուն գործունէութեան, Պետեր-  
բուրգում պիտի նշանակէր Պետական Գումայի ոստի-  
կանագետ:

Լօյաձէն Թիֆլիսից Գանձակ է հասնում 1907-ի  
յունւարի սկզբները, ատուտեան ժամը 6-ին և մինչև  
նրա վազոնից իջնելը և կայարանից դէպի քաղաք մեկ-  
նելու ընդմէջ, տեղական ոստիկանութիւնը դադարե-  
ցնում է Լրթեկը: Չուգարիպութեամբ Լօյաձէի եկած  
վազոնով Գանձակից Բազու է մեկնում ընկ. Ա. Գ.  
Գանձակցի մեր հին ընկեր Տիգրան Ստեփաննանի հետ:  
Իսկ Լօյաձէն մի խումբ ոստիկաններով և ժանդարմնե-  
րով շրջապատւած, ուղարկել անցնել է հակական քա-  
ղաքամասը և խուզարկում իրաւարան Նիկ. Բաբաբեկ-  
վեանի բնակարանը յատկապէս ընկ. Ա. Գ.-ին ձեր-  
բակալելու համար, որպէս ներկայացուցիչ Հ. Յ. Գ.  
Արեւելեան Բիւրոյի և կազմակերպիչ Գանձակի ինքնա-  
պաշտպանութեան, հայ-թրքական ընդհարումների ժա-  
մանակ:

1906ի վերջին ինքնապաշտպանութեան գործը հաշ-  
ւեյարդարի էր ենթարկւած: Բոլոր զինուորները արձակ-  
ւած, դէնքերը ապահով վայրերում տեղաւորւած, դրա-  
մական և զինուորական հաշիւները կազմւած, ժողովրդի  
կողմից նշանակւած մասնագէտներ (բոլորն էլ հակա-  
դաշնակցական) քննութեանը ենթարկւած և մեծ գնա-  
հատութեան արժանացած:

Պարզ է, որ Լօյաձէի համար առաջին խոշոր որսը  
կը լինէր ընկ. Ա. Գ., եթէ մի քանի ժամով ևս ընկերը  
մտար Գանձակում:

Գանձակի ազգաբնակչութիւնը բազմազան լինելով  
զլիսուորապէս երկու ազգերից, հայերից և թուրքերից,  
պարզ է, որ Լօյաձէն Գանձակ էր ուղարկւած արտա-  
կարգ իրաւունքներով, խուզարկութիւններ և ձերբա-  
կալութիւններ կատարելու յատկապէս զուտ հայկական  
քաղաքամասում:

Մեր ժողովուրդը շատ էր ենթարկուել խուզարկու-

թիւնները, ձերբակալութիւնները և հազար ու մի տե- սակ չարչարանքները ոռու պաշտօնեաների կողմից, բայց Լօյաձէի պէս աւարտու, բիրտ ու կռուիտ հրէշի չէր հանդիպել: Եկած օրից սկսած ամէն գիշեր հարիւր ձիւտեր կողակներով, ոտտիկաններով ու ժանդարմնե- րով արշալանով էր հայկական քաղաքամասը և խուզարկու- կութիւններ ու ձերբակալութիւններ կատարում: Ինքը անձամբ գլխատար պէս խուզարկում էր կանանց զար- դերի տուփերը և հաւանածները գրաւում: Այս քաղաք- ձակ աստղակութեան դէմ բողոքող կանայք անգամ չէին ազատուում ատրճանակի կրթով հասցրած հար- ւածներին:

Հրէշ Լօյաձէն իր դործ դրած բռնութիւններով և աւագակալին արարքներով սոսկալի վրդովմունք առա- ջացրի և նրան դիտակահարելու հարցը դարձաւ պա- հանջ:

Ինչ խօսք, որ Հ.Յ.Դ. Ալեքստանի (Փանձակի) Կ. Կոմիտէն չէր կարող անպատիժ թողնել Լօյաձէի պէս հրէշին: Եւ Լօյաձէի մահան վճիռը արձակեց, դործա- դրութիւնը յանձնելով գանձակեցի ընկ. Նիկօլին: Ընկերը նոր էր վերադառնում Վասպուրականից, Շարեւի յայտնի էր «Արբատ» անունով:

Ընկ. Նիկօլը 1904-ին, որպէս պահակապետ Ալեք- սանդրապօլի պետական զինական պահեստի, երկար ամիսներ ընթացքում, գիշերները պահակ նշանակելով մատահելի հայ զինւորների, յաջողում է սեծաքանակ զատածթերք դուրս բերել և սալլելով սեղագործին մօտակայ հայկական զինուորը, այնտեղից էլ Երևան ու Կարս, Երկիր անցնող խմբերը զինելու համար:

Վերջի վերջոյ զինւորական իշխանութիւնը կոտ- հելով, ձերբակալում է ընկ. Նիկօլին որպէս պահակապ- ետի և իր օգնական դադարեցի Բաղրամեանին: Մի քանի ամսից յետոյ, սրանց յաճողում է մի օր երե- կոյան խաթամոսի բանտից դուրս գալ: Սակայն, փախչելու ժամանակ, դրոյի պահակը նկատելով, սկսում է կրակել մերձեց վրա և Բաղրամեանին օտքից ծանր վերակոտելով նորից ձերբակալում են, իսկ Նիկօ- լին յաջողում է անվտանգ ազատուել: Ապա նա ընկեր Արամի հետ անցնում է Վասպուրական: Մօտ երկու տարի տեղական հարցուկային կռիւններին մասնակցե- րուց յետոյ, վերադարձաւ Փանձակ և լծելով տեղական կուսակցական գործին, դործող դեր կատարեց Լօյաձէի ահաբեկման մէջ: 1908թ. սեպտեմբերին, Հ. Յ. Դ. Արեւիկան Բիւրօի հրահանգով մտաւ Քեռիի խմբի մէջ և մասնակցեց պարսկական յեղափոխական շարժման, որի ընթացքում և զոհեց շամախեցի ընկ. Ռազմիկ Արտէմի հետ, թուրքի մօտ գտնուող հայկական Մու- ժումբար գիւղի կուում: Սրանց մարմինները, յետա- դայում Սոֆիանում գոհած մեր մարտիկներ Մարտի- րոս Չարախչեանի, Կարօի և Սեթօի մարմինները հետ թաղեցին թուրքի հայոց եկեղեցու բակում:

Սոց-դեմոկրատները թիֆլիսում չլայողելով ա- հարեկան ենթարկել Լօյաձէին, Փանձակ էին ուղարկել երկու ահաբեկիչ: Մէկը վրացի, որի մասին պատմում էին, որ 10-15 ահաբեկումներ է կատարել, միւսն էլ զինւորական ծառայութիւնից փախած մի ոռու երիտա- սարդ: Փանձակում սրանց միացաւ գանձակեցի հարէկ

Բլանց Վաղարշը, որպէս տեղական պայմաններին ու վայրին լաւ ծանօթ: Սրա եղբայրն էլ, որպէս դաշ- նակցական աչքի ընկած մարտիկ, մասնակցեց նոյն գործում մերձեց հետ:

Վրացին պահակի պէս մօտ մի հարիւր քայլի վրա անց ու դարձ մի անուժ հայոց եկեղեցու առջևի մայրի վրա. ոռուժ՝ դիմացի, իսկ հայը, իրեն յատուկ շա- տտիտութեամբ, ամբողջ օրը այդ միևնոյն վայրում վիճում էր խմբած երիտասարդների հետ:

Մերոնք՝ Նիկօլը, Բլանց Արշակը, Սեղբակ Ներսիս- ևանը, դարադալեցի Յովհաննէսն ու Մուխին և քանանցի Մուխին նոյն վայրում սպասում էին նոյնպէս Լօյաձէի արբ փողոցով անցնելուն: Եւ որովհետև այս սպասողական դրութիւնը մի քանի օր տևեց, մի մեծ խումբ երիտասարդներ կուսելով մեր և հարէկ ահա- բեկիչների մի քանի օր շարունակ հայոց եկեղեցու մօտ սպասելու նպատակը, շատերը դուռ հետաքրքրութեան համար, ոմանք իրենք էլ անձամբ մասնակցելու նպա- տակով, մինչև ուշ գիշեր չէին հեռանում այդ տեղից: Որպէսզի արտակարգ հաւաքոյթները աչքի չզարնէին, ստիպած էինք խորհուրդ տալ, որ ցրէին: Շատերը ցրում էին, թէ՛ և նորից մի ուրիշ տեղ համարձակում, բայց եղան անհատներ էլ, որ պատասխանեցին թէ՛ «Պահ, ձերը տրաքումա, մերը չէ՞»: Պարզ էր, որ կողմնակի անձնաւորութիւններ էլ պէտք է մասնակ- ցէին Լօյաձէի ահաբեկմանը. խաշածե կրակից թերևս մերձեցից գոհեր տարով: Եւ կատարեց մեր յոռետե- սութիւնը:

Լօյաձէն կառքով թրքական քաղաքամասից դալիս, հայոց եկեղեցու մօտով անցնում է Չայրու թաղամա- սում գտնուող հայկական քաղաքամասի ոտտիկանատուն, իր հետ ունենակով թիֆլիսից բերած օտեսուի թիկնա- պահը կառապանի կողքին նստած և դիմացը՝ մի հայ մասնիչ: Այդ ժամանակ մերոնք ճաշելիս են լինում նոյն փողոցի վրա գտնուող «Ճիօրիա» հայկական ճաշա- րանում, իսկ հարէկ ահաբեկիչները լինում են իրենց սպասած տեղը, որտեղից անցնում է Լօյաձէի կառքը:

Մինչև ոտտիկանատնից վերադառնալը, մերոնք լուրը աննելով, դալիս սպասում են Չայրուից հայոց եկեղեցու մօտով դէպի թրքական քաղաքամաս տանող փողոցի աղբուրի մօտ: Լօյաձէի կառքը մտնելուն պէս Նիկօլը մտախալ մասալով Սանթրօի խառնութեմ պահ տաւ՝ որտեղական հարցանի երկու խողովակից միաժամանակ կրակում է կառքի մէջ, չիտթելու հա- մար Լօյաձէին, որը յայտնի էր որպէս յանուղան կուղ: Եւ ապա խաշածուղ կրակի տակ վազում է կառքի յե- տակից: Ճիշտ հայոց առաջնորդարանի առջև, կառքը դիպչելով հակա մէկ ծառի ցիցուում է և Լօյաձէն գլոր- ւում է առուի մէջ, որտեղից չորքոտանիի պէս առաջա- նում է դէպի Նիկօլանների խառնութեմ: Շէմբին վրա են հանձնում մեր ահաբեկիչները, տեղի ու տեղը զնդակա- հարում և յետոյ անյայտանում:

Լօյաձէի կառքի վրա տեղացող խաշածե գնդակնե- լից կրօքեց մահացու վիրաւորում է Բանանցի Մու- խին, որ իրեն մի կերպ նետելով եկեղեցու բակը, շուճը փչում է մեր ուսանող ընկերներից մէկի բաղուկնե- րի մէջ: Դիտելը խոտով լիքը սայլով դաղտնի տեղա-

փոխում են մի ապահով թաղ և նոյն գիշերը հողին յանձնուած վերին գերեզմանատանը:

Մուխին պետական գիււորական ծառայութիւն ստացած՝ Հայ-թրքական ընդհարումներին աչքի ընկաւ իր քաջութեամբ: Ընդհարումներից յետոյ Գանձակում յծւեց իր արհեստին (որմնադիր էր): Միևնոյն ժամանակ, որպէս մէր ամենապատահելի մարտիկներից մէկը, գործած մասնակցութիւն ունեցաւ մեր զէնքերի տեղափոխութեան և տեղաւորման գործում:

Լոյսաձէի իրիւրու ժամանակ Նիդեանների խանութում է լինում Գանձակի նահանգապետ Ֆլէյշերի կինը, որ միասնիկ հետ փախչում է ղէպի խանութի յետևի կողմը: Իսկ Նիդեանների մեծ եղբայրը Լոյսաձէի դիակը նետում է իր խանութի շէմքից ղէպի մայթը, ենթադրելով թէ այդպիսով ինքը և միւս ականատեսները կազատւեն ոստիկանական և դատական հետապնդումից: Էս-ղեկ ահաբեկիչներից միայն Հայն էր, այն էլ Լոյսաձէի իրիւրուց յետոյ, մտտ հարիւր քայլ հեռաւորութեան վրա, ոգի մէջ պարպում է ատրճանակը: Քիչ հեռուից պարզ քաղաքացու պէս դիտող Հայկական քաղաքամասի ոստիկանապետ Բակրաձէն (վրացի անվանա ծերունի) հարցնում է, թէ այս պարոնը ինչու է ոգի մէջ կրակում: Իր թիկնապահ Հայ ոստիկանը (մեր Համակիրներից), կարծելով, որ կրակողը մերոնցից է, ստում է, որ սա էլ կրակում է, որ ժողովուրդը ջրելի:

Այս ղէպըքի մի քանի ամիս վերջը, ժընկուած հրատարակող «Իսկրա» ամսագրում էս-ղեկները իրենց վերագրեցին Լոյսաձէի տերորը:

Ահաբեկում կատարելուց հաջիւ կէս ժամ վերջն էր, որ հասան ոստիկանութիւնը, գորբը և քննչը: Ժողովուրդը ցրած էր և մայթի վրա փուած՝ Լոյսաձէի դիակը: Շէմած այս յանդուգն քայլից, կառավարութիւնը մի քանի օր ո՛չ մի խուզարկութիւն կամ ձերբակալութիւն չկատարեց: Օրեր յետոյ միայն, ղէպը կատարած վայրի բոլոր խանութպաններին ոստիկանատուն կանչելով, իրք թէ ինչ որ թուղթ ստորագրելու համար, մի վաշտ գործով չըջապատած՝ ուղարկում են բանտ, որը գտնուած է թրքական քաղաքամասում:

Ամբողջ քերու ամիս փակ մնացին խանութները: 42 Հայ խանութպաններ մի շարք հարցաքննութիւնների ընթացքում պատասխանել էին, թէ իրենք կրակոցը լսելու պէս՝ կարծելով թէ Նորից Հայ-թրքական ընդհարումներ են սկսուած, խանութները թողել փախել են:

Կառավարութիւնը երկու ամիս պահելուց յետոյ, ստիպւած եղաւ ազատ արձակել բոլոր ձերբակալուածներին, քանի որ չգտնեց ոչ ոք, որ այս կամ այն անհատի ղէմ ցուցնուէնքեր տար:

Ի պատիւ այդ 42 Հայ վաճառականների, պէտք է ասել, որ իրենց շատ լաւ էին պահել բանտում: Ոչ ոք իրեն թոյլ չէր տւել մատնութիւններ անել: Ընդհակառակն բոլորն էլ իրենց պատիւ էին համարում, որ Լոյսաձէի ահաբեկման պատճառով բանտարկւել են:

Լոյսաձէի ահաբեկումը կատարեց ժողովրդի պահանջով և, հետևաբար, ոչ մի բողբջի կամ տրտունջի ու մատնութեան տեղիք չուեց:

ԲՆՆՕ

# ԹԻ Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ի Ջ

Քեմալական կառավարութիւնը ամէն տարի կորոչէ ոյժ տալ գաղթականներու տեղաւորման քաղաքականութեան, խոշոր գումարներ յատկացնելով: Անցեալ տարի վճռեց յառաջ տանել նաև լեռնական Քիւրտերը գիւղերու մէջ տեղաւորելու քաղաքականութիւնը, և 300,000 ոսկի վարկ սահմանեց: Միևնոյն ստեին հողատունջ դրկեց Հայկական ցիրուցան բեկորները:

Ի՞նչ եղած է մինչև հիմա կատարւած աշխատանքներուն արդիւնքը:

Թիւրք թերթերու մէջ հրատարակւած պաշտօնական վիճակագրութեան մը համաձայն (5 յունւար), 1921-1928, այսինքն ութ տարւան ընթացքին 234,546 այր և 228,988 կին, համարուած 463,534 գաղթականներ էկած և տեղաւորւած են: Ստորև կարտասպենք մանրամասն ցուցակը, որ կրնայ գաղափար մը տալ նոր համախորհումներու մասին:—

Նահանգ	այր	կին	համագումար որոշ նահանգներու
Ատանա	4,153	4,287	
Ափ. Գարախիսար	541	504	
Ագսէրայ	1,726	1,560	
Ամասիա	1,917	1,927	
Անթալիա	2,428	2,492	
Էնկիլիթի	878	773	
Արդուին	24	22	46
Այսրն	3,387	3,243	
Պալքէտիք	18,445	18,729	
Պայադիտ	1,532	1,324	2,856
Պիլէճիք	2,154	2,307	
Պիթլիս	1,604	2,026	3,630
Պոլու	95	90	
Պուրտար	234	214	

Պրուսա	17,393	17,060	
Ճ. Պերէէէթ	1,573	1,360	
Տարասմել	5,802	5,836	
Չորում	825	750	
Տեմրզի	1,382	1,346	
Տիարպէզբեր	255	229	484
Էտիրմէ	24,93	24,510	
Խարբերդ	1,175	949	2,124
Երզնկա	55	61	116
Կարին	492	603	1,095
Էսկիշէիլ	1,303	1,264	
Ախրսոն	321	302	
Կիրթար	381	430	
Հէֆեսարի	176	134	
Իչ էլի	528	509	
Իզմիր	15,788	15,714	
Սպարքա	603	572	
Պոլիս	17,448	19,039	
Կարս	1,286	1,226	2,502
Գաւաթէմունի	464	378	
Կեսարիա	3,794	3,486	
Քըրքուար էլի	18,011	15,108	
Քըրշէիլ	94	99	
Գոնա էլի	14,307	13,380	
Գոմիա	2,751	2,798	
Քէօրթսահա	1,017	864	
Մլարիա	42	34	
Մանիսա	6,978	6,851	
Մարտին	103	97	
Մարաշ	603	540	
Մերսին	1,675	1,655	
Մուշլա	2,488	2,480	
Նիկոյէ	8,107	7,595	
Օրտու	583	605	
Սամսոն	11,761	10,907	
Սինոպ	638	551	
Սըլուպ	3,580	3,959	7,539
Շ. Գարսիսար	3,122	2,757	
Ռոտուքօ	16,563	17,165	
Տրպալզոն	246	158	
Թոքատ	4,455	3,763	
Ուլլա	183	101	
Վան	150	125	275
Եռզլատ	688	747	
Ջոնկուլտաֆ	637	648	
Գումար	234,546	288,988	

Ինչպէս կը տեսնէք, տեղաւորման ծանրութիւնը Հակած է դէպի ժողովուրդը և քիչ-չատ բարգաւաճ նահանգները: Օրինակ՝ Պարթէսիւր, որ Պոլսոյ զքին տակ է (18,445 այր և 18,729 կին. Համադումար 37,174 հոգի). Պրուսա (17,393 այր, 17,060 կին), Էտիրմէ (24,931 այր, 24,510 կին), Իզմիր (15,788 այր, 15,714 կին), Պոլիս (17,448 այր, 19,039 կին), Քըրքուարէիլ (Նարեկին Քրքէ Քիլիսէ, 18,011 այր, 15,108 կին), Գոնա էլի (14,307 այր, 13,380 կին), Սամսոն (11,761 այր, 10,907 կին), Ռոտուքօ (16,563 այր, 17,165 կին):

Քանի դէպի ներս կերթանք, այնքան կը նստանայ Հոսանքը: Այսպէս, Գոնիայի նահանգէն Նիկոյէ կը հաշւէ 8,107 այր և 7595 կին. ընդամենը 15,702 դաղթական, իսկ ծաղկեալ Ատանան՝ միայն 4,153 այր և 4,287 կին = 8,440 հոգի: Ողբալի է նոյնիսկ ծովեզերեայ Տրապիզոնի բաժինը — 246 այր և 158 կին:

Ինչ կը վերաբերի այսպէս կոչուած արևելեան նահանգներուն, աւելի քան պերճախօս է պատկերը. — Արզուիմ՝ 46 հոգի, Պայսախո՝ 2,856, Պիքլիս՝ 3,630 (Մուշի անունը չկայ). Տիգրամակետր՝ 484, Խարբերդ՝ 2,124, Երզնկա՝ 116, Կարին՝ 1,095, Կարս՝ 2,502, Վան՝ 275: Գումար՝ 13,128 հոգի: Սերաստիան ալ հաշուելով (7,539), Համադումար՝ 20,667 հոգի տեղաւորուած են արևելեան նահանգներուն մէջ, վերջին ութ տարւան ընթացքին: Այն ալ՝ Համաձայն իրենց իսկ վիճակագրութեան:

Դիւրին է եզրակացնել թէ ինչ Համեմատութիւն կը կազմէ այս 20,667 հոգին՝ 463,534ին դիմաց, ենթադրելով որ բոլորն ալ իսկապէս իրենց յատկացուած տեղերուն մէջ մնացել են, 1921 էն ի վեր... Մինչդեռ պարբերաբար բազմաթիւ փաստեր կը յիշին խմբական փոխադասումներու: Յետոյ, չմոռնանք որ դաղթականներուն ջանջախիչ մեծամասնութիւնը, 400,000ը, եթէ ոչ աւելին, բուն է կամ են, իբրև Հեռեանք Յունաստանի Հետ կատարուած փոխանակութեան: Թէև թիւը թերթերը շնն յիշեր այս պարագան, բայց ժամանակաշրջանի թւականը (1921-1928) կը մատնէ ամէն բան:

\* \* \*

Քեմալայականութեան նոր նշանախօսքն է, ինչպէս յիշած էինք նախորդ Համարով, սոստանական պատերազմը: Պատերազմ՝ օտար արտադրութեանց դէմ, ծայր աստիճան խնայողութիւն և յետոյ զարգացում՝ ներքին ճարտարադրութեան: Պայթարին գլուխն անցած է կուսակցութիւնը ինք, չարժման մէջ դնելով պետական Հաստատութիւնները, զանազան ընկերութիւններ և իր հրամաններուն Հրու Հպատակ մամուլ մը: Իւրաքանչիւր թերթի նոր զազաբականութիւնը կարծարծէ Համաձայն իր Հասկացողութեան և ճաշակին. և արդէն յառաջ էկած է տեսակ մը մոլորումներ, եթէ ոչ Հակօտար շարժում: Հրատարակութիւններ կըլլան և ճառեր կը խօսուին՝ թիւր ազգասիրութեամբ, դրզուելով ամբողջին անտաշ բնազդները: Միւս կողմէ, մինչ կողբային դեռ երէկ, այսօր այնպէս կը ցուցնեն թէ Հրաչիւք իմն ծաղկած, կատարելութեան Հասած է տեղական ճարտարադրութիւնը: Այսպէս, մետաքսը կը հստի Պրուսայի մանարաններէն, կերպարը, բուրդը, բամպակը, ամէն բան պատրաստ է:

Յունար 10-ին, Ազգային Տնտեսութեան և Ոնայողութեան Ընկերութիւնը Պոլսոյ Համալսարանին մէջ կազմակերպած էր տեղական ապրանքներու ցուցահանդէս մը, յատկապէս կիններու Համար: Ներկայ էր մեծ բազմութիւն: Թրքուհիները հրաւիրուած էին խնայողութեան, Հայրենասիրութեան, տեղական ապրանքներու առաւելութեան մասին խրատներ լսելու և մանուսագրութիւններուն օրինակ Հանդիսանալու: Բայց և այնպէս, անպատեհութիւն չտեսան Ֆրանսական, անգլիական

կամ գերմանական անուշաոտութիւններով, հազուատներով, մուշտակներով և զիւարկներով հանդիսաւոր մուտք գործելու: Առաջին ճտուր խօսեցաւ ընկերութեան անգամներէն Նաքիթ հանրմ, կրակոտ արտաբախտութիւններով:

— Ամէն տարի մեր վաստակին, ազգային հարստութեան առնւազն 50 միլիոն ոսկին կը հոսի կերթայ դէպի օտար երկիրներ: Բոլորս ալ կըմբռնենք, որ այս 50 միլիոն ոսկին մայր հայրենիքի կուրծքին վրա բացւած 50 միլիոն վէրք է... Ինչպէս ամէն բանի մէջ, ազգային անտեսութեան և խնայողութեան հարցին մէջ ալ, առաջին գծին վրա կինը պիտի գտնուի: Դուրս գացած 50 միլիոն ոսկին կնոջ ձեռքով գացած է: Թիւրք կնոջ ամենէն մեծ պարտականութիւնն այս է: Ազգային անտեսութիւնը ձեզմէ կը պահանջէ մտնումէ զգուշանալ, առաւելագոյն խնայողութիւնն ընել և տեղական աղբիւրները ու արտագրութիւններ գործածել:

Յետոյ կարգաջ յանձնառութեան գիր մը որով թէկնածունքը կը խոստանան գործադրել ընկերակցութեան որոշումները, տեղական ապրանք գործածել և գործածել տալ ուրիշներուն: Անգամակցութեան տուրքն է՝ տարեկան մէկ ոսկի:

Ինչպէս ըսինք, Թիւրքերը շէն քաշիբ աւետարելու բեր տարածել, պայքարին ոյժ տալու համար: Ամէն օր դիւտ մը. «Այս ալ ունիք, բայց լուր չունիք»: Թէև, միւս կողմէ, կը խոստովանին թէ սուրճին տեղ առաջարկւած թմբին անուամ գուրուկն կուզայ...

Այս պայքարն ալ պատրակ պիտի դառնայ գանազան ասպարէզներէ քելու ոչ-Թիւրքերը: «Փոլիթիքա» ուրախութեամբ կը ծանուցանէ.

— «Վերջին օրերն ներածուածը բոլորովին պակասած է և երթալով աւել պիտի պակսի: Այսօր 500ի չափ մաքսային յանձնակատարներ գրեթէ անգործութեան դատապարտուած են, և միայն ներքին փոխադրութեան գործ կը մնայ»: (Ինչ որ, անյուշտ, վերապահուած է ուղղափառ, իսլամ Թիւրքերուն):

\* \* \*

Նոր պայքարին յանդուրձեան համար, մասնաւորապէս շարժման մէջ դրւած են կիները, որոնք մղիչ ուժեր են մտխուրտ: Թիւրքերոյ մէջ ալ, ինչպէս ամէն տեղ, կիները կրնան գործօն գեր կատարել արտոնին անտեսութեան մէջ: Եւ կառավարութիւնը, մամուլին միջոցաւ, կը թրթռայնէ անոնց փափուկ ջիղերը: «Ազգամ» կարգով բեմ կը հրաւիրէ յայտնի թրքուհիներ, որպէսզի թէլադրութիւններ ուղղեն, ազգային անտեսութեան գարգայման, հետևաբար և խնայողութեան մասին: Իսկ իշխանութիւնը իր մասին ծրագրիներ կործնայ և որոշումներ կուտայ, կանխաւ անկելով երկրին միակ կուսակցութեան՝ «Սալքի» հաւանութիւնը:

Այսպէս, պատրաստուած է հնգամեայ ծրագիր մը, որուն իրականացման համար ամէն տարի 15 միլիոն ոսկի պիտի ծախուի: Մասնաւորապէս ոյժ պիտի տրել կերպասի, թուղթի, շաքարի շինութեան և երկաղգործութեան: Եղած գործարանները պիտի ընդարձակին և գլխերային աշխատանք պիտի հաստատուի, բուրդէ և

բամպակէ կերպաներուն արտադրութիւնը աւելցնելու համար: Միատեսակ կերպասէ հագուստ պիտի պարտադրի պետական պաշտօնեաներուն և դպրոցականներուն համար:

Աւելորդ է բացատրել թէ այս ծրագրիներուն մեծ մասը շատ կը նմանի բուլղարիկան «պիտիցներուն», որոնց ազմուկն ու թեւահանները միշտ կը բարձրանան, իսկ իրականութիւնը կը մնայ տխուր քաշքուշ մը:

Գաղափար մը տալու համար բացւած պայքարին ծանրութեան վրա, խօսիք, նորէն, թեւահաններով: Իրենց իսկ տոմարներէն քաղւած թիւերով:

Համաձայն Թիւրքերոյ մաքսային վիճակագրութեան, 1923-28, վեց տարւան ընթացքին ներածուել է 322,767,000 ոսկիի օտար ապրանք: Այս վիճիւարի գումարին մէջ խոշոր տեղ կը բռնեն բամպակեղէնը՝ 81,000,000 ոսկի, ընդդէմէն և արմախքը՝ 79,351,000, կաշեղէնը (ամէն տեսակի)՝ 37,658,000, բրդեղէնը՝ 29,000,000, սուրճը՝ 24,206,500, բանջարեղէն և մըրրգեղէն՝ 12,733,500, մետաքսեղէն՝ 11,586,000, թէյը՝ 8,396,000: Իրեր յատկանշական պարագայ, յիշենք նաև որ Թիւրքիա նոյն շրջանին արտասահմանէն գնած է 1,713,000 ոսկիի կարագ և 2,355,000 ոսկիի պանիր, հակառակ երկարգործական երկիր ըլլալուն:

Իբրև հետևանք սոյն կացութեան, թրքական դրամը 30% ինկած է վեց տարւան ընթացքին: Կարելի՞ էր ապաստել ուրիշ էլք, երբ Թիւրքերոյ ամբողջ դրամը շահցելով 150,000,000 ոսկին, իսկ միայն վեց տարւան ընթացքին և այն ալ որոշ տեսակի ապրանքներու համար երկրէն դուրս ելած է 322,767,000 ոսկի: Եւ տակաւին հաշիւը չկայ ապառաչներութեանց համար ծախուած գումարներուն, ինչպէս և «քաղաքավարի», «է պէտս գարգացելոց» բաշխուած վարկերուն:

\* \* \*

Յունար 11-ին, Փարիզի մէջ լոյս տեսաւ «La République Enchaînée» (Շղթայուած Հանրապետութիւնը), իբրև Թիւրք ընդդիմադիր օրկան: Զափազանց տեգոյն և անբովանդակ, երևի պիտի դառնայ պարզ լրագրութիւն կամ յիշատակարան: Սպասենք յանրոջ համարներուն, պարզելու համար ամբողջ պատկերը: Թիւրք ռամկապետութեան, որուն օրկան կը հուշակի այս թերթը, առաջնորդութեամբ ներքին գործերու նախկին նախարար Մէհմէտ Ալի պէյի և նախկին երեսփոխան Էօմէր Ծէվզի պէյի: Այս վերջինը սկսած է հրատարակել իր «Յուշերը», իբրև ներկայացուցիչ: Թիւրք Ազգային Պաշտպանութեան», և կը թիւի թէ պիտի պատմէ իրողութիւններ որոնք մեզ ալ կը հետաքրքրեն: Մանաւանդ որ կը գուզադիպին ճակատադրական շրջանի մը, — 1918-1928:

\* \* \*

Բունազաղթը՝ Անատոլիի խորերէն դէպի Սուրիա՝ կանգ առած չէ տակաւին: Եպիփոմը սահմանափակուած կը թիւ Խարբերդի և Տիգրանակետի նահանգներուն մէջ, որոնք Թիւրքերոյ խոցելի կողմերն են, իբրև զբրբաքանակ վայրեր: Սուրիական սահմանը հասած հայա-

ծականներն ալ, մեծ մասով քրդախօս Հայեր են: Ասոնք իրրն ճորտ կը ծառայէին քիւրտ պէճերու ջով, և թիւրք ստորկանութիւնը յանկարծ հաւաքելով, քչեր է գէպի կեդրոն քաղաքներ: Զրկած՝ սպրուտի ամէն միջոց և իրենց գոյքերէն, նաև տարիքին համեմատ ճամբու տուրք վճարելով (տարեկան 10 ոսկի, սկսելով 18 տարեկանէն), խեղճեր հարկադրուեալ են իրենց շունչը աննէլ Սուրխ: Արդէն 3500-ի կը հասնի դաղթողներուն թիւը, և ներկայիս օրսն հրատապ հարցն է անոնց տեղաւորումը, սահմանամերձ թափուր հողերու վրա:

Գաղթի հոսանք մըն ալ կայ, թէև փոքրաթիւ, միջին գաւառներէն, գէպի Պոլիս: Անշուշտ, բարխաւոր են անոնք, որ կը յաջողին լոյս աշխարհ ելլել այս կամ այն ձևով: Իսկ ի՞նչ ընեն մնացողները, մասնաւոր գիւղէն, արտէն արմատախիլ՝ քաղաքի մը փողոցներուն մէջ նետուել յետոյ: Ականաստներ կը պատմեն, որ միայն Պարթերի մէջ հազար հոգի օգնութեան կը սպասեն անօթի ծարաւ, աւելի ճիշտ՝ ճամբու ծախքի մը, ժամ առաջ դուրս նետուելու համար դժտիքէն:

Արտասահմանի մէջ, քիչ-չտտ շարժում սկսած է, օգնութեան հասնելու համար նորեկներուն: Իսկ Երևանի բարեկենսած իշխանութիւնը՝ թրքական բարբարոսութեան այս նոր դահլիճով կը հետաքրքրի այնքան, որքան կուսթէմարայի կառավարութիւնը: Յամի շնորհաց 1930 թ. ապրիլին, յունարի ամսու 10-ին, Փարիզ քաղաքի իրենց օրկանը յայտարարեց սեռով ճերմակի վրա.

— «Թիւրքիաբնակ Հայերը թրքապատակ ըլլալով. մոյնպէս խորհրդային իրաւասութեան սահմաններէն դուրս կը մնան:

«. . . Այս պայմաններուն ներքև, դիւմագիտական կամ քաղաքական բնոյթ կրող ո՛րևէ միջամտութիւն սպասել խորհրդային Միութեան արտաքին գործավարութեան կողմէ ի նպաստ արտասահմանի կամ Թիւրքիոյ Հայերու վերաբերմամբ, առ նազն տղայամտութիւն կըլլայ»:

Գծարխտարար, առաջին տղայամտութիւնը չէ այս...

## Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

### ԲՆՈՐՈՇ ԴԵՊՅԵՐ ԼԵՆԻՆԱԿԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԹԱԻՐԻՁ, 12 Յունւար. — Այստեղ հասած մի պատահական ճամբորդից քաղում եմ հետեւեալ տեղեկութիւնները. —

1. Հոկտեմբերին Պաշ Գեաղիւղում սպանել են մէկ ինչ որ Պալիլ Բէյի, որի տասը գաւակները գնչքի տակ մտած հանել են իրենց չօր վրէժը, սպանել են 7 դիւնուր և երեք հոգու էլ վիրաւորել են: Գիշեր ժամանակ երբ ուզում էին պատուել շլիթան և դուրս գալ տնից (մէկ դիշեր տան մէջ են կուրել)՝ շորս եղբայրները գոհ են գտում, միւս ճը իրենց քրոջ հետ ամբանում են սարքում: Իրենց փեսացուն Գարիլը այս փոռում էր, երբ լսում է իր հարսնացուի փախստական լինելը, անմիջապէս անցնում է փոքր միանում ալը խմբին, որի անդամներ թիւր հետգնակ աւելանալով այժմ հասել է 35-40 հոգու: Գրանջ անդադար դարկում են ալ ու ձախ, իրանց վերջերս պաշարած են: Սոյն թուրք երիտասարդը-Ջալալը գնում է սպանւած բէկի եղբոր՝ Սուլթան բէկին իմաց տալու տեղի ունեցած կուի մասին: Սուլթան բէկը գտնում է Ահարի շրջանում. վերջինս իրենց ամբողջ տարագրութեան դուրսն է և բուրն էլ ստան են, որ եթէ Սուլթան բէկը շարժուի, մօտ 500 տարազիներն նրա հետ են: Հաւանական է, որ դարնան մէկ խրտում սկսի:

2. Գրատակ կուած հայ դիւղում մի քանի ամիս առաջ մէկ թուրք կոմունիստ սիրահարում է մէկ հայ աղջկայ վրա: Աղջիկը չի գնում, ծնողներն էլ չեն տա-

լիս: Թուրքը սպանում է աղջկայ չօրը: Չեկան արդարացնում է թուրքին, իսկ թողքողներին մեղադրում, որ դուք սպալան խտրութիւն էք յարուցանում ժողովրդի մէջ: Աղջկայ փեսացուն (հայ) Բազէի նաւթահանքերից մէկում լսում է այդ լուրը և դալիս թուրքին սպանում է. իսկ աղջիկն ու մայրը արդէն անցած են լինում պարսից փոքր, Ղարապաղ:

3. Հանդում կոմբիլիներ ժողովի ժամանակ, հակաճառում է մէկ երիտասարդ տղայ: Կուրակների խնդրի համար ինչ որ ձախ որոշումներ են եղել, թէ կուրակներին պիտի նորից ուղարկութեան առարկայ դարձնել: Չեկայի խողովակով հակաճառող տղային յայտարարել են բոյկոտ, կուրակ և ձայնագործի, ապա 3 ամիս բանտ: Անմիջապէս բանտ են նետում: Երեք ամիսը լրացաւ նոյեմբերին, հանեցին դուրս:

«Կուրակ և ձայնագործի» տղան բանտից դուրս դառուց անմիջապէս յետոյ, սպանել է նոյն ժողովի նախագահին և փախել: Այդ առթիւ Հանդում՝ 12 հոգի ձերբակալուեցին, որոնցից 10 հոգուն բաց թողեցին, իսկ փախչողի չօրն ու եղբոր տարան. թէ ո՞րը յայտնի չէ:

4. Այս կարծեմ լսած պիտի լինէք, որ Մեղրիում կոմունիստները մէկ տէրտէրի տերրի են տալիս, երբ քահանան պատարագի ընթացքին խօսում էր Գրիտոսի առակներից: Տէրտէրի աղաները, շորս հոգի, իրենց հօրեղբայր-մօրեղբայրներով և բարեկամներով 17 հոգի, նահատակի թաղումից անմիջապէս յետոյ, երբ մէկ երիտասարդ դամբանական է կարգում, առանձնա-

նում են և քաշուս սարերն ու նշանաւոր վայրեր, որ-  
տեղից պետական գործեր կամ պաշտօնեաներ պիտի  
անցնէին: Մի քանի օրում, լուրերի համաձայն, սպա-  
նում են 18 զինւորներ և 40-ի շարի կոմիտէի, կոմսոմոլ  
և այլն տղայք: Չանցած շատ ժամանակ ըմբոստները  
բազմանում են և շարժման ընթացքում 60-70ի շարի  
բոլշևիկ զինւորներ սպանում:

Թուրք փախստականները յարձակւել են թղթատար  
կտաքի վրա, սպանել երկու զինւոր, մէկ կառուպան և  
5,800 բուրլի գրամ զրանել:

« Թ Ա Լ Ա Ն Ի Գ Ի Շ Ե Ր »

Պետական գանձարկը վալիտայով լցնելու և երեկ  
հակայեղափոխական նախկին ու նոր հարուստներին մի  
վերջին յարած էլ հասցնելու համար, խորհրդային  
կառավարութիւնը հնարել ու գործի է դրել բունագրաւ-  
ման մի նոր, շտեմնած միջոց:

Մոսկւայից սկսած մինչև Երևան բոլոր քաղաքնե-  
րի մէջ աչքի ընկնող նախկին ու նոր հարուստ համար-  
ւածների տները նախապէս ցուցակագրում են և յուն-  
ւար 4-ի դիշերը ոտքի հանելով Ձեկայի ու բոլոր յա-  
տուկ գործասերն ու պաշտօնեաները, շրջապատում  
վերոյիշեալ տները և խուզարկում:

Իանից երևում է, որ այս անգամ փնտռում է ոչ  
թէ թաղւած հակայեղափոխական կամ անլեզալ թղթի-  
կտոր, այլ... ոսկի ու արծաթ և թանկագին հաղուստ-  
ներ:

Մինչև լոյս տեսող մանրակրկիտ խուզարկութիւնը

երևան է հանում քաղաքացիների վերջին, ու շխաղ-  
ցրած, հագուստները, ժամացոյց, մատանի, գդալ,  
բաժակակալ, վերարկու, հոշիկ և այլն:

Այս ամենը «բուրժուական» է սակայն, հաւաքում  
են որոշւած վայրերը, որտեղից ժամանակին գալիս են  
պետական օթոնները և տեղափոխում:

Սարափաճար քաղաքացիները, ինչ սակ կուզէ,  
որ ծպուտ անգամ չեն հանում: Նախ՝ դնացած իրերի  
վրա իրենց գլուխներն էլ կարող էր գնալ և Երկրորդ՝  
խօսելուց ու հարցնելուց ոչ մի օգուտ չկար:

Լոյսը բացում է և անցած գիշերուայ անուներ դըր-  
ւում է «թայանի գիշեր»:

«Թայանի գիշերը» ամենից խիստ եղել է Թիֆլիս-  
ում և Երևանում:

Ն Ո Ր Ձ Ե Ր Բ Ա Կ Ա Լ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հայաստանէն վերջին պահուն ստացանք հետեւեալ  
տեղեկութիւնները:—

Նախօրօք տեղեկացան էի Հայաստանում կատար-  
ւած նոր ձեռքարկութիւնների մասին:

Դեկտեմբերի ընթացքին միայն Երևանում ձեռքա-  
կալել են բաւական թուով մարդիկ, իբրև դաշնակցա-  
կան կամ հակայեղափոխական: Դեկտ. 10-ից սկսել  
են ընդհանուր ձեռքարկութիւններ Լեռնահայաստա-  
նում: Ղափանի շրջանից ձեռքարկուել են 37 հոգի,  
Այլիկի՝ 17, Բաղաբերդի՝ 15 հոգի: Ձեռքարկութիւն-  
ները նոյն ձևով շարունակուել են նաև Լեռնահայաստա-  
նի միւս շրջաններում:



« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԴՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժնեգէնն է Ֆրանսայի,  
Յուճաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, Եւրոպա-  
կան այլ երկիրների և Սիւրիայի համար՝ 25 ֆրանսա-  
կան ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պաղեստինի,  
Միչիգանի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած  
բոլոր երկիրների համար՝ երկու դոլար:

Բաժանորդագրուել կարելի է Իւրաքանչիւր ամսի  
սկզբից:

ԲՈՎԱՆԴԵԿՈՒԹԻՒՆ

Փետրւար 18 (Թմբազարկան) . . . . .	33
Մտածումներ Հ. Յ. Գաղնակցութեան մասին (Ն. Հանգոյց) . . . . .	35
Բոլշևիկեան «դասակարգային պոլիտ» ի իմաստը (Կ. Սասունի) . . . . .	38
Խորիդային տնտեսական ֆաղափակներու (Աշոտ-Արծրունի) . . . . .	41
Ֆրանսայի ընկերվարութեան ներքին տագնապը (Հրանտ-Մամուէլ) . . . . .	46
Բիքլիսի Մուշեղ (Ղազար) . . . . .	53
Լօլաճէի ահաբեկումը (Բէնօ) . . . . .	58
Թիւրքիոյ շուրջ . . . . .	60
Թղթակցութիւններ . . . . .	63



« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանտ.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

M<sup>10</sup> S. AGOPIAN.  
5, rue des Gobelins, 5. Paris (13<sup>e</sup>)

